



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material











ՊԱՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐ

17219



4-9-3-0

ՊԵՏՅՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ





ՊԱՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐ

Կազմեց՝ Մ. ԳՈՒՐԳՆԱՐՅԱՆ

A 38167

ԼԺԿ Սոցդասգլխավարչության կից
«Մանկական գրականության
հանձնաժողովի» հավանությամբ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հրատ. № 1120

ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՄԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Իրանեպ. № 2752(բ) Տիրամ 3000 Պատվ. 1167

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՆ ՈՒ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԹԵ ԻՆՉՈՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ՀԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԵՅԻՆ ԳԱՌՆՈՒՄ

«Հեղափոխութիւնը մեծերի գործն է. թող կռւեն ու պայքարեն բանվորները, գյուղացիները. նրանց գործն է վորոշել, թե վոր իշխանութիւնն է լավ՝ ցարականը, թե՛ խորհրդայինը:

Իսկ մանուկների գործն այդ չի. նրանք պետք է խաղան, թուչկոտեն, ուրախանան:

«Մանկութիւնն անվերադառնալի չէ.

«Վորպես ծաղիկ, մանուկ, քաղցր էս
և շնորհագեղ՝ վորպես որ»...

«Վտարիդ տակին վարդեր բացվին,
չորս կողմդ փռվի մանիշակ»:

Այսպես են մտածում շատերը մանուկների մասին. այսպես են յերգել. շատերը «վոսկե մանկութիւնը»:

Նրանք չեն տեսել կամ չեն իմացել, վոր բանվորի ու գյուղացու յերեխան չգիտի՝ ինչ է անհոգ մանկութիւնը:

Միայն Հոկտեմբերյան հեղափոխութիւնն էր, վոր մանուկների համար սովորելու և ուրախանալու հնարավորութիւններ բերեց:

Իսկ ուր կապիտալիստներն են իշխում, ամեն ինչ էլի առաջվա պես է:

Կապիտալիստական կարգերի հետ է կապված թե մեծերի՝ պրոլետարների և թե նրանց յերեխաների շահագործումը:

Արժե մի հետադարձ հայացք գցել կապիտալի մատաղահաս գոհերի անցյալի վրա:

Ավստրիական թագուհիներինց մեկը՝ Մարիա Թերեզան հրամայեյ, եր ժանյակի գործարաններում աշխատեցնել 6-7 տ. յերեխաներին, վորոնց թիվը 17-ըդ դարի վերջերում հազարների յեր հասնում:

1818 թ. Պրուսիայում 5-6 տարեկանները մանագործարաններում որական 13 ժամ ելին՝ աշխատում, իսկ դիշերային հերթին՝ 11 ժամ: Իրենց աշխատանքի համար նրանք որական 10 կ. ելին ստանում:

Պրուսիայում ասեղի թղթի, ճենապակու գործարաններում աշխատում ելին մինչև անգամ 4 տարեկան յերեխաները:

Մեզնից 120-130 տարի առաջ Անգլիայում ծխնելույզները մաքրում ելին... «մանուկներով» այն, նույնիսկ մանուկներով:

Նրանց մեջքին թոկ ելին կապում և իջեցնում ոճորքի մեջ, վոր իրենց մարմնով մաքրեն այնտեղ դիզված մուրը. և խեղճ փոքրիկները դուրս ելին գալիս մրոտված ու այլանդակված, յերեսներն ու դեմքները վերքերով ծածկված:

Յերբ բանվորները բողոքում ելին այդ բարբարոսության դեմ, Անգլիայի լորդերն ասում ելին. «Անգլիան կհրդեհվի, յեթե մենք ձեռք քաշենք ծխնելույզները «յերեխաներով» մաքրելուց»:

Հարյուր տարի առաջ Ֆրանսիայում 5-6 տարեկան յերեխաներն որական 14-15 ժամ ելին աշխատում:

Բելգիայում 1886 թ. ածխահորերում և կաշեգործարաններում 9 տարեկան «բանվորներ» շատ կային, իսկ վանքերին կից գործարաններում (դպրոցների անվան տակ) 1896 թ. հիսուն հազարից ավելի վորքեր ու չքավոր ծնողների զավակներ կային, վորոնց մեջ պատահում ելին նույնիսկ 2 տարեկան յերեխաներ:

Այսպիսի դպրոց-գործարաններից մեկում $2\frac{1}{2}$ տ. ընթացքում մի աղջիկ ստացել եր ընդամենը 6 ու 30 կ. (որական $\frac{3}{4}$ կոպ.):

Մանուկների դրությունը Ռուսաստանում ել պակաս վատ չեր:

Ճորտատիրական կարգերի ժամանակ Ռուսաստանի գործարաններում աշխատողների թվում 6-12 տարեկան չերեխաներ կային:

Այտալի գործարաններում 7 տարեկան տղաներին «գինվոր եյին գրում» և այդպիսով հարկադրում եյին, վոր նրանք իրենց ամբողջ կյանքում գործարաններում աշխատեն:

1880 թ. Ռուսաստանի մանագործարաններում աշխատում եյին 12,197 չերեխա առավոտյան ժամը 6-ից մինչև յերեկ. ժ. 8-ը:

Մանուկների աշխատանքը մեծ չափերի հասավ իմպերիալիստական պատերազմի շրջանում, 1914—1917 թ.:

1916 թ. Ֆրանսիական դպրոցները դատարկվել եյին, վորովհետև դաշտերում ծնողների փոխարեն չերեխաներն եյին աշխատում:

Անգլիական գործարանները հետազոտողներից մեկը գրում եր. «Մանկահասակ աղջիկները լցրել են գործարանները և աշխատում են որական 8—12 ժամ»:

Պետերբուրգի (Լենինգրադի) գործարաններից մեկում 1915 թ. դեռահաս աղջիկները 45%⁰ եյին կազմում, ծխախոտի գործարանում 31%⁰ եյին կազմում տղաները, տրվարաններից մեկում՝ 20%⁰:

Անգլիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում այժմ ել կան տասնյակ հազարավոր չերեխաներ, վորոնք լրագիր, կաթ, հաց կամ խանութի ապրանք են ցրում:

Զինաստանում չերեխաների հոգին են հանում. 1925 թ. Մոսկվա—Զինաստան թոփչքին մասնակցողներից մեկը հարց ե տալիս չերեխաների աշխատանքների մասին, և չինացի պրոֆեսսորը լրջությամբ պատասխանում ե՝ մեզ մոտ 8 տարեկանից փոքր չերեխաներ չկան գործարաններում:

Ուրեմն 8 տարեկաններ՝ ինչքան ուզես:

Ռուսաստանի կապիտալիստները մեծ շափով ելին ոգտագործում չերեխաների աշխատանքը, վոր շատ ավելի եժան էր, քան մեծերինը:

Յե՛վ այդ չերեխաներին չնշին կոպեյններ ելին տալիս:

Այդ նպատակով գործարանատերերը փողով «գնում ելին տարիները»:

Ծնողները չերկու-չերեք ռուբլով կաշառում ելին տերտերին կամ պրիսավլին և վկայականներում չերեխաների տարիքն ավելացնում ելին 3-ով:

Ծանր կարիքն էր ստիպում այդ խեղճերին շատ վաղ ծախել իրենց աշխատանքը:

Իհարկե, նրանք ել կուզեյին խաղալ ու զվարճանալ, բայց թե՛ «քաղցած փորին ել ի՛նչ լերզ», կամ ի՛նչ ուսում:

Ահա թե ինչո՛ւ մինչև Հոկտեմբեր բանվորների լերեխաները զուրկ ելին խաղից ել, ուսումից ել, ողից ել, արևից ել:

Մոսկվայի նահանգում պատերազմի տարիներին անգրագետ պատանիների թիվը 45⁰/₀ էր, Սարկովի նահանգում ավելի վատ—պատանիների միայն 19⁰/₀-ն էր գրագետ:

Ել ի՛նչ բավականութուն կարող ելին ստանալ կյանքում ամեն ինչից զուրկ այդ խեղճ չերեխաներն ու պատանիները:

Ահա թե ինչո՛ւ պատանիները մխանում ելին հեղափոխական շարժումներին թե մեղնում՝ Ռուսաստանում և թե առհասարակ կապիտալիստական չերկրներում:

Ժողովրդական ցույցերին, ապստամբութուններին ու հեղափոխական շարժումներին պատանիների կողմից ցույց տրված մասնակցության նկատմամբ՝ պատմութունը շատ հերոսական եղբեր է բաց անում մեր առաջ: Մակայնե կազմակերպված շարժումն այն ժամանակվանից է սկզս-

վում, չերբ բանվորութունն ինքն սկսեց կազմակերպվել և հակադրել իր ուժը շահագործողներին ու թեքին:

Դեռ 1848 թ. Ավստրիայում հեղափոխության ժամանակ պատանեկան միութիւններն ելին կազմակերպվել, ուր մտել էին արհեստավոր «աշկերաններն» ու կրտսեր վարպետները: Սակայն բանվոր պատանեկության առաջին կազմակերպութիւններն սկսվեցին 1880—90 թվականներին Յեվրոպայում և Ռուսաստանում:

1878 թ. գործադուլների ժամանակ ձերբակալվեցին միբանի դեռահաս բանվորներ, վորոնց ընկերներն, իրենցից ել փոքր, ցույց կազմակերպեցին, պահանջելով ազատել ձերբակալվածներին:

Չափահաս բանվորները չէին մասնակցում այդ ցույցերին, այլ դիտում էին հեռվից:

— Տես, վոնց են մեր տղերքը գործի անցել, — խրատխուսում էին մեծերը, — վոչինչ, թող սովորեն:

Պետերբուրգում, Կոնիգի մանագործարանում 1878 թ. գործադուլը փոքրահասակ բանվորներն սկսեցին: Նրանք պալքարում էին և պահանջում, վոր իրենց ազատեն ուր ծանրաբեռնումից. յերբ նրանց սպառնացին արձակել, գործադուլին միացան ավելի փոքրահասակները:

Բայց միայն իրենց շահերի համար չէր, վոր կռվում էին պատանիները. շատ անգամ նրանք պաշտպան ու ոգնական են հանդիսացել իրենց ծնողներին ու չեղբայրներին: Հայտնի Մորոզովի գործարանում 1885 թ. պատանիների շնորհիվ գործադուլ հայտարարվեց, և նրանց ջանքերով ազատվեցին ձերբակալված բանվորները:

1905 թ. հեղափոխության շրջանում դեպի բուրժուազիան ու ցարիզմն ատելությամբ լցված պատանեկութիւնը հսկայական գործ եր կատարում՝ անլեզալ գրականութիւն տարածելով: Կուսակցութիւնը գնահատում եր նրանց աշխատանքը և նրանցով եր հետզհետե լրացնում կուսակցության բանակը, թե խմբակային և թե կազմա-

կերպական աշխատանքների համար: Շատ տեղերում (որինակ՝ Տուլայում) սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւնը բաղկացած էր մեծ մասամբ պատանի բանվորներէց: 1903 թ. Ոգեսսայի բանտում քաղաքական բանտարկյալների թվում 30 պատանիներ կային, Յեկատերինոսլավում՝ 28 և այլն:

1905 թ. հեղափոխութեան շրջանում պատանիների ցուլց տված մասնակցութիւնը գնահատել է Վ. Ի. Լենինը, ասելով՝ «նոր շարքեր կազմեցեք, ուղարկեցեք կովի, ընտրեցեք մեծ մասամբ պատանի բանվորներէց»: Յեվ իսկապես, 1905 թ. դեպքերին պատանիների հեղափոխական դերը շատ նկատելի յեր: Տեղ-տեղ նրանք բացարձակ կովի ելին բռնվել զորքի ու կազակների հետ, և ցարական դատարանի առաջ 14-15 տարեկան պատանիներ ելին կանգնում: Ինչքան ել մեծերն աշխատում էյին հեռու պահել փոքրերին այդ վտանգներից, զուր էր, չէր հաջողվում: Պատանիները վախ ասած բանը չգիտեցին. վոստիկանների կատաղութիւնն ու կազակների վայրենութիւնները նրանց չէին սարսափեցնում: Պատանիները լցված էլին անսահման յեռանդով, անձնվիրութեամբ, տոկոսութեամբ ու բուռն ատելութեամբ դեպի ժանդարմները, վոստիկաններն ու բուրժուաները:

1905 թ. հեղափոխութեան պարտութիւնից հետո վոչնչացան բոլոր զիջումներն ու ձեռք բերած արտոնութիւնները: Չկարողացան խլել, սակայն, պատանիների ըմբոստ վողին, կատաղի ծարավը դեպի պայքարը, խռովութիւնը: Յեվ այդ վողին արտահայտվեց հետագայում: 1907—1916 թվականների բանվորական շարժման պատմութիւնը հարուստ է բանվոր պատանեկութեան խիզախ յելութիւնների փորձերով ու ակտիվ մասնակցութեամբ բանվորական ցուլցերին: Վոստիկանական կամայականութեան այդ սև որերին պատանի սերունդն անվախ կանգնած էր պայքարող բանվորութեան առաջին շարքերում:

Արդուն արբու ցարիզմի դեմ ուղղված առաջին պայ-
քարում բանվոր պատանեկութունը ձեռք բերեց իր մար-
տական կնունքը և սև ռեակցիայի դաժան որերի միջով
անցավ, ամրապնդելով իր ըմբոստութայն վողին և հար-
թելով պրոլետարական հեղափոխութայն զժվարին ու փա-
ռավոր ուղին:

ՊԱՐԻՋՅԱՆ ԿՈՄՄՈՒՆԱ

ԲԱՐՐԻԿԱԴԻ ՎՐԱ

Վ. ՅՅՈՒԳՈ

Քարրիկազներում,

վոր աղաբներին արնով և ներկել ձեռքը հանցագործ,
կռվողներին նետ, վորպես կոմմունար,

մի տղա գերվեց տասներկու տարվան:

— Նյ, դու,—ասավ սպան,— նրանցից ես, ի՞նչ ե:

«Այո,—գոչեց նա,— մենք միասին ելինք»:

— Լավ,— կրկնեց սպան,— քեզ նրանց հետ միասին կպատ-
ժենք հիմա:

Պալթեց համազարկն, ու տղան տեսավ,

թե ինչպես ընկան իր ընկերները բարձր պատի տակ:

Ու խնդրեց սպայից.

«Թույլ տվեք գնամ,

այս ժամացույցը մորս տամ, դառնամ»:

— Իսկ ո՞վ կտրիպի, վոր դու յետ դառնաս:

— Ծլկե՛լ ես ուզումս:

— «Ո, վոչ, կապիտան»:

— Իսկ տունն ո՞ւր ե ձեր:

— «Շատրվանի մոտ: Յես կդառնամ իսկուհն, կապիտան»:

— Լավ, գնա, չարաճճի:

Տղան պուկ յեկավ:

«Խաբեց».— ասացին զինվորներն ու սպան

ու քրքջացին բոլորը միասին,

և մեռնողներին խռոցը խառնվեց
 նրանց չարախինդ կոպիտ ծիծաղին:
 Բայց լռեց ծիծաղն, չերբ տղան հանկարծ
 գունատ ու հպարտ նորից հայտնվեց,
 ինքն իրեն յեկավ կանգնեց պատի մոտ
 և ասաց նրանց.

— «Յես չեկա. հիմա կարող եք կրակել»:

Թարգմ. Պ. Խոսեղկարյան

ԿՈՄՄՈՒՆԱՅԻ ԶԱՎԱԿԸ

Ս. ՌՈՂՈՎ

Այս դեպքը պատահեց Իտալիայում պատերազմից
 մի քիչ առաջ: Այն փոքրիկ ժողովրդական գիշեատունը,
 ուր նստած ելինք մենք, մարդկանցով լիքն էր, ողբ խեղ-
 դող և աղմկայի: Մեր սեզանիլի մոտ յերիտասարդ բա-
 նաստեղծ դել-Գրեկոն բարձրաձայն շաղակրատում է:

Լիքը գիշեատան շեմքին նոր մարդ է հայտնվում: Աջ-
 տաբուստ նա թուրինցու կամ ֆրանսիացու յե նման: Մի
 յերկու բոպե նա կանգնում է շեմքում, դես-դեն է նա-
 չում և տեղ է փնտռում իր համար: Նա արդեն պատ-
 րաստվում է, վոր չես գնա, յերբ նրան նկատում է դել-
 Գրեկոն:

— Եստեղ, եստեղ: Կոմմունարի վորդի, մեզ մոտ
 արի,— աղաղակեց նա նրան: Մ'յ, Դյուլֆուր, բարեկամս:

— Սա Ենրիկո Դյուլֆուրն է. պարիզյան կոմմուն-
 արի վորդին, վոր Իտալիա չե փախել: Մենք կլսնդրենք
 նրան կրկնել այն պատմութուններից մեկը, վոր լսել է
 իր հորից:

Դյուլֆուրը պատմում է ցածր ձայնով.

— Դու գիտես,— սկսեց հայրս— վոր չես Կոմմունայի
 գործերին խառնվեցի դեռ շատ փոքր հասակում: Մն ժա-

մանակ չես տասներեք տարեկան ելի. բայց նրանցից ելի, վորոնք դպրոց դնալու փոխարեն պետք ե կովելին բարբիկադների վրա: Մենք տասնյակներով ելինք, հարլուրավորներ, բոլոր ամրոցներում, բոլոր դռների մոտ: Միայն դե-Ռոզե փողոցից, ուր իմ հայրն աշխատում եր կազմատանը, միքանի հոգի ելինք: Մեզնից ամենից մեծը տասնհինգ տարեկան եր, իսկ կանաչի վաճառող Մարթայի վորդին՝ Պոլը—տասներկու: Հետո Մալո դռների մոտ սպանվեց նա ոււմբից: Նրա նման շատերն սպանվեցին ու զնդակահարվեցին վերսալցիների ձեռքով: Պիլեր Շակենը, վոր մարտի 18-ին ժանդարմներին առաջին տեսնողն եր յեղել թնդանոթների մոտ, զնդակահարվեց Սոլֆերինի աշտարակի մոտ—մայիսին: Հենց են ժամանակ ել շատերն սպանվեցին: Ժակ Պերֆուան ընկավ Բելվիլում կոմմունայի վերջին որը: Յես ընկա Իսսի մարտկոցը իմ հորեղբայր ժանի հետ, վոր ազգային գվարդիայի վաշտապետերից եր: Նա, ինչպես և իր ընկեր Դյուվալը (8-րդ շրջանից), ձուլող եր: Մեզ հետ եր նաև Լուի անունով ինձնից միքիչ մեծ մի յերելսա, վոր մեր հարևան փողոցում կոշկակարի աշակերտ եր:

Իմ հորեղբոր վաշտին սիացավ նույնպես և մի կին: Նրա անունը ժաննա չեր: Նա դեռ բոլորովին յերիտասարդ եր: Նրա ամուսինը ներկարար եր, նրան ուղարկել ելին պատերազմ՝ պրուսսականների դեմ, ու աջնուհետև նրանից վոչ մի լուր չկար:

Այդ ժամանակամիջոցում ժաննան շատ հիվանդացել եր, յերելսան հինգ ամսական մեռել եր, և բոլորովին աղքատանալով նա ծառայութան եր մտել հարուստ պարոն Բիֆելելինց մոտ: Նրանց տանը նա բավական լավ եր ապրում: Պարոնները նրան չելին ուզում բաց թողնել, բայց այս անգամ նա կամակորուժուն արավ: «Վորտեղ իմ ժողովուրդը, ենտեղ ել յես» աղաղակեց նա և վազեց թնդանոթների մոտ: Այնտեղից, մեզ բոլորիս հետ ուղևորվեց Իսսի:

Մենք բաժանեցինք մեր դերերը: Ժաննան կհավաքի վիրավորներին և կերակուր կմատուցի, յես ու Լուին թնդանոթների մոտ կլինենք: Մենք կարող ենք մոտ զուրել ուռմբերը, ինչքան ել վոր դնդակներ սուլեն մեր գլխով: Սակայն մի շարթից ավելի մենք ստիպված ելինք անգործ մնալ. թնդանոթները լուռ մեյին: Են ժամանակ մենք սկսեցինք ոգնել ժաննային: Կերակուրն անկանոն ելին բերում և քիչ եր: Բայց շուտով ամեն ինչ փոխվեց: Յերկրորդ կիրակին, յերկրորդ կիրակի որն եր, վոր յես Խսիուսն եյի:

Մենք նստած եյինք դռներից հարյուր քայլի վրա այն կաղամախիների տակ, վորոնք տարածվում են մինչև ձորը: Մոտ տասը խաղաղ խմբեր ձգվել եյին մեզ մոտ կանաչ խոտի վրա. միքանիսը նստած ելին նստարանների և լուռ մեյին քաղաքացիների պատմածը կոմպունա հայտարարելու մասին: Հանկարծ սուլոցով ու շշոցով մի բան կտրեց-անցավ գարնանային մտքուր ողբ և ուժեղ թրխոցով կպավ դռների ձախ կողմը յեղող պատին:

Այդ անակնկալից դեռ չեյինք կարողացել ուշքի գալ, վոր ելի միքանի ուռմբ դիպավ համարյա նույն տեղը: Այնտեղ պետք եր լինել, տեսնելու համար, թե ինչ էր կատարվում: Սկզբում մարդիկ կարծես քարացան զարմանքից և հանկարծակիի լեկան. իսկ հետո հարյուրավոր կոկորդիներից այս աղաղակը դուրս թռավ. «Վերսալն ե, Վերսալը—ումբակոծում ե Պարիզը»:

Ամեն տեսակ խոսակցությունն մոռացվեց: Մարդիկ թնդանոթների ու հրացանների մոտ վազեցին. շուտով պատերն ու տրանշեյները (խրամատները) սևացան, բայց վոչվոք չեր ընկել: Միայն թնդանոթների համազարկերը շարունակ ավելի ու ավելի բարձրագոչ ելին հընչում և ուռմբերը խիտառխիտ ընկած ելին խրամատներում—ամրոցի անցքերում և թնդանոթների մոտ: Շատերն ընկնում ելին պուրակը: Հիմա թե յես, թե Լուին, թե

ժաննան բավական աշխատանք ունեւիինք: Մենք մոտ ենք զլորում ումբերը, մի տեղից մի տեղ ենք տանում հրամանները, իսկ ժաննան հավաքում ե վիրավորներին: Արդեն առաջին որը 19 վիրավոր ելին հաշվում: Միքանի սպանվածներ կան: Իսսին շուտով կատարչալ դժոխք ե դառնում, և որ-որի վրա դրությունը վատթարանում ե: Յերեքշաբթի որը մեզ մոտ նոր թնդանոթներ բերեցին և հորեղբայր ժանը այժմ յերեք թնդանոթ ունի:

Ենքան շատ աշխատանք կա, վոր մենք համարյա չենք տեսնում ժաննային: Նա մի տեղից մյուսն ե անցնում, և մենք յերբեմն տեսնում ենք թե ինչպես ենշմարվում նրա կարմիր գլխակապ-թաշկինակը. իսկ հին տեղը գիշերելու նա ավելի քիչ ե գալիս: Նա շարունակ կամ դաշտումն ե կամ բանտում:

Շաբաթ որը—յես շատ լավ եմ հիշում այդ որը. ժան հորեղբոր թնդանոթներից մեկը փչացրին և յերեք թնդանոթաձիգ սպանեցին—յեկավ իմ մեծ չեղբայր Պիերը: Նա պատմեց, վոր իմ հորը վերսացիք գնդակահարել են: Նա Դյուվալեյի զորամասումն ե չեղել և Շանտիլիոնում դերի չե ընկել նրանց մոտ: Ճանապարհին նրան, ինչպես և շատ ուրիշներին, ցեխոտել են, ձեծել, իսկ հաջորդ որը չերեկոյան սպանել են: Վերջին բանը, վոր չես հիշում եմ այդ ժամանակից, դա այն ե, վոր չես ամբողջ իրիկունը և ամբողջ գիշերը լաց եյի լինում, թեև ժաննան ու Լուին մխլթաբուս ելին ինձ: Վերսացիները ձեռքն ընկնելու ահն սկսեց հետևել ինձ: Այդ մասին մտածելիս անգամ սոսկումը պատում եր ինձ: Գնդակից կամ նույն իսկ ումբից մեռնելը, դրա հետ համեմատած, ինձ չերջանկութուն եր թվում: Սա միակ բանն եր, վորից վախենում եյի չես, և միքանի ժամ ինձ թվում եր, թե ինչ ել լինի, վերսացիք կբռնեն ինձ: Հենց դրա մասին ել չես ուզում եյի պատմել:

Մինչև ուղիղ կեսգիշեր թնդանոթներն անդադար

վորոտում ելին, հետո լռեցին մինչև առավոտ: Այդ խա-
բուսիկ լռութչունն առավոտյան մեզ սոսկալի բոթ բերեց:
Մենք մեր չորս կողմը, մեզնից բոլորովին մոտ տեսանք
վերսալցիների կարմիր շավարները—պուրակում, խրա-
մատներում, ուր դեռ յերեկ մեր գվարդիականներն
եղին: Շատերն շտապեցին այս անսպասելի լուրը պարե-
տին տանելու, վոմանք ել աղաղակում ելին, թե մենք
պաշարված ենք, և վոր այժմ պետք է մեռնել, բայց կեն-
դանի անձնատուր չլինել վերսալցիներին:

Ինձ նորից սարսափ պատեց թշնամիների ծաղրու-
ծանակի հանդեպ: Յես հաստատ վորոշեցի մեռնել, բայց
անձնատուր չլինել: Յես չգիտեյի, թե եղ ինչպես անեմ.—
յես վոչ մի զենք չունեյի, վոր կյանքիս վերջ տայի այն
դեպքում, յեթե ինձ կովում չսպանեյին: Հանկարծ դռնե-
րի մուտքի տակ ուռմբերով ու հրանոթի գնդակներով
լիքը մի սալակ նկատեցի: Մի նուլնքան առուլզ, վոր-
քան և սոսկալի միտք ծագեց ուղեղումս: Այդ միտքը մի ան-
սանձ արտահայտութուն եր այն վրեժխնդրության
զգացումի, վոր կար իմ մեջ հորս սպանության համար,
կոտորված ընկերներիս համար, լուրի համար, վորի յեր-
կու վոտն ել յերեկ թնդանոթի գնդակը տարավ, վրիժա-
ռության այն զգացմունքի, վոր կուլի վորոտից խլացել եր:

Իմ կյանքն ել ինձ չեր պատկանում: Յես վրեժ կու-
ծեմ: Թող վերսալցիք մտնեն ետեղ, մտածում ելի յես,
նրանք ողբ կցնդեն ինձ հետ և այս ամբոխի հետ: Յես
կլուծեմ բոլորի վրեժը:

Վոչվոր չեր կարող խանգարել ինձ իմ մտածած
գործն անելու: Յես այս հին թագստոցի միակ տերն ելի-
այստեղ չի գալ վոչ լուին, վոր կենդանի չե, վոչ ժան-
նան, վոր զբաղված է իր վերավորներով: Դռների տակից
յես կամացուկ դուրս յեկա—կրակ փնտռելու: Յես նկա-
տեցի, թե ինչպես ճանապարհով դեպի Իսսի գլուղն են
նահանջում ընկերները, և նրանց մեջ ճանաչեցի պարե-

տին և ուսուցիչ ժենանին, վորն արեւելսն կողմի աշտարակն եր պաշտպանում: Ժան հորեղբայրն ու ելի մի հարյուր մարդ մնացին: Նրանք չուղեցին գնալ, մեռնելը նրանց համար վորոշված բան եր: Նրանցից վումանք փչացնում, կողպում ելին վերջին թնդանութները. ուրիշները տեղավորվում ելին զասագան կոտորած բաների յետև, և զարսում ելին իրենց կողքին այնքան փամփուշտ, ինչքան վոր միայն կարողացել ելին գտնել:

Իմ փնտռումները շարունակվեցին կես ժամ: Ամեն մի շրջունից, պատահական քայլերի ամեն մի ձայնից սիրտս պատռում եր և մեքենաբար ձեռքս դեպի լարն եր մեկնվում: Յես աշխատում եյի հանգստանալ, բայց չեյի կարողանում, չեր հաջողվում: Յես գիտեյի, վոր վերսալցիք առանց կովի չեն մտնի ետեղ, և յերկուղ եյի կրում ամեն մի պատահականութունից: Այդ մասին մտածելիս անգամ սիրտս ճաքում եր: Ժամանակի և տեղի մասին ամեն մի հասկացողութուն կորցրի յես, ամբողջովին լսողության դարձա և տեսնում եյի միայն սայլակն ու ուսմբերը:

Հանգիստ ե: Դեռ ելի տանջող հանգիստ: Զգիտեմ, թե ինչքան ժամանակ այդպես պառկեցի, վոր մեկ ել հանկարծ իրար յետևից յերեք համազարկ տվին: Հեռու, մոտիկ, ելի հեռու: Կրակոցները բավական յերկար շարունակվեցին—կամ հեռանում եր, կամ մոտենում: Հանկարծ նորից հանգստացայ, լռեց: Արիութունս յետ յեկավ ինձ. յես այժմ գիտեյի, թե ինչ պետք ե անեմ: Յես սպասում ելի, վոր հիմա ուր վոր ե կհայտնվեն վերսալցիները: Անցնում ե տասը րոպե, կես ժամ—գուշ մի ձայն չկա: Կրկին ամեն ինչ մեռած ե: Յես լսում ելի, թե սիրտըս ինչպես արագ-արագ ե խփում կրծքիս մեջ:

Դռների տակն սկսեց մթնել. այդ մութն ինձ ավելի վախեցրեց: Հանկարծ բոլորովին մոտ վոտնաձայն լսվեց: Ավելի մոտ: Ավելի մոտ: Յես մոտ եմ սողում սայլակին

և լուցկին պատրաստ եմ պահում: Միքանի մարդ մտնում են կամարի տակ: Յես սպասում եմ միայն, վոր նրանք ավելի շատ հավաքվեն, վոր հանկարծ լսում եմ ժան հորեղբոր ձայնը, վորը հրամաններ ե տալիս:

Ել վոչինչ չեմ հիշում: Յես ուշքի յեկա միայն մեր տանը—դե-Ռոզե փողոցում: Մայրս ել չթողեց, վոր իրենից հեռանամ, մինչև վոր ժան հորեղբոր հետ Ֆրանսիա փախանք: Դեռ մինչև հիմա չեմ ինձ հալածում ե այն միտքը, վոր յես կարող ելի այնքան ընկերներ ի կործանման պատճառ դառնալ:

Թարգմ. Սիմակ

ՓՈՔՐԻԿ ԳԱՎՐՈՇԸ

Վ. ՉՅՈՒԳՈ

I

Պարիզը գավակներ ունի, անտառը թռչնիկ ունի: Թռչնիկը կոչվում ե ճնճղուկ, գավակը՝ գամեն*):

Գամենը յոթից տասներեք տարեկան ե: Նա սպրում ե խմբերով, չափչփում ե փողոցները, քնում ե բացթիշա, հագնում ե հոր հին անդրավարտիքը, վոր ծնկներից ցած ե իջնում, գլխին մի հին գլխարկ կա, վոր գլուխն ե պրծացրած մինչև ականջները, և մի միակ, դեղին յեղբերով կապիչ: Նա վազվզում ե, փնտռում ե, դարան ե մտնում, ժամանակ ե կորցնում, ծխամորճ ե քաշում, սոսկալի հայհոյանքներ ե տալիս, թափառում ե գինետներում, բարեկամութուն ե անում գողերի հետ, բայց սիրտը մաքուր ե, վոչ մի վատ բան չունի:

Նա հազվադեպ ե դարմանում, իսկի չի չեկախենում, յերգեր ե հորինում, վորոնցով ծաղրում ե սնահավատու-

*) Գամեն—փողոցային տղաներ:

թլունը, լեզու յե հանում տեսիլների դեմ, պատուում ե ամբարտավանության ու չարիքի դեմքը:

Յեթե տերը դուրս գար նրա դեմ, հավանականաբար կաղաղակեր՝ «սյ քեզ զգվելի խրտվիլանկ»:

Եսոր նա խաղում ե առունհրում (Չրանցքներում), վաղն ապստամբութլունն սկսվում ե, և նա միանգամից աճում ե:

Նա—հերոս ե: Նա աղաղակում ե՝ «հառաջ» և մի վայրկյանում չերեխան հսկա յե դառնում:

Յեթե արդ հսկայական քաղաքին հարցնեչին, թե ո՛վ ե սա, նա կպատասխաներ՝ «սա իմ զավակն ե»:

Փոքրիկ Գավրոշը միանգամայն համապատասխանում եր մեր վերը նկարագրած գամենին: Նրա հագին տղամարդու շալվար կար, բաց հորը չեր, մի կանացի վերնաշապիկ, վոր իր մորը չեր: Ոտար մարդիկ խղճալով նրան ցնցոտիներ ելին հագցրել: Աչնինչ նա և հայր ուներ, և մայր: Բայց հայրն ամենևին չեր մտածում նրա մասին, իսկ մայրը չեր սիրում նրան:

Եզ յերեխան իրեն ամենից ավելի լավ եր զգում փողոցում: Քարած փողոցը նրա համար ավելի կոշտ չեր, քան իր մոր սիրտը:

Ծնողները նրան քացի եյին տվել, փողոց գցել:

Ու նա դուրս եր թռել:

Սակայն և այնպես նա յերբեմն, յերկու-յերեք ամիսը մի անգամ ասում եր ինքն իրեն. «Հլա մի գնամ իմ մոր մոտ»: Աչն ժամանակ նա բուլվարը թողնում եր և ուղեվորվում եր Պարիզի հեռավոր փողոցներից մեկը:

Յերբ ներս եր մտնում, նրան հարցնում եյին.

— Վճրտեղից ես գալիս:

— Փողոցից, — պատասխանում եր նա:

Յերբ նա գնում եր, նրան նորից հարցնում ելին.

— Ո՛ւր ես գնում:

Յեվ նա նորից պատասխանում եր.

— Փողոց:

Այսպիսի այցելութիւններէց մեկի ժամանակ նրան հանդիպեց այն պառավը, վոր նայում եր նրանց հյուղին:

— Բարև, Բլուրգոնշա: Հը, պառավ, վո՞նց ես: Յեկելեմ մերոնց տեսնեմ,—ասաց Գավրոշը:

— Վոչվոք չկա, թոկից փախած,—պատասխանեց պառավը:

— Վա՛, բա ո՞ւր ե հայրս:

— «Լա-Ֆորս» բանտում:

— Ե-հե՛: Իսկ մայրս:

— Մյուս բանտում:

— Ե՛, իսկ քույրրիկներս:

— Մանկատանը:

Տղան ականջի լետեր քորեց, նայեց տիկին Բլուրգոնին և ատամների արանքից արտասանեց.

— Հա՛. ա՛...

Հետո կրնկի վրա շուռ յեկավ, և մի բոպե հետո շեմքին կանգնած պառավը լսեց, թե ինչպես նա հեռանալով, իր պատանեկական զիլ ձայնով մի ուրախ լերգ եր յերգում:

II

Զինված ամբոխի հարձակումը Շանվրերի փողոցի քոլոր կեցողների վրա խուճապի սարսափ տարածեց: Շատ քիչ անցորդներ կարողացան թագնովել: Ամեն տեղ, սկսած շենքերի ներքնահարկերից մինչև վերին հարկերը, բոպեապես փակվեցին խանութների, բնակարանների, նկուղների դռները, փակվեցին տների սայլադռները. լետ դրեցին պատուհաններն ու փեղկերը: Մի վախեցած պառավ նուշիսկ իր պատուհանը ծածկեց ներքնակով, վորպեսզի հրացանների տրաքոցի ձայնը խլացնի: Միայն գինետունը մնաց բաց, և այդ ել այն պատճառով, վոր խռովարարների ամբողջ խումբը ներս խուժեց այնտեղ:

Միքանի ըոպելուս զինետան ներքին հարկի պատուհանների ցանկի բոլոր յերկաթե ձողերը կոտրատվեցին, իսկ փողոցի քարը քանդեցին միքանի տասնյակ ըայլ յերկարությամբ:

Գավրոշն այստեղ եր:

Նա հիացած ու հրճվանքով իր վրա վերցրեց աշխատողներին վոզևորելու խնդիրը:

Նա լետ ու առաջ եր վազվղում, բարձրանում եր վեր, իջնում եր ցած, աղմկում եր, աղաղակում:

Կարծես թե առանց նրան գործն առաջ չէր կարող գնայ: Ի՞նչն եր նրան-իրեն առաջ մղում: Կարիքը: Ի՞նչն եր թե տալիս նրան: Ուրախությունը, Գավրոշը փոթորկի մարմնացում եր: Նա ամեն տեղ եր, և նրա ձայնը հընչում եր ամեն կողմից: Նա վոշ մի վայրկյան հանգստություն չեր տալիս վոշ իրեն վոշ ուրիշներին: Կարծես ինքը բարբիկադն (պատնեշ) ել եր վոզևորվում նրանով: Նա ծուլներին առաջ եր մղում, հոգնածներին կենդանություն տալիս, մտատանջության հակվածներին գոգոում: Սրանց ուրախացնում եր, նրանց զայրացնում, բոլորին հուզում-զրգում եր: Սրան հրում եր, նրան ծաղրում: մի վայրկյան կանգ եր առնում, հետո հանկարծ թռչում, պտտվում եր այդ աղմկող մըջնանոցի վրա, սրանից նրան եր ցատկում ու աներես, զահլա տանող ճանճի պես բզզում, գոռգոռում, անհանգստացնում եր այդ հսկայական սալին բոլոր լծվածներին:

Բարբիկադը սարքելու ամբողջ աշխատանքը, առանց վորևե արգելքի, վերջացավ ընդամենը մի ժամում, խոտվարարների խմբակին չանհանգստացրեց վոշ մի զգզգված գլխարկ կամ սվին: Այն քիչ բուրժուաները, վորոնք համարձակվում ելին թեկուզ անցնել խոտվարարների բռնած Սեն-Դենի փողոցով, հենց վոր հայացքները հանդիպում եր Շանվրերի փողոցի բարբիկադին, իսկույն արագացնում ելին իրենց քայլերը:

Շանվրերի փողոցում խռովարարները հրացաններն ու կարաբինները լցվեցին միանգամից, բայց առանց շտապելու: Հետո, յերբ բարրիկադները բարձրացած ելին, հրացանները լցրած, պահակները կանգնեցրած, ապա այդ փողոցներում ամբացած խռովարարները մենակ, զինված, հանգիստ, վճռականութեամբ լի, սպասում ելին նրան, ինչ վոր անխուսափելի յեր: Իսկ այդ փողոցներով արդեն վոչ մի կողմնակի մարդ չեր անցնում, տները լուռ ելին, կարծես մեռած. վոչ մի ծպտուն չեր լսվում, վորից չերևար, թե այնտեղ կենդանի մարդիկ կան. ու ամեն ինչ պարուրված էր խտացողի աղջամուղջով: Լուռ եր ու քարացած ու զգացվում եր ինչ-վոր սոսկալի, վողբերգական բանի մոտենալը:

Վրա հասավ գիշերը, բայց վոչվոք չեկավ դեպի բարրիկադը: Միայն ինչ-վոր խուլ դղրդյուն եր լսվում և յերբեմն ականջներին եր հասնում հրացանաձգութեան ճարճատյուն, վոր սակավ եր, բավական թույլ ու հեռու: Այս յերկարատև հանգիստը ցուց եր տալիս, վոր կառավարութիւնը հավաքում ե իր ուժերը: Շանվրերի փողոցում հիսուն խռովարարներն սպասում ելին վաթսուն հազար թշնամիներին:

Գավրոշին կանչեցին:

— Դու փոքրիկ ես, ու քեզ չեն տեսնիլ: Դուրս արի բարրիկադի յետևից, թափառի տների մոտ, փողոցներում գլխիցդ դուրս տուր, հետո վերադարձիւր և պատմիւր այն բոլորը, ինչ վոր կտեսնես ու կլսես:

Գավրոշն ինքն իրեն ձգվեց:

— Հը՛, —ասացնա, — կնշանակի փոքրերն ել են վորևէ բանի պետք գալիս: Դա շատ լավ բան ե... Լսվ, կգնամ:

III

Սեն-Մեր-ի զանգակատանն արդեն ժամը տասը լսվեց: Դեռ վոչվոք չեր յերևում: Անժուրասը և մյուսները

կարաբինները ձեռքներին գտնվում ելին մեծ բարրիկա-
զից դուրս սողալու. տեղին մոտ՝ Նրանք նստած ելին,
լուռ, ուշադիր ականջ ելին դնում հեռվից լսվող խուլ
վոտնաձայներին:

Հանկարծ այդ մռայլ լուռթյան մեջ հնչեց մի թարմ,
զվարթ, ուրախ պատանի ձայն, վոր կարծես Սեն-Գենի
փողոցիցն էր գալիս, և հին, ժողովրդական լերզի լեղա-
նակով, ինչ-վոր յերգ էր յերգում:

Ես Գավրոշն ե—շշնջաց նրանցից մեկը:

— Մեզ նախագուշացնում ե,— ավելացրեց մյուսը:

Մեկի արագ քայլվածքը խանգարեց ամալի փողոցի
լուռթյունը. Ապա հայտնվեց մի փոքրիկ կերպարանք,
վոր ամենաճարպիկ ծաղրածուի արագությամբ անցավ
շուռ տված ձիասալլի վրայով: Դա իրոք վոր Գավրոշն էր:
Յերբ արդեն բարրիկազի ներսի կողմն էր, նա ամբողջո-
վին շնչակտուր աղաղակեց.

— Հրացան տվեք ինձ, գալիս են:

Հրացանների համազարկերից հետո թափվում ելին
հրանոթների գնդակները: Բարրիկազը չէր պատասխա-
նում:

Բայց ահա թնդանոթը միջիչ բարձրացրին և աչն-
պես նշան բռնեցին, վոր ուռվբը հարվածեր բարրիկազի
արտաքին կողի ծայրին—քանդեր և խոզվարաներին
հրանոթի լցվածքի ու քարերի անձրևի տակ զցեր:

— Ինչ ել վոր լինի, պետք է փոքրացնել այս թըն-
դանոթների հասցրած վնասը—ասաց Անժուրասը և աղա-
ղակեց.

— Կրակեցեք թնդանոթաձիգներին, Բարրիկազը, վոր
մինչ այժմ այդպես չերկար լռել էր, դժոխքի կրակ բաց
աղավ. իրար չետևից վեց թե չոթ համազարկ տվին. ամ-
բողջ փողոցը լցվեց թանձր ծխով, և միքանի ըոպելից
հետո, ամալի նման կախված ծխի միջով, վոր կտրում անց
նում ելին կրակե կալծակները—կարելի չէր նշմարել,

վոր թնդանոթաձիգները յերկու յերրորդն ընկած են թնդանոթների անիվների տակ: Այնինչ մյուսները շարունակում եյին թնդանոթների շուրջը պատվել սառը հանգստությամբ, միայն պայթյունները շատ դանդաղ եյին հաջորդում իրար:

— Այ սա լավ ե,—ասաց մեկը . Անժուրասին դառնալով,—սա հաջողությունն է:

Անժուրասը գլուխը շարժեց և ասաց.

— Մի քառորդ ժամ ել եսպիսի հաջողություն, և ամբողջ բարրիկադի վրա տասը փայփուշտից ավելի չի մնալ:

Գավրոշը լսեց այս բառերը:

Հանկարծ Անժուրասը տեսավ մեկին բարրիկադի մոտ դրսի կողմում, փողոցում, կրակի տակ:

Գավրոշը գինետան շշերի զամբուղներինց մեկը վերցրել, բարրիկադի արանքով անց եր կացել և սկսել եր հանգիստ կերպով զամբուղը լցնել հենց բարրիկադի մոտ ընկած ազգային գվարդիայի սպանված զինվորների փամփուշտներով:

— Եդ ի՞նչ բանի լես, — հարցրեց Անժուրասը:

Գավրոշը գլուխը բարձրացրեց:

— Զամբուղը լցնում եմ:

— Բա դու չես տեսնում ոտվրի ցրվածքը:

Գավրոշը սրան պատասխանեց.

— Հա, անձրևի նման ե գալիս:

Ապա Անժուրասն աղաղակեց.

— Յետ դարձիր:

— Ես բոպեյիս, — պատասխանեց Գավրոշը:

Մի ցատկով թռավ փողոցի մեջտեղը:

Վաշտը նահանջելով, իր լետից մի շարք դիակներ թողեց:

Ամբողջ փողոցում գետնին զանազան տեղեր մոտ քսան դիակ կար ընկած: Գավրոշն իր առջև քսան փամ-

փրշտակալ եր տեսնում, վոր բարրիկադի համար փամփուշտի մեծ պաշար եր խոստանում:

Մուխն ամպի նման բռնել եր փողոցը, և այդ մթութլունը, վոր ամենայն հավանականութլամբ ցանկալի յեր և գուցե նախատեսված բարրիկադի վրա հարձակվող գորամասի հրամանատարներից, մեծապես աջակցում եր Գավրոշին:

Այդ պատվարի ծալքերում թագնվելով, նա շնորհիվ իր կարճ հասակի, կարողացավ փողոցում բավական հառաջ գնալ ու առանց նկատվելու, չենթարկվելով առանձին վտանգի, դատարկեց առաջին յոթ թե ութ փամփուշտակալները:

Բարրիկադից բավական հեռացել եր, և վորպեսզի նրա վրա ուշադրութլուն չդարձնեն, չէլին համարձակվում ձայն տալ, վոր վերադառնա:

Առաջ գնալով, նա վերջապես հասավ այնտեղ, ուր մշուշը շատ ավելի թափանցիկ եր, այնքան թափանցիկ, վոր կանոնավոր հեղևակ հրացանաձիգները գիծը, վոր մանր, գետի քարերից շինած պատնեշի յետեն եր տեղ բռնել, և քաղաքի ազգային գվարդիայի հրացանաձիգները, վոր փողոցի անկյունն ելին բռնել, հանկարծ սկսեցին միմյանց ցույց տալ ծիւի մեջ առաջ շարժվող ինչ-վոր առարկա:

Այն ըոպելին, չերբ Գավրոշը թմբի մոտ ընկած ավագ յենթասպալի փամփուշտներն եր դատարկում, դիակլին մի գնդակ դիպավ:

— Հը՛մ...— մտմտաց Գավրոշը, նրանք սկսել են մեռածներին գնդակահարել:

Յերկրորդ գնդակը դիպավ ուղիղ նրա կողքի քարին, յերրորդը շուռ տվեց նրա գամբյուղը:

Գավրոշն աչքերը բարձրացրեց և տեսավ, վոր իրեն կրակում են ազգային գվարդիականները:

Նա ամբողջ հասակով ուղղվեց, կանգնեց. քամին ծածանում եր նրա մագերը. ձեռքերը հենեց կողքերին,

աչքերը հառեց դեպի ինքը կրակող ազգային գվարդիայի զինվորները և մարտահրավերի մի լերգ յերգեց:

Հետո նա վերցրեց զամբյուղը ու գետնին թափած փամփուռները բոլորը, մեկ-մեկ դարսեց մեջը. ապա ավելի մոտենալով հրացանաձիգներին՝ սկսեց դատարկել մի ուրիշ փամփուռակալ: Այստեղ նրա մոտով սուլեց, անցավ արդեն չորրորդ գնդակը: Գավրոշը շարունակում էր լերգել:

Հինգերորդ գնդակը կարծես ել ավելի զրգուեց նրան:

Այսպես շարունակվեց մի առժամանակ:

Տեսարանը և սոսկալի լեր, և հափշտակող: Գավրոշը, վորին կրակում էին, ծաղրում էր հրացանաձիգներին: Կարծես թե այդ բանը նրան նույնիսկ հաճույք էր պատճառում: Սա մի ճնճղուկ էր, վոր ուզում էր կացահարել վորսորդին: Ամեն մի գնդակին նա պատասխանում էր մի տուն լերգով: Կրակում էին անդադար և շարունակ վրիպում: Ամեն մի գնդակի նա պատասխանում էր մի տուն վոտանավորով: Ազգային գվարդիայի և կանոնավոր հետևակի զինվորները նշան բռնելով նրան՝ ծիծաղում էլին: Նա պառկում էր, հետո վեր կենում, թաղնվում էր դառն անկյունում, հետո դուրս էր թռչում, անհետանում էր, հետս նորից հայտնվում, գնում էր ու վերադառնում, զայրանում էր թնդանոթի ռումբի կտորների վրա և միաժամանակ հավաքում էր փամփուռները, դատարկում էր փամփուռշտակները ու լցնում էր զամբյուղը: Սուրբարարները, հուզմունքից խեղդվելով, աչքերով հետևում էլին նրան: Բարբիկաղը դողում էր յերկյուղից, իսկ նա լերգում էր:

Վերջապես, ինչպես չեղավ չգիտեմ, մի գնդակ հասավ այդ անվորսելի լերեխային: Գավրոշը տատանվեց, հետո յերեսի վրա ընկավ փողոցի քարերի վրա և ել չըշարժվեց: Նրա անվեհեր շունչը դուրս թռավ կրծքից:

Թարգմ. Սիմակ

ԿԱՐՄԻՐ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ

ԱՐԱՋԻ

Պատմում են, վոր են մեծ կովի գիշերը, յերբ վողջ քաղաքը ասես յեռում եր ու գորշ ալիքներով հոսում դեպի դիրքերը՝ այն տենդոտ փողոցներով մեծերի հետ քալում եր նորաբողբոջ մի գուլգ...

* *

Աղջիկն ու տղան դնում էին ձեռք ձեռքի տված և նոր զարթած թռչունների նման խոսում, ծլվլում էին:

Նրանք թողել էին տանը իրենց մայրերի խրատները՝ չմասնակցել մեծերի կովին, և թիթեռների նման ձգտում էին դեպի կրակը, դեպի վտանգը...

Նրանք անցնում էին են մեծ թաղերով, մրոտ դեմքերի ու ջլուտ բազուկների են թաղերով:

Ուր հսկա ծխնելույզները, նոթերը կիտած՝ խորհրդավոր լռությամբ դիտում էին ամեն ինչ...

Ուր խոնավ, մութ նկուղներում վաղուց կուտակվել եր հսկայական մի բողոք, վոր հրդեհի նման բռնկել եր վողջ քաղաքը:

Ամբոխի հետ նրանք հասան լայնատարած մի հրապարակ, ուր խմբվել էին հազար-հազարներ և անհանդիսա ծփում, սպասում էին...

Վերջապես մի ձայն յեկավ վերջից:

Ո՛վ եր խոսողը—մթնում չեր յերևում. միայն նրա կողմը նշմարվում եր փոքրիկ լապտերի առկայծող լույսը...

Աղջիկն ու տղան նայում էին, ականջները լարում... Նրանց թվում եր, թե խոսողն են կայծն ե, թե շուտով կիջնեն լերկրի վրա բազմաթիվ կայծեր, կիջնի լուսեղեն յերջանկութունը...

— Լսո՞ւմ եք են անեղ ձայնը. դարերով ճնշված ձայնն է, վոր զարթել է հիմա...

Նա կանչում է իր հերոսներին, կանչում է քանդելու և ստեղծելու...

Վողջ լերկերը վառվում է նոր կրակով...

Ով ապրում է, զգում նոր կյանքի շունչը, նա պիտի գա դեպի կռիվ, դեպի հաղթութուն...

Հանկարծ ամբոխն իրար անցավ:

— Գալիս են, գալիս...—անցավ բերանից բերան...

Յեվ բոլորը շարժվեցին առաջ...

*
**

Գետնի վրա գալարվում էյին վիրավորները...

Կարմիր շորերով մի աղջիկ էր ընկած վիրավոր ու նրա մոտ մի տղա, վոր կարծես իր շնչով ուզում էր կենդանացնել նրան...

— Յես շուտով կմեռնեմ... ասում էր աղջիկը, — բայց յես կուզե՞լի դեռ լերկար ապրել են կավոդների հետ... Յերբ յես կմեռնեմ, տար ինձ... կանգնեցրու կավոդներին առաջին շարքում... և թող արևի շողքերը դեռ ելի փայլեն ինձ վրա...

*
**

Առավոտ էր...

Են մեծ փողոցում, հզոր բարբիկադի վրայից նայու՞մ էր արևին կարմիր շորերով մի աղջիկ:

Կատաղի կռիվ էր...

Քանի-քանի անգամ թշնամին հարձակվեց այդ դիրքի վրա, բայց աղջիկը կար ու կար իր տեղում...

Նրա շուրջն ընկնում էին հերոսները, նորերը գալիս՝ նրանց տեղերը բռնում, բայց աղջիկը մնում էր անսասան իր դիրքում...

— Ո՞վ է են անհաղթ աղջիկը... հրա՞ջք ե... Չե, նա էս յերկրից չե:

Ասում եր թշնամին ու լետ նահանջում:
«Կարմիր աղջկա» բարրիկադից...

*
*

Պատմում են, վոր մութ գիշերները, չերբ լույսերը
մարում են, կարմիր հերոսուհին իջնում ե, պատում փո-
ղոցները:

Նա յերկաթե մուրճով բաղխում ե դռները ու դուրս
ե կանչում իր հերոսներին...

Կանչում ե նորից դեպի մեծ կռիվը, դեպի վերջին
հաղթութուն...

ՎԵՐՋԻՆ ԲԱՐՐԻԿԱԴԸ

ԱՐԱՋԻ

Մայիսին եր, Կոմսոնայի վերջին որը...

Հերոսական կռվից հետո ընկնում ե Պեր-լա-Շեզ գե-
րեզմանատան դիրքը, և Կոմսոնայի վերջին բեկորները
դիմում են դեպի Ֆոնտեն-ո-Ռուա փողոցի բարրիկադը:

Այնտեղ են հավաքվել Կոմսոնայի վերջին աստղերը՝
զարդարված կարմիր ժապավեններով, և պատրաստվում
են որհասական կռվի...

Հսկայական կարմիր դրոշը ծածանվում ե բարրիկա-
դի վրա...

Որհասի մեջ ե և մոտակա Սեն-Մոր փողոցի դիրքը-
նրանից վոչ հեռու մյուս բարրիկադի վրա Ֆնացել ե մի-
այն միմարդ, բայց համառությամբ շարունակում ե կռվել...

Մի փոքր անց՝ հեվինե վազում ե դեպի կարմիր բար-
րիկադը մի աղջիկ:

— Յես գալիս եմ ձեզ ոգնելու, — կանչում ենա... — Յես
Սեն Մորից եմ գալիս... նա արդեն ընկավ:

— Այստեղ ամենավտանգավոր դիրքն ե. մի գալ
այստեղ:

— Վոչ, չես յեկել եմ ոգնելու և պիտի ոգնեմ...

Վերջին ըոպեններն եյին:

Հերոսները լցրին թնդանոթները ռազմամթերքի մնացորդներով ու վերջին անգամ արձակեցին...

Լսվեց որհասական վորոտը, և ապա ամեն ինչ լռեց: Կոմսունան ընկավ...

Բայց դեռ յերկար տարիներ հիշվում եր են կարմիր բարրիկադն ու են անձնվեր հերոսուհին, վոր յեկել եր ոգնելու...

Յեվ մի բանաստեղծ մի չերգ հորինեց նրա մասին, վոր սկսվում ու վերջանում եր այսպես.

«Յես հիշում եմ, յես սիրում եմ այն որերը,

Յերբ կեռասնին ե կարմրում...»:

Ու յերկար տարիներ բանաստեղծը տեսնում եր կեռասնին կարմրելու ժամանակ մի աղջիկ, վոր շրջում եր վերջին բարրիկադները՝ նրանց ոգնելու համար...

Յեվ վորքան տխրում եր աղջիկը, յերբ նոր բարրիկադներ չեր գտնում, վոր նրանց ոգնի...

„1905 Թ.“

ՄԱՅՐԵ ՈՒ ՎՈՐԴԻՆ

Մնաս բարով, մայրիկ, դե, ել մի վշտանա

և մի լար, ել մի լար, պետք չե այդ:

Ճամպու դիր, համբուրիր ինձ, գնում եմ բարրիկադ:

Չեմ կարող մնալ յես, ո՛, յերբեք.

այնտեղ իմ յեղբայրներն են մեռնում.

Թող, մայրիկ, թող գնամ, տես, մոտ ե լուսաբայ.

յսո՞ւմ ես հրացանի կրակոցն ու վորոտ:

Բայց ո՞ւր ես գալիս դու. վոչ, դու կաց, բաժանվենք

դոսան մոտ:

Ի՛նչ, մայրիկ, դու ի՛նչ հե՛տ,
 գալիս ես դու ի՛նչ հետ դեպի մահ, բարրիկա՞դ:
 Ու գիշերն անց կացաւ. ու լավեց ուսմբերի
 մի վերջին գղրգոց ու վորոտ.
 ու նրանց լերկուսին վայր դրին միասին
 բարրիկադի մոտ:

ՊՐԵՍՆՅԱՆ 1905 ԹՎԻՆ

ՍԵՐԱՖԻՄՈՎԻԶ

1

Առավոտները սովորաբար հանգիստ եր լինում, բայց մոտավորապես ժամը մեկին սկսվում եր թնդանոթաձգությունը: Փողոցներն ասես մեռած լինեն: Բայց դրա փոխարեն ամեն մի դարպասի, ամեն մի դռնակի մոտ, փողոցների յուրաքանչյուր խաչմերուկում—հետաքրքրվողների լամբեր կան՝ մանուկներ, կանայք, գեղջուկներ, առևտրականներ: Նորություններ են հաղորդում: Պատմում են, թե ի՛նչ դատաստան են տեսնում իրենց ձեռքն ընկած գերիների գլխին զորքն ու վոստիկանությունը, խոսում են հեղափոխական մարտիկների սխրագործությունների մասին:

Բարրիկադները մեկը մյուսի չետեից բարձրանում են փողոցի մի ծայրից մինչև մյուսը, դեպի Պրեսնյայի*) կամուրջը: Յե՛վ այդ բուրն արվում եր շատ հասարակ ձե՛վով: Յերգելով, ծիծաղելով, կատակելով գլորում ելին հեռախոսի և հեռագրի սյունները, ծխնահան ելին անում դարպասները, այս ու այն բակից գերաններ ելին դուրս բերում, սահնակներ՝ ձյունով լիքը: Բարրիկադը կառուցվում եր մի՛ջրանի բոպետում, ամբողջապես շրջապատված հեռագրական և հեռախոսի լարերով: Փողոցի լայնքով կապած պարաններից կարմիր դրոշակներ, պլակատներ ելին կախում: Իսկ

*) Մոսկվայի թաղամասերից մեկը:

մայթերի վրա անցնելու նեղ ճանապարհներ ելին թողնում:

Ահա առջևի կողմը, հենց անկյունի մոտ, լսվեց մի լսլացուցիչ պայթյուն: Ծխի և կրակի հետ միասին ող են բարձրանում պտուտակաձև թռիչքով ինչ-վոր սև բանի կրտորներ: Հետաքրքիրների խմբից շրպանելը խլեց տասնվեց մարդ: Վերավորների մի մասը փախավ, մյուս մասին քաշ տվին այս ու այն բակը, իսկ ձյունի վրա սևին են տալիս չորս հոգի: Սրանք անշարժ են: Հինգերորդը կանգնած է ապշած դիրքում, ապա աստիճանաբար խոնարհվում է դեպի առաջ և, առանց կռանալու, սղոցած ծառի պես, լեռան իվար փոխվում է ձյունի վրա: Ընկնում է և նույնպես անշարժանում: Կողքին ձաղարած է փոս է: Շուրջը—արյունոտ բծեր և ինչ-վոր սև բաների կտորներ—չգիտես հազուստի կտորներ են, թե մարդկալին մարմնի...

Մի կանչ է լսվում.

— Կազակները:

Այս մի հատիկ չորս վանկանի բառը մեկեն ցնցեց փողոցն ու բարրիկաղները: Հետաքրքիրները սեղմվեցին դարպասին: Մի լերիտասարդ, ձեռքը վեր բարձրացնելով, կանչեց.

— Անուշին համար:

Միքանի մարդ, ատրճանակները ձեռքերին, հավաքվեցին մոտակա դարպասի մոտ:

Յերիտասարդը դարձավ հետաքրքիրների խմբին.

— Իսկ դուք հեռացեք... հեռացեք, խնդրեմ... թե չե նրանք վոր լեկան, դուք կփախչեք, խուճապ կառաջացնեք...

Հետաքրքիրները մի կողմ քաշվեցին:

— Հեղափոխական մարտիկ ե, — շուռնջով հաղորդում էին իրար: Յե՛վ այդ շուռնջից, հայացքներից յերևում եր, թե նրանք բոլորն էլ ինչպիսի համակրանքով են վերաբերվում դեպի մարտիկները...

Փողոցի լայնքով յերկայնած շարքով գալիս ելին հետիոտն կազակները: Յերբ նրանք կամրջին հասան, նրանց գորշ շարքը մեկեն փայլատակեց. հնչեց նրանց համադարկը. խրոռ-խրոռ... խրոռ... Ասես ոսլայած չթի մի հրակայական կտոր ելին պատռում, բարրիկադներին, ջրատար խողովակներին, ցուցանակներին ու լուսամուտներին, մտնավանդ դարպասներին ու դռնակներին կակտոցով գարկվեցին հազարավոր ընկույզներ:

— Խրոռ... խրոռ... խրոռ-ռր...

Փողոցում մնացածները փախչում ելին դեպի մոտակա փողոցի առաջին դռնակը: Այդտեղ արդեն խոնված ելին մոտ քսան հոգի—անցորդներ և հետաքրքրվողներ, իր ծնկերն եր ծեծում մի ինչ-վոր կին.

— Ա՛խ, տեր աստված, ես ո՛ւր ընկա չես...

Իսկ չիթը շարունակում ելին պատռել, մեջմեջ չըխչիկացնում ելին բրաունինգները*): Դիմացի խաչմերուկում մարտիկը հանգիստ ծնկի իջավ և յերեքգծանին*) նըշանի բռնեց: Կրակը փայլեց, և հանկարծ կրակոցների շարքերից լավեցին կանչեր և ուրախ ծիծաղ.

— Կեցցե՛ս... կեցցե՛ս... կեցցե՛ս...

Կրակոցը դադարեց: Հասարակութունը նորից փողոց թափվեց. ամեն տեղ հայտնվեցին հետաքրքրվողների խրմբեր: Հեռվում յերևում ելին դասակ առ դասակ հեռացող կազակների գորշ շարքերը: Նրանք տանում ելին իրենց հետ չորս վերավորներին:

Նորից աշխատանքը չեռաց: Նորից բարրիկադ բարրիկադի յետևից բուսան փողոցում... կամրջի մոտ բարձրանում եր վերջին բարրիկադը: Իսկ հեռվում մուսյ ու լուռ վեր եր խոչանում Պրեսնյայի աշտարակը:

*) Փոքր ատրճանակ:

**) Հրացան:

Գիշերը քաղաքին պատում եր գերեզմանային լու-
թյուն... Ձյունի ճերմակը սղտորում եր: Սուլ խավարում
տները լերևում եյին վորպես սև, անորոշ ձևի հակադաս
զանգվածներ... Վոչ մի տեղ լույս չկար: Վոչ մի ձայն վոչ
մի տեղից չեր լսվում... Միայն լերբեմն շներն ելին հաջո-
ցով պատասխանում իրար, և ապա նորից լուսթյուն եր
իջնում քաղաքի վրա:

Գիշերվա ժամը տասնմեկն ե:

— Սըռռ... խը՛ռռ... խըռռ...

Հրացանների տրաքոցները լսվում են արդեն վարի
թաղում, բակում, դարպասի շուրջը: Գնդակները կարկտի
պես տեղում են ցանկապատին, լուսամուտներին, շքա-
դռանը: Տունն ասես մեռած լինի: Մարտիկներ այդտեղ
չկան, վորովհետև այդտեղ թագնվելն անհարմար ե. բակն,
ինչպես տոպրակ, միայն մի լելք ունի և այդտեղ ընկնողին
հեշտ ե բռնել՝ թակարդ ընկածի պես: Բայց և այնպես
զինվորները կրակը կենտրոնացրել են այդ տան վրա. նը-
րանք աշխատում են սարսափ տարածել տան բնակիչների
վրա և չթողնել, վոր նրանք դուրս գան. իսկ վոր ամե
նազխավորն ե՝ նրանց չարացրել ե այն հանգամանքը,
վոր հեղափոխականներն իրենցից խուսափում են. անմեղ
տան վրա լեն թափում իրենց բարկությունը:

Կրակոցը լուց: Փողոցից լսվեցին ձայներ, խոսա-
կցություն: Յերկնակամարն աստիճանաբար բոսորագույն
ե դառնում... Կայծեր են թռչում, կծկվում ու չրթ-չըր-
թում են ճյուղերը, այրվում են գերաններն ու տախտակ-
ները—բարբիկադները կրակ են տվել...

Կրակի շառայն ավելի չե բոսորանում ու տարած-
վում... Մուսլ տները դուրս են լողում խավարի միջից՝
արնագույն փալլով վողողված, մեռած ու կուլը լուսա-
մուտներով, փակ դռներով... ապա կրակը կամաց-կամաց

սկսեց մարել... կրակը մարեց... նորից լուսթյուն տիրեց... զինվորները հեռացան բարրիկադներից ..

Իսկ առաջնության այրվածների տեղ հպարտորեն բարձրանում ելին նոր կառուցած բարրիկադներ, և նրանց վրա փողփողում ելին կարմիր դրոշներն, ասես կրակի լեզուներ:

Բաղաքում շարժումն ամենուրեք ճնշված էր, միայն ամառի Պրեսնյան, վոր պատած էր բարրիկադներով, մըռալլ ու հպարտ՝ իր վերջին մարտն էր տալիս:

3

Յես քաղաքից ելի վերադառնում. ճանապարհս Պրեսնյալով էր անցնում: Ինձ կանգնեցրին.

— Մի գնացեք:

— Ինչո՞ւ:

— Աշտարակից հսկում են... անպատճառ կսպանեն...

Յես աշտարակի կողմը նայեցի: Աշտարակում, իրօք, մարդիկ ելին չերևում, յերբեմն ել կրակոցի ձայն էր գալիս այնտեղից: Զինվորներն ու քաղաքապահները, չարացած ախ ըանից, վոր անկարող են Պրեսնյան վերցնել, քաղաքացիները վրա ելին կրակում: Բավական էր, վոր մարդ չերևար փողոցում, վորպեսզի տեղնուտեղը գետին զլորեն: Կրակի տակ ելին առել մեծ փողոցն իր ամբողջ յերկայնքով, կրակ ելին տեղում բակերի վրա, պատահանների վրա, ծակծկվում ելին դռները, դարպասները:

Յերկու կողմն ամայացած Մեծ Պրեսնյան էր, իսկ փողոցակներում, վորոնք ապահով ելին աշտարակից սուրացող գնդակներից, սևին էր տալիս ժողովուրդը: Այդ որերին անկարելի յեր սենյակում նստել:

Յես ականջ դրի խոսակցուլթյուններին:

— Գիշերը Կուզնեցկի կամրջի մոտ մի ուսանող ձերբակալեցին. խուզարկեցին, մոտը ասորճանակ դտան: Հետո մի աղջկա բռնեցին, հետո մի բանվորի: Սպան նրան-

ցից վռչինչ չհարցրեց, չուզեց իմանալ՝ ովքեր են, ինչացո՞ւ չեն, ինչ են անուս. միայն գլխի մի շարժում նկատեցի ու...

— Ի՞նչ:

— Գնդակահարեցին նրանց:

Մուսլ ու խիստ լուռթյուն:

— Հապա ի՞նչպես տեղ հասնեմ:

— Յես ձեզ կանցկացնեմ:

Մի տաս տարեկան տղա, ժիր ու աշխուժ, նայում էր ինձ իր վճիռ աչքերով: Անշուշտ կուզող բանվորներից մեկի տղան էր:

— Ի՞նչպես պիտի անցկացնես, — զարմացա յես.

— Կանցկացնեմ, յեկ, նրանք չեն տեսնիլ:

Նա տարով ինձ դեպի անկյունը. այդտեղ փողոցը կտրուս էր բարրիկադը:

— Փորի վրա ընկեք:

— Ի՞նչ:

— Անպատճառ փորի վրա պիտի ընկնեք, թե չե իսկույն գնդակի բաժին կդառնաք:

Ճար չկար: Փորի վրա ընկանք, սկսեցինք սողալ սառը ձյունի վրայով, առանց զլուխներս բարձրացնելու, աշտարակից դիտող աչքերից ու գնդակներից պատասպարան ունենալով բարրիկադը: Փողոցն անցնելով և մոտակա փողոցակը մտնելով, վոտքի չեկանք, թափ տվեցինք շորերս:

Յես գուրգուրանքով սեղմեցի տղայի ձեռքը: Նա ուրախ ու աշխուժ մողեսի պես յետ սողաց չորեքթաթ նոր անցորդներ անցկացնելու, մինչև վոր քաղաքապահների դարանակալ գնդակն, աշտարակից սուրալով, վար կգլորի այդ խիզախ տղային:

Փոխադրեց Յ. Խոնջկարյան

1905 թ. ՄԱՅԻՍԻ Ի-Ը

Փականագործ Միխեյևի տնակը լիքը մարդ է:

— Անտոշկա, վարագույրը քաշիր. ամեն տեղ լրտեսները լիքն են. — ասաց Միխեյևը իր տղային:

Նիհար, գորշ աչքերով Անտոշկան արագ վեր թռավ տեղից, չթե վարագույրը քաշեց ու նորից տեղավորվեց անկյունում. նստել է, լսում, աչք չի ճպացնում:

Մի յերիտասարդ բանվոր զրպանից մի կապոց թըղթիկներ հանեց. ամենքը կոացած սկսեցին կարդալ. «Պրոլետարներ, բոլոր յերկրների, միացե՛ք: Մայիսի 1-ը աշխատանքի տոնն է՝ այդ ուրը ամբողջ աշխարհի բանվորները պիտի բարձր պահեն իրենց կարմիր դրոշմը: Թող նրանց առաջից նահանջի ցարական կամայականութունն ու կապիտալիզմի հին աշխարհը...»

Անտոշկան լսում է, բառ բաց չի թողնում:

— Վաղը առավոտյան Ժ. 11-ին բոլորս կհանդիպենք 5-րդ արահետում:

— Ուրեմն, մեր նշանաբանն է՝ «Բազե»:

— Այո:

— Պահակները հուսալի՞ յեն. — խստորեն հարցնում է հին բանվոր Յելիսեյ-պապը:

— Հուսալի յեն. ամեն ինչ կարգին է. առաջին պահակը նստած կլինի մեր տղաներից «Русское слово»*) թերթը ձեռքին. թերթի անկյունից մի կտոր կտրված կլինի:

Կամացուկ խոսեցին ու ցրվեցին:

Անտոշկայի մայրը ընթրիքը լուռ հավաքեց:

Յերբ պառկում էյին քնելու, Անտոշկան լսեց մոր անհանգիստ փսփսոցը.

*) «Ռուսական խոսք»- ցարական շրջանի բուրժուական լեզուական թերթ:

— Աֆանասիչ, դու «դրանք» յերանի թագցնես խո-
ղովակի մեջ: Յերեկ ամբողջ ուրը պտտվում եր մեր պա-
տուհանների տակ:

— Իսկ դու կարծում ես, վոր նրանք զլխի չեն ընկ-
նի, վոր խողովակի մեջ նայեն, — ծիծաղեց հայրը:

Այդ գիշեր լերկար ժամանակ Անտոշկան շեր կարողա-
նում քնել:

Մտածում եր՝ ինչպես անի, վոր մասնակցի վազվա
ցուլցին: Իսկ յերբ քնեց, լերազում տեսավ մեծ ամբոխ,
վորի մեջտեղը կանգնած եր ինքը Անտոշկան, կարմիր մեծ
դրոշը ձեռքին:

Հանկարծ ազմուկից նա արթնացավ: Ինչ-վոր անծա-
նոթ մարդիկ խմբված, քրքրում ելին մնդուկը, դարակի
վրայի ամանեղեններն ելին տնտղում, նայում ամեն
ծակուծուկ, թափ տալիս անկողինը:

Հայրը կանգնած եր անշարժ, գունատ, խոժոռագեմ:

— Յեկել են. — գլխի ընկավ Անտոշկան:

Պրիոտավը տղասարդավարի մոտենալով պատուհա-
նին, աղաղակեց.

— Ես ի՛նչ ե շրջանակների միջև:

— Որացուլցի թերթիկներ են, — ասաց մայրը:

— Այ, հիմա մենք կտեսնենք, թե ինչ թերթիկներ
են. — ու նա խփում ե ապակիներին ձեռքն ընկած փայ-
տով: Զրնգոց... ապակու կտորներ... Ամենքը մոտեցան
պատուհանին, սկսեցին հանել թերթիկները:

Այդ ժամանակ հայրը աննկատելի կերպով Անտոշկա-
յին մի կապոց տվեց: Նա գլխի ընկավ, թե ինչ պետք ե
անի. մկան նման դուրս ծլկեց սենյակից:

Գարնանային գով գիշեր եր: Հեռվից թարմ կանաչի
հոտ եր գալիս:

Փոքրիկ, նվազ Անտոշկան կանգնել եր, կապոցը
կրծքին սեղմել: Հետո նա շտապ վազեց դեպի մոտակա տան
անկյունը ու ափսոսեղ պատի ու դարսած փայտերի մեջ
թաղցրեց կապոցը:

Նրա սիրտը այնպես արագ եր բարախոււմ, այնպես ուրախ եր նա... ալժմ ինքն ել իսկական հեղափոխական եր:

Յերբ նա վերադարձավ տուն, վոստիկանները տրդէն գնացել եյիե:

Մայրը, լաց լինելով, հավաքում եր ցրված իրերը:

— Կապոցն ո՞ւր ե.— հարցրեց հայրը:

— Փաշտերի յետևն եմ թագցրել: Յես գիտեմ, թե թուղցիկները ինչպես պետք ե թագցնել նրանցից:

— Կեցցես, ընկեր ջան. փրկեցիր, — ծիծաղեց հայրը.— հո չէս մոռանա, թե վորտեղ ես պահել:

— Եղ եր պակաս:

*
* *

Առավոտ եր: Արևի տակ շողշողում ելին տերևները: Անտոշկան նոր շորեր հագած գնում ե Սոկոլնիկի*)): Ահա և 5-րդ արահետը: Այստեղ պետք ե լինի պահակը: Նստարանի վրա նստած եր մի յերիտասարդ բանվոր, ձեռքին «РУССКОЕ СЛОВО» լրագրի անկյունը կտրած ե, ուրեմն հենց նա ինքն ե:

Անտոշկան մտեցավ նրան ու բարձր գոռաց՝ «Բազե»: Բանվորը զարմացած նայեց նրան:

— Ի՞նչ ես գոռում. ո՞ւր ես գնում, ավարա:

— Հալրիկիս մոտ, տոնին մասնակցելու:

— Ինչո՞ւ:

— Ասել ե, վոր թուղցիկներ տանեմ, — ստում ե Անտոշկան:

Հայտը նրան հետը չեր տարել. չեր հասկանում հայրը, վոր Անտոշկան պատրաստ ե մեռնելու, միայն թե տոնին մասնակցի:

Բանվորը փնթփնթում ե.

*) Մոսկվայի Սոկոլնիկի թաղամասի արհեստական անտառ:

— Տես ե, ինչպիսիքներին են ղրկում, վոր գործը տապալին:

Բայց ելի ճամպան ցուլց տվեց:

Հետևյալ պահակը բոլորովին յերիտասարդ ե: Այստեղ արդեն Անտոշկան չգոռաց, այլ մոտեցավ և կամաց փսփսաց՝ «Բագե»:

Այդպիսով Անտոշկան հասավ նշանակված տեղը:

Ամբոխի վրա, կանաչները մեջ բարձր՝ կրակե ծաղկի նման՝ ծածանվում եր կարմիր դրոշը: Դրոշի աստի, կտրված ծառի բնի վրա կանգնած խոսոււմ եր բանվոր Ալեքսանդրը:

Անտոշկայի աչքում նա սովորականի նման չերևաց: Ալեքսանդրը ալժամ խոսոււմ եր բարձր ձայնով, աչքերը փայլում եյին:

Նա ասում եր՝

— Դագգայանների, կրակի մոտից, տանջված՝ մենք չեկել ենք այստեղ, վոր բարձրացնենք մեր կարմիր դրոշը: Ամեն կողմից մեզ հետևում են մեր թշնամիները, թագավորի ու գործարանատերերի ծառաները: Բայց հին աշխարհը արդեն տատանվում ե, ու մոտ ե այն ուրը, չերբ մենք...

Բայց Ալեքսանդրը խոսքը դեռ չեր վերջացրել, չերբ մեկը գոռաց:

— Կազակները:

Ու իսկույն ամեն ինչ խառնվեց իրար՝ թփերի ճարճատյունը, ձիերի սմբակների տակ, խարազանների շաչյունը, կազակների գոռոցը...

Անտոշկան տեսավ՝ ինչպես Ալեքսանդրի գլխին իջավ խարազանը:

Ալեքսանդրը բռնեց ծառի ճյուղից ու հանկարծ ընկավ, ել չերևաց... Դողդողալով, ծառերի յետևը թագընվելով, վազում ե Անտոշկան: Յերկար պտտվեց, մինչև փողոց դուրս չեկավ: Հայրը արդեն տանն եր:

— Հայրիկ, վո՞նց եր, կազակներից հո դու չե՛լ չը-
կերա՞ր:

— Իսկ դու ի՞նչ գիտես:

— Վոնց չե. չես ել ելի մասնակցու՞մ:

Հայրը նայեց նրան, ժպտաց:

— Շատ ժիրն ես: Տես, գլխիդ փորձանք կգա:

Հետո շոյեց նրա մազերը ու քնքուշ ավելացրեց.

— Մեծացիր ու սովորիր պայքարել: Տես՝ եդ խա-
րազանները չմոռանաս, հա՛:

Թարգմ. Սերիկ

«ԸՆԿԵՐՆԵՐԻ» ՀԵՏ

1905 թ. հոկտեմբերն եր. «մանիֆեստի» լուրը հա-
սել եր նաև մեր խուլ գավառական քաղաքը. ազահու-
թյամբ կարգում ելինք որաթերթերը, վորտեղ առաջինան-
գամ ելինք տեսնում ազատ կերպով տպագրված՝ «Հեղա-
փոխութունն», «Բանվորական շարժում» և նման վերնա-
դերերով հոդվածներ. բոլորիս համար պարզ եր, վոր հեռա-
վոր Մոսկվայում ու Պետերբուրգում ինչ-վոր խլրտումներ
կան. մեր խմբակները (սոց.-դեմ.) կենդանացել ելին. այլ-
ևս դադանիք չելին մեր ժողովները..

Հանկարծ մի որ լսում ենք, վոր Ռուսաստանից ինչ-
վոր հեղափոխականներ են չեկել և քաղաքային այգում
միտինգ են հրավիրել. շտապեցինք տեսնել հեղափոխա-
կան «ընկերներին». 8-10 հոգուց բաղկացած մի խմբակ
եր. 2-3-ը կին ելին. մենք լսել ելինք, վոր մեծ մասը ես-
դեկներ (սոց.-դեմոկրատներ) են. եսերներ (սոցիալիստ-հե-
ղափոխականներ) ել կային. յերկուսը չափահաս մարդիկ ե-
լին, մյուսները՝ յերիտասարդ բանվորներ և ուսանողներ:

Միտինգն սկսվեց. կապույտ ու կարմիր բլուզավոր-
ները փոխարինում ելին իրար. ճառում ելին վոգևորու-

Թշամբ. մենք հիացած ծափահարում և ուռա ելինք կան-
չում. անցնողները կանգ եյին առնում, միանում եյին
մեզ, և այգու հրապարակը հետզհետե ծածկվում եր հե-
տաքրքրվող մարդկանցով:

Հանկարծ... մենք տեսանք, վոր մոտենում են մի
վաշտ գորշ-շինեկավոր զինվորներ. ամբոխը ցրվեց... զին-
վորները մոտեցան... «Ընկերները» դեռևս շարունակում
եյին խոսել. զինվորները շրջապատեցին նրանց. վաշտա-
պետը հրամայեց ցած իջնել սանդուխների վրայից. մենք
զինվորների շղթաներից դուրս եյինք մնացել, բայց մի
ինչ-վոր բան ինձ անհանգստացնում եր: «Ինչպե՞ս, մենանկ
թողնենք «ընկերներին»,— մտածում եյի յես. միքսնիսս
վորոշեցինք անցնել շղթայից ներս, միանալ «ընկերնե-
րին». զինվորները շնկատեցին, թե ինչպես ներս մտանք
և միացանք «ընկերներին» խմբին: Յես նոր միայն հիշե-
ցի, վոր բրաունինգը (ատրճանակ) դրպանումս ե. վորոշե-
ցինք թողնել, «գուցե պետք գա»... շարժվեցինք՝ զինվոր-
ներով շրջապատված:

«Մեր ընկերները» հիանալի տրամադրության մեջ
եյին—աղմկում եյին, չերգում, կեցցեներ ու կորչի-ներ ե-
լին կանչում. մեր սովորած յերգերը պետք չեկան—«Մար-
սելյոզ», «Վարչավչանկա», «Առաջ, տղերք» յերգելով՝ ան-
ցանք քաղաքի փողոցները, կենդանացնելով թմրած քա-
ղաքը. «հեղափոխականի» կոչումը շոյում եր մեր ինքնա-
սիրությունը. «ընկերների հետ» լինելը մեզ համար պար-
ծանք եր:

Բանտը գտնվում եր քաղաքից 2 վերստ հեռու. 2
տարի առաջ յես ձանձրացել եյի այդ ճանապարհը գնալ-
գալուց՝ ժանդարմների ուղեկցությամբ, հարցաքննության,
բանտարկության համար և այլն. այժմ «ընկերների հետ»
աննկատելի կերպով անցանք և բանտ հասանք. սկսվեց
խուզարկությունը. իմ ատրճանակը պահեցի վերարկուիս
զրպանը և վերարկուն ձեռքից-ձեռք տալով՝ ատրճանակն

ազատեցինք գրավելուց: Մեզ տեղավորեցին ներքին հարկում. չերեկոյան դեմ քաղաքից նոր բանտարկայինօր բերին. մեծ մասամբ նշակյաններ*) ելին. այդ գիշեր մենք անցկացրինք չերգերով ու զրույցով:

Առավոտյան ամբողջ բանտն արդեն զիտեր մեր մասին. զրոսանքի ժամը միտինգի վերածվեց. մեզ տեղավորեցին մյուս բակը, սակայն Զ-րդ որը մենք հարկադրեցինք բանալ բոլոր կամերաների դռները, և մենք ազատ շրջում ելինք մեզ հատկացրած սենյակները: Ռուս ուսանողներից մեկը՝ Բորիսը դասախոսուում էր մեզ. աղջիկներից մեկը՝ Բերտան պատմում էր ընդհատակյա աշխատանքների մասին. չերգեցիկ խումբը հեղափոխական նոր չերգեր եր սովորում:

4 թե 5 որ այսպես անցկացրինք. տեսակցության թույլ չեյին տալիս, բայց քաղաքից շարունակ առատ սթերքներ ու ճաշ ելինք ստանում՝ մեծ մասամբ հնչակյան կոմիտեյի կողմից:

Չանձրացանք, վորոշեցինք ապստամբել. բանտի վարչութունը տեղեկանալով մեր մտադրության մասին՝ գիշերը կամերաների դռները փակել էր՝ առավոտյան նկատեցինք այդ, սակայն մեր մտադրութունից չհրաժարվեցինք: Հենց վոր նախասենյակից լսեցինք պալմանական յերգը, ներսից կանգնեցինք դռների առաջ և վերցնելով ահագին նստարանները՝ թափով խփեցինք սենյակների փակ դռներին. մեկ-չերկու, և դռներից միքանիսը խորտակվեցին, մյուսները բացվեցին, մնացածն իրեք՝ հասկիչները բաց արին: Իրարանցումն ընկավ բանտը, բանտապետը վազում էր վեր ու վար՝ միքանի բոպե անց չերեկոյան գիշերներ՝ հրացանները ձեռքներին. ահա և հաստափոր վոստիկանապետը:

— Կրակե՛լ... — հարցնում էր վաշտապետը:

*) Հայկ. ազգային սոց.-դեմոկրատական կուսակցութուն անցյալում:

Վոստիկանապետն ալլալվեց, դուրս վազեց. լես հանեցի ատրճանակս, ուզում եյի կրակել ողում, սակայն չափահաս բանվորը խլեց ձեռքիցս:

— Պրովոկացիա կատեղծվի, — ասաց նա:

Մենք առանց դիմադրութեան հանդիպելու դուրս լեկանք բակը, սակայն կանգ առանք փակ դռների լետեր:

— Դուրս արեք դրանց, — գոռաց մեկը վերևից. նա լեցինք, պատուհանի առաջ կանգնած եր բանտապետը. նրա յետևը՝ ալլալված վոստիկանապետը:

Դռները բացվեցին. մեզ դիմավորեց խառն հասարակութունը. շարժվեցինք դեպի առաջ .. դիմավորները տարակուսած նայում ելին, վոմանք գոհունակութեամբ ժրպտում ելին:

Ահա և վոստիկանապետը — սլացալ կառքով. մենք ճանապարհ դրինք նրան հրհռոցով ու շվոցներով:

1905—1917

Մ Ե Ի Բ Կ Ա

ԸՍՏ Դ. ԿԱՍՍԵԼԻ

I

Մեծ քաղաքի ծայրամասում եր գտնվում Մեիրկայենց փողրիկ նկուղը, վոր կուչ եր լեկել ընդարձակ բակի մի անկյունում:

Աշնան մի լերեկո Մեիրկան վերադառնում եր տուն: Ելեկարական փողրիկ ճրագների լուսի տակ խանութպանները մեկ-մեկի լետեից փակում ելին խանութները: Մեիրկան գնում եր՝ ձեռքերը գրպանում, յերբեմն սուլելով, լերբեմն թռչկոտելով: Նա շուտ-շուտ այս ու այն կողմ եր նայում:

— Ինչո՞ւ չես կանգնել, զնանք տուն, — ուրախ ժրպտալով՝ Մեիրկան բաշեց Խաիմի թևից։

Այդպես եր նրա սիրելի ընկերոջ անունը։

Խաիմն աչքերը հառած՝ նայում եր խանութներից մեկի ցուցափեղկում խնամքով շարված դպրոցական պատույթներին։

Խաիմը հանկարծակիի լեկածի պես յետ նայեց ու Մեիրկային տեսնելով՝ ծանր հոգոց քաշեց։

— Գնանք, Մեիրկա՛ ջան, նայելուց ի՞նչ ոգուտ, մի բան, վոր փող չունեմ՝ առնեմ։

Նրանք միասին առաջ տնցան։

Քաղաքի ծայրամասին դեռ չմոտեցած՝ նրանք բաժանվեցին։

Յերբ Մեիրկան բազը մտավ, փոքրիկ շնիկը մնաստալով փաթաթվեց նրա վոտքերը, ապա վազ տվեց դեպի նկուղը, գույգ ճանկերով միջանի անգամ ճանկուց դուռը ու նորից յետ դառնալով, Մեիրկայի շուրջը պտույտներ գործելով՝ նրան առաջնորդեց մինչև նկուղի նախասենյակը։

Դուռը փակ եր. Թանձր վարագույրով ծածկված փոքրիկ լուսամուտից հազիվ նշմարվում եր ճրագի աղոտ լույսը։

— Յերևի ելի հավաքվել են, — շշջաց Մեիրկան ու մոտենալով՝ սկսեց դռան ճեղքից ահանջ դնել։

Նա չեք սխալվել. ներսից ինչ-վոր կամացուկ ձայներ ելին լսվում։ Մեիրկան լսողութունը լարեց։ Նա հազիվ վերսալով «կապիտալ... պրոլետարիատ... բուրժուա... դեմոնստրացիա» բառերը, փնթփնթաց ինքնիրեն.

— Ես մեր Աբրամը զարմանալի մարդ ե. ամեն բան ինձնից ծածկում ե. չես սրա միտքը չեմ հասկանում։ Ե՛ս ինչ կասկած ե. կարծում ե, թե մենակ ինքն ե Բուճղի*)

*) Անցյալ դարի վերջերին Ռուսաստանի արևմտյան նահանգներում ծնունդ առավ հրեա բանվորների սոցիալ-դեմոկրատական «Բուճղ» միութունը։ 1905 թ. հեղափոխության նախորդակին

անդամ. Ել չի իմանում, վոր իրենց «Մեծ Բունդ»-ի կողքին չես ել «Փոքր Բունդ» ունեմ:

Ախր ինչո՞ւ չի ուզում Աբրամը Մեիրկային ել ժողովի թողնել, քանի վոր նա այդպես խելոք, սրտոտ աղա յե ու նվիրված աչն ամենին, ինչի մասին յիզբոր ընկերներն ալբպես խորհրդավոր փսփսում են:

Ախր ինչո՞ւ Մեիրկային գաղտնի գործով վորևե տեղ չեն ուղարկում. և, վերջապես, ինչո՞ւ նրան վորևե գաղտնի բան չեն հանձնարարում:

Չե՞ վոր Մեիրկան տեսել ե, թե ինչպես ե չեղբայրը փաթեթներով թղթերը թագուն գոմը տանում ու պահում այնտեղ: Մի՞թե չեր կարելի այդ գործը Մեիրկային հանձնարարել: Չե՞ վոր միկնույն ե—նա զիտե, թե չեղբայրը վորտեղ ե պահում այդ փաթեթները...

Ամենից շատ աչն եր զարմացնում Մեիրկային, վոր Աբրամը, ինչպես բոլորն ես փողոցում ասում, համարյա թե «Մեծ Բունդ»-ի «ամենագլխավորն ե». բա ել նրա յեղբայրը—Մեիրկան ինչպես լսի այդ բանը, քանի վոր իրենց նկուզում տեղի ունեցող ժողովներից վոչ մեկում դեռ չի չեղել:

Նրա գայրույթն Աբրամի դեմ թախիծի փոխվեց: Նա պատրաստվեց դուրս կանչել Աբրամին, փսփսալ նրա ականջին, համոզել նրան, վոր իրեն լավ հայտնի յե, թե ինչ բան ե «կապիտալ»-ը, «պրոլետարիատ»-ը, «բուրժուա»-ն, «դեմոնստրացիա»-ն և ուրիշ բաներ. վոր նա չի վախենում վոչ գարադավոներից *), վոչ պրիստավից **), վոչ նույնիսկ նահանգապետից, վորն իր տնից բուլվար գնալիս կառքով ե գնում, աչն ել զույգ սև ձիերը լծած:

«Բունդ»-ի կողքին սկսեցին ծնունդ առնել պրոլետարական պատանեկական շարժման առաջին ծիլերը—դեռահաս բանվորների խմբակները—«Փոքր Բունդ»-ը:

*) Ցարական վոստիկաններ:

**) Վոստիկանների պետը (թաղամասի):

Մեիրկային կարելի չէ վստահել: Թեկուզ աշխարհն էլ նրան տաս՝ նա բերնից խոսք թուցնողը չի:

Բայց Մեիրկան իրեն զսպեց.— «Վնչ, չպետք է խանգարել, հետո կխոսեմ, հիմա ժամանակը չի»— մտածաց նա:

Դուան մոտ կանգնած՝ համբերութեամբ շարունակում էր ականջ դնել.— «Յես պետք է բոլորն իմանամ: «Մեծ Բունդ»-ի բոլոր զաղտնիքները պիտի հասկանամ. ու ճե՞ ժամանակ դուռն ինքն իրեն կբացվի իմ առաջ»:

II

Անցավ մի շաբաթ:

Սովորական ժամին, նախասննյակի մուտք անկյունում Մեիրկան կանգնած՝ սպասում է, մինչև վոր Աբրամի նեղ ու ցածրիկ սենյակը լցվի աղաներով ու աղջիկներով: Ահա ներսից շրխուում է դուան փականը: Այդ ժամանակ Մեիրկան դուրս է գալիս իր թագստոցից, մատների վրա մոտենում է դուանն ու ականջը դեմ անում բանալու անցքին:

Մեիրկայի հայրը, վոր այդ բանը չէր սիրում, հարեվան սենյակից բարկացած գոռում է.

— Ելի քո սասածն ես անում: Ի՞նչ գործ ունես՝ ցցվել ես՝ եղաեղ... Դո ի՞նչ բանն է...

Բայց Մեիրկան հոր սասածը իսկի բանի տեղ չի դրնում: Նա լարված ականջ է դնում: և ազահաբար վորսում աչնպիտի անհասկանալի, բայց հնչուն բառեր, վորոնք դուան յետից հասնում են նրա ականջին:

Մեիրկան ցնցվում է: Նա լսում է, վոր շաբաթ որը բաղաբի գլխավոր փողոցում «Մեծ Բունդ»-ի ցույց է նըշանակվում:

Յնդբայրն մտում է, վոր ցույցը պետք է տեղի ունենա «վճռական և ազդու» կերպով:

— Պետք է դրոշակներ պատրաստել ու մասսաները ժամանակին բերել... Այժմ, ընկերներ, անցնենք մյուս հարցերին:

— Քեզ հետ չեմ, կորիւր այդտեղից, — նորից լսվում է ծերունի Իսակի խռպոտ ձայնը:

Մեիրկան դարձյալ ուշադրություն չի դարձնում:

Իսակը չկարողանալով բարկությունը ղսպել՝ մոտենում է Մեիրկային ու, վզակոթին սալով, նախասենյակից հրում է բակն, ապա դուրս է հանում փողոց ու դարպասը փակում:

Մեիրկան պտույտ գործելով բակի պարսպի շուրջը՝ փորձեց յետևի դռնակից ներս մտնել, բայց այդ ել փակ էր:

Փոքր ինչ կանգ առավ, լուռ այս ու այն կողմը նայեց ու տխուր մտքերով տարված՝ վերադարձավ դարպասի մոտ և այնտեղից շարունակեց ճանապարհը փողոցի լերկարությամբ: Նա գնում էր մտամուրր, ինքն էլ չգիտեր, թե ուր:

— Ա՛խ, Աբրահամ, հլա դու սպասիր, թե քո Չգրու իմ «Բունդ»-ը քոնից առաջ չգցեմ, բաս լես Մեիրկան չեմ:

— Լավ, ես էլ բավական եմ Շաբաթ որը ցույց լինելու չի: Եդ ձեր ցույցը լես շատ լավ գիտեմ: Թող մի լույսը բացվի, լես մի հասնեմ իմ ընկերներին: Տեսնենք՝ մեզնից ո՞վ առաջ կընկնի...

Մեիրկան դեռ նոր էր մոտենում փողոցի վերջանին, վոր հանկարծ նրա ահանջին ինչ-վոր գնդոցներ հասան: Նա կանգ առավ, աչքերը վեր բարձրացրեց ու նայեց հեռուն: Փեքրիկ լապտերների աղոտ լուսի սակ յերևացին գեպի իրեն յեկող մի խումբ հաստափոր ու հաղթանդամ մարդիկ պսպղուն ուսադիրներով, կարմիր լերիզավոր գլխարկներով, կուրծքները կարմիր թելերով զարդարված, մինչև գետին հասնող թրերով ու շարժվող կոշիկներով:

— Մոտ եմ, հրես այս փողոցի ծայրին եմ: Տեսնում եք՝ ինչ խուլ տեղեր են մտնում, — ասաց մեկը կամացուկ:

Մեիրկան ցնցվեց, կանգ առավ կայծակի արագությամբ մի միտք լուսավորեց նրա ուղեղը. — կա՛-չկա՛ սրանք մեր տուն են գնում: Դե, Մեիրկա ջան, քեզ տեսնեմ...

Խուձըը չեկավ, անցավ Մեխրիկայից, առանց ուշա-
գրություն դարձնելու նրա վրա:

— Այլ իս ձեր են... ատամները կրճտացնելով՝ Մե-
խրիկան թափահարեց բուռեցքը նրանց յետևից ու շտապով
մտավ կողքի մութ նրբանցքը, վորտեղից կարճ ու կրտ-
րուկ ճանապարհով վազ տվեց դեպի իրենց առևն:

— Դարպասը փակ ե. լավ ե՛ ելի յետևի կողմից մի
ճար անեմ,— մտածում եր նա ու վազքն ավելի արա-
դացնում:

Նա չիմացավ, թե ինչպես հասավ իրենց դարպասին:
Ուժգին խփեց փոքրիկ դռնակին ու փակ գտնելով՝ հու-
սակտուր յետ ու առաջ վազեց պարսպի տակով: Նրա
աչքն առավ պատի մոտ ցցված ծառին, վորի հաստ ճյու-
ղերը մեկնվել էին պարսպի վրա: Առանց ժամանակ կորցը-
նելու, ոճապտուլտ մազլեցեց ծառի վրա ու ճյուղերից
բռնելով՝ անցավ պարսպի վրա: Ուզեց ցատկել բակը,
բայց պարիսպը բարձր եր: Նա տատանվեց ու վերջին
ճիգերը գործ դնելով՝ պատից դեպի բակն անցած ճյու-
ղից կախվեց, ողի մեջ ճոճվելով՝ պարսպի կեսից ավելին
իջավ ու այլևս բռնելու բան չգտնելով՝ ճյուղը բաց թո-
ղեց...

Դրմփոցի հետ լավեց մի սուր ճիչ ու իսկույն լոեց:
Մթության մեջ վիրավորված ձեռքերով աչքերը շը-
փելով՝ Մեխրիկան վեր կացավ ու թեթև կազալով՝ շտապեց
դեպի նկուղը:

— Աբրամ, Աբրամ, շուտ արի, ժանդարմներն*) չե-
կան,— կանչեց նա դուռը վրա-վրա ծեծելով:

Աբրամը կասկածով բաց արեց դուռը ու ազոտ լուսի
տակ տեսնելով Մեխրիկայի արյունլվա դեմքն ու ձեռքերը
ու հողակոլոլ զգեստները՝ հասկացավ վտանգի լրջությունը:

— Ընկերներ, իմ յետևից,— ձայն տվեց Աբրամը:

*) Ցարական դորձակալներ:

Պատուհանից բանալին վերցնելով՝ շտապեց դեպի դռնակը: Ընկերները հետևեցին նրան: Վերջինը դուրս գնաց Մեիրկան: Ծեր Իսակը դռնակը նորից կողպելով՝ վերադարձավ տուն ու պառկեց անկողնի մեջ:

Աբրահամ ու ընկերները դեռ նոր ելին դուրս յեկել բակից ու ցրիվ չեկել զանազան ուղղութիւններ, չերբ ժանգարմաները շրջապատեցին տունը...

III

Յեղբորից բաժանվելով՝ Մեիրկան մտավ ձախ կողմի նրբանցքը: Բավականին գնալուց հետո կանգ առավ բարձր պարսպի տակ, վորի վրա փռվել էին ծառի հսկա ճյուղերը: Յերկու մատը բերանը դնելով՝ նա սուր ու չերկար շվացրեց:

Սուլոցը պայմանական նշանն էր: Միջանի բոպելից այգու մեջտեղը գտնվող տաղավարի մոտ հավաքվեց վողջ «Փոքրիկ Բունդ»-ը:

Տղաներն անհամբեր սպասում են, վոր Մեիրկան մի կարևոր բան հաղորդի: Մեիրկան սովորութիւնն ուներ մոպլվելու, հոնքերը կիտելու: Փոքր պառուզայից հետո հանդիսավոր կերպով սկսում է.

— Ընկերներ, առաջիկա շաբաթ ո՞րը լինելու չե...

Նորից պառուզա: Յերեխաների համբերութիւնը կը տըրվում է:

— Լինելու չե՞ բանվորական ցույց: Պետք է մասսաներ ու դրոշակներ պատրաստել...

Տղաներից միջանխաբ տեղներից պոկ են գալիս ու սկսում զինվորների նման գետինը կատաղի դովելով՝ մեկ-չերկու անելով յետ ու առաջ գնալ:

Այսպիսով նրանք ցույց են տալիս իրենց բուն ըզգացմունքը գալիք ցույցի համար: Մեիրկայի սիրտն էլ է ուզում նրանց նման մի-չերկու անգամ չետ ու առաջ անել, բայց նա իրեն պահում է ու խիստ նայվածքով զըս-

պում ե չարածճիներին: Մրանք նստում են իրենց տեղերը, ու սկսվում ե հարցի քննութիւններ:

Կարճ վիճաբանութիւններից հետո այսպիսի մի վորոշում ե կայանում. շաբաթ որը «մասսաները» հավաքել այգու տաղավարի մոտ ու միասին դնալ ցուլցի: Խաիմին, վոր դարուկ դեմքով, սովի կրակով վառվող աչքերով մի տղա յեր ու լավ նկարողի հռչակ ուներ, հանձնարարվում ե կարմիր թղթից դրոշակ պատրաստել:

Փողովը վերջացավ: Ամեն մարդ իր տունը դնաց: Բայց Մեիրկան անմիջապես իրենց տուն չվերադարձավ:

Նա յերկար ժամանակ մենակ շրջում եր փողոցներում: Յերբ անցուդարձը դադարեց, ու տեղ-տեղ միայն պահակներն ելին յերևում, Մեիրկան դանդաղ քայլերով դիմեց դեպի տուն...

IV

Արհեստանոցում բան ու գործը թողած՝ Մեիրկան անդադար մտածմունքի մեջ եր: Գիշերները ծանր յերագներ ելին նրան տանջում, ու նա արթնանում եր՝ չորացած շրթունքներից ճիշեր արձակելով: Թե քնի մեջ ե թե արթուն ժամանակ նա ցուլցով եր զառանցում:

Շաբաթ առավոտյան վաղ նա վաղ ե տալիս պայմանավորված տեղը: Արդեն այնտեղ են հավաքվել նաև «Փողը Բունդ»-ի «մասսաներ»-ը՝ պատրաստի դրոշակով: Մեիրկան միքանի կարգադրութիւններ ե անում ու վազ տալիս դեպի տուն: Տանը նստելը չի դալիս, կես ժամից հետո նա նորից այգում տղաների մեջ ե: Ելի վազ ե տալիս դեպի տուն: Ճանապարհին նա հանդիպում ե վոստիկանին ու գրպանի, մեջ բռունցք ցուլց տալիս նրան:

Արբամը դեռ տանն ե: Նա նկատում ե Մեիրկայի անհանգիստ վազվզոցը, բայց վոչինչ չի ասում: Մեիրկան համարյա չարախնդությամբ մտածում ե, թե վերջապես յեղբայրն այսոր կիմանա, թե «Փողը Բունդ»-ի մեջ ինչ

տղաներ կան՝ Նրանք սեփական դրոշակներով ամբողջ լերթի առաջից կգնան ու վոչվոքից չեն վախենա, թե-կուզ նրանց վրա հարձակվեն այն ձիավոր զինվորները, վորոնք մոտ որերս լերեացին քաղաքում՝

Ճիշտ ժամը 2-ին Մեիրկան արդեն վերջին անգամ վազ ե տալիս այդի՝ ընկերների մոտ՝ «Մասսաներ»-ը անհամբեր սպասում են յելույթի հրամանի։ Բայց Մեիրկան չի շտապում։ Նա ուշի-ուշով մտիկ ե տալիս կարմիր ու փայլուն թղթից պատրաստած փոքրիկ դրոշակին, ծանր-ծանր փաթաթում ե այդ դրոշակը ու զնում ե ծոցն այնպես, վոր այնտեղից փայտե կոթի ծայրն ե ցցվում։ Ապա հրամայում ե խմբերի բաժանվել ու առաջ շարժվել։

«Փոքրիկ Բուռդ»-ը միքանի մարդկանցից բաղկացած խմբերով, դիմեց դեպի քաղաքի կենտրոնը։

V

Ծանր տոթից քաղաքը թմրել ե։ Արևը բարձրացել ե, ջինջ ու հանդարտ ե լերկինքը։ Նրբանցքում լռությունն ե տիրում։

Գլխավոր փողոցներն ամայի յեն։ Հրեաների փոքրիկ խանութները կողպ են։ Անկյուններում կիսախուփ աչքերով կանգնած են վոստիկանական պահակներն ու նիրհում են արևի տակ։ Տների պատերն ու սալահատակներն ասես կրակ են կտրել։

Վորջան մոտենում ես հրապարակին, փողոցներն այնքան կենդանանում են։ Անցնում են լերիտասարդ ու հասակավոր բանվորներ, տոն որերի պես զարդարված բանվորուհիներ։ Բոլորի դեմքերին անբնական մի զրզիռ ե լերևում։ Շարունակ նորանոր խմբեր են գալիս։ Տեղտեղ պոռթկում ու մարում ե մի բարձր ծիծաղ։ Անկյուններում կանգնած վոստիկաններն այլևս չեն նիրհում, այլ անհանգիստ զարմանքով նայում են անցորդներին։

Մայթերի ու սալահատակների վրա, հասակավոր

բանվորներին քսվելով, անցնում են նաև փոքրահասակները՝ Մեիրկալի գլխավորութչամբ: Նրանք չարածճուխուն չեն անում, այլ զբոսնում են հանդարտ ու իրենց արժանավորութչունը գիտակցելով: Հասակավորները նրանց համարյա չեն նկատում:

Մեիրկան խուսափում է յեղբորը հանդիպել: Տանը, դուրս դալուց առաջ, նա սաստիկ ցանկանում էր, վոր Աբրամը ցերեկն իրեն տեսնի ամբոխի մեջ: Հեռվից՝ իր առաջ նկատում է նա յեղբոր լայն թիկունքը, սակայն չի շտապում այնտեղ, հեռվից հետևում է նրան:

VI

Թնդաց բարձրահնչուն կոչը.

— Ըսկերներ, շարք կանգնեցեք:

Յեվ հանկարժ սալահատակը հեղեղվում է մարդկանցով, վորոնք շարունակ գալիս են ու գալիս, ասես առանց հոգնելու, բոլոր դարպասները, դռներն ու նրբանցքները նրանց փողոց են նետում: Լայն ու զարդարված փողոցում ծփում է մարդկային ծովը: Ամեն տեղ գլուխներ, գլուխներ...

Մեիրկային թվում է, թե ամբոխի սև ու հսկա թիկունքը բարձրացել և ողի միջով լողում է աղտոտ և ուրախալի յերգի ալիքների մեջ:

Յերթի առաջավոր շարքերից մի կոչ է հնչում, ու հարչուրավոր ձայներ աղաղակում են.

— Կեց-ցե... կեց-ցե...

Ու նորից կոչ, արդեն մի ուրիշ տեղ և կրկին մի յերթորդ տեղ, և նորից վորոտաձայն՝

— Կեց-ցե... կեց-ցե...

Ամբոխի գլխավորը պարզվում ու ազատ ծածանվում է արլան պես կարմիր դրոշակի հսկայական քաթանը:

Մեիրկան նայում է տների պատշգամբներին. այն-

տեղ չեն յերգում, այնտեղից դաժանորեն ու թշնամաբար նայում են ամբոխին: Մեիրկան ճանաչում է, թե ովքեր են պատշգամբների մարդիկ: Այդ բուրժուազիան է, դուրս է յեկել տեսնելու բանվորական չերթը:

Մեիրկան ծոցից դուրս է քաշում փոքրիկ դրոշակն ու, վորջան կարելի չէ, իրենից բարձր բռնում: Ամբոխի գլխավերևն արդեն վոչ թե մի, այլ միքանի ալ քաթաններ են ծփծփում: Մեիրկան նայում է բարձր յերկնքին, ու նրան թվում է, թե չերկվինքն ավելի ու ավելի չէ բարձրանում: Նա իր շուրջը բազմահազար բանվորական ամբոխն է տեսնում ու զգում է, վոր ինքն էլ է ավելի ու ավելի վեր բարձրանում, չերկվինք սլանում, ինչպես այդ կարմիր քաթանները:

Ամբոխի սև ու հսկա թիկունքը հանկարծ կանգ է առնում ու որորվում: Հեռվից, ասես գետնի տակից, մռնդիրավոր մարդիկ են բուսնում, ձիերի վրա ճեճվում ու հրացանները պատրաստ պահում:

Հետզհետե ուժեղացող չերգն ընդհատվում է կրակոցով...

Նորից կրակոց...

Մի պահ տիրում է լռություն:

Յեւ կանկարծ սև ու հսկայական թիկունքը մարդկային հարյուրավոր մանր կերպարանքների յե բաժանվում, վորոնք ցրվ էն գալիս ու զանազան կողմերի վրա փախչում՝ քայքայելով ու իրենց յետևից ձգելով յետևի շարքերը...

Մեիրկան զգում է, թե իրեն սեղմեցին ու վեր բարձրացրին: Հետո նա ինչ-վոր մեկի մեջքին է թռչում, իսկ մի ակնթարթ հետո թռչում է շուռ աված ու սրորված մարդկանց կույտի վրա ու գլորվում սալահատակին:

Վոչ ցավ է զգում նա ու վոչ էլ պախ ու մի ակըն թարթում վեր է թռչում տեղից՝ փախչելու: Բայց նրա առաջ ցցվում է ձիավոր զինվորի արնակալած դեմքը:

Հլուսած մտրակը շառաչելով կպչում է նրա դեմքին: Տաք հեղուկը վողողում է նրա դեմքը, ու անտանելի ցավը խալթում է գիտակցութունը:

Մեիրկան, գրեթե ուշաթափ, ընկնում է սալահատակին: Յավից կոպերը մոտենում են իրար. տարրիչակքունը հաղթահարում է նրան: Նա աչքերը բաց է անում ու տեսնում, թե ինչպես անընդհատ իր մոտից վազ են տալիս պատառոտած բաշմակները, շպորներով զրնգացող ճաքավոր կոշիկներն ու կանացի կեղտակալած սպիտակ տուֆլիները:

Ձեռքն ինչ-վոր տաք ու կպչուն բանի մեջ է ընկած: Արյուն է այդ, բայց ասես իրենք չլինի... Մեիրկան գրլուխը դժվարությամբ դարձնում ու տեսնում է, վոր կողքին յերեսնիվայր ընկած է մի բանվոր, իսկ նրա մոտ՝ մի տղա: Յեվ այդ տղան ինչքան նման է Խաիմին...

Բայց վորոտն ու աղմուկը հանկարծ ինչ-վոր մի տեղ խլանում են, ու Մեիրկային թվում է, թե իր տակի սալահատակը բարձրացավ ու ներքև գլորվեց՝ ավելի արագ ու խորը: Ու նա գնում է գլխիվայր, բայց չի ընկնում, այլ ինչ-վոր թեթև ու քաղցր մոռացության մեջ է ընկղմվում:

VII

Հետևյալ որը միայն, գլուխը կապած, հիվանդանոցում, ուշքի յեկավ Մեիրկան:

Սպիտակ մահճակալներ, սպիտակ պատեր, սպիտակ հագնված մարդիկ: Հարևան մահճակալներից խուլ տնջոցներ են հասնում: Մեիրկան ել աչնալիսի մահճակալի վրա յե, ինչպես նրանք, բայց նա տնքալ չի ուզում. նա անես ցավ չի զգում: Ճիշտ է, գլուխն անսովոր ծանր է:

Յերեկվա պատահածը միանգամից միտը չի գալիս: Հիշողության մեջ դանդաղ զարթնում են շաբաթ որվա

առավտոր, ամբոխը, դրոշակները, ձկավոր զինվորները, — ու Մեիրկան ձեռքը քսում է փաթաթած գլխին: Նա զգում է, վոր սիրտն ուրախությունից թունդ է առնում. քանի-քանի անգամ է նա լսել, թե ինչպես դուռն յետևից խոսում է ին «գոհեր»-ի մասին: «Դուք դո՞հ գնացիք կատաղի պայքարում», — յերգում են բանվոր հերոսների մասին: Այժմ «Փոքր Բունդ»-ն էլ իր հերոսն ու «գոհ»-ն ունի: Այժմ հասակավորներից վոչվոք չի համարձակվի ծիծաղել «յերեխաներ»-ի վրա կամ ուղղակի չնկատել նրանց:

Սպիտակ խալաթով, բարձրահասակ ու դալուկ բժիշկը մտիկ է տալիս հիվանդներին, նրանց ու իրեն առաջնորդող կին բուժակի հետ կիսաձայն խոսում, առանց աղմուկի դուրս գալիս պալատից: Մեիրկան նորից քնում է...

Յերագում նա զգում է, վոր ինչ-վոր սեկը շոյում է իր մազերը. նա բաց է անում աչքերը և իր մահճակալի մոտ տեսնում է հորն ու մորը: Մեիրկան դժգոհությամբ նոթերը կիտում և ուզում է յերեսը շուռ տալ. բայց մոր յետև կանգնած տեսնում է չիղբոր լացն դեմքը և ուրախ ժպտում է:

Նա չի ուզում նայել գլխիկոր մորը, հոր հուսահատ դեմքին: Մեիրկան կուզեր Աբրամի հետ խոսել: Նա աչժմ իրեն հավասար է զգում յեղբորը: Մեիրկան ուրախ է, վոր իր գլուխը փաթաթված է, և վոր չեղբայրը տեսնում է այդ:

— Ահա յես էլ եմ «գոհ», — այս անգամ լսելի ձայնով՝ ուրախ կրկնում է նա...

— Զո՞հ ես, գո՞հ ես, — քնքշությամբ ժպտալով՝ համաձայնում է յեղբայրը:

Հպարտությունից Մեիրկան կարմրատակում է: Ծնողները հանդիմանական յեղանակով գլուխներն որորում են ու մի կողմ քաշվում: Տղան խոժոռ հայացքով ճանապարհ է դնում նրանց:

Վերջապէս այժմ նա յեղբոր հետ մենքի է: Առանց նախնիքն վախկոտության, նա դեպի իրեն է քաշում Արբամի ձեռքն ու փալլող աչքերով հարցնում.

— Արբամ, իսկի բանտարկվող յեղե՛լ է:

Յեղբայրը միանգամից չի պատասխանում:

— Տասը մարդ են ըննել...

— Դե պատմի, է, թե վո՛նց յեղավ...

Մեիրկոն համառ կերպով քաշում է յեղբոր ձեռքն ու մտածում. «Յես «Փոքր Բուռդ»-ից եմ, իսկ դու՝ «Մեծ»-ից... Յես «գոն գնացի», իսկ դու՝ վոչ... Յես քեզ հաձասար եմ և նույնիսկ անցել եմ քեզնից»...

Յեղբայրը մի պահ շփոթվում է: Ապա նստում է մահճակալին ու շոյում է Մեիրկայի ձեռքը:

— Միքանի մարդ է սպանված... նրանց մեջ է «Փոքր Բուռդ»-ից քս մտերիմ Սախի՞րը...

Մի պահ Մեիրկայի դեմքից անհետանում է ժպիտը: Սակայն յերկար չի ափսոսում ընկերոջ կորուստը: Նրա մտքերն այլ բանի վրա չեն կենտրոնացած: Մեիրկան զգում է, վոր այժմ յեղբայրն իրեն հեռու չի պահի, վոր յեղբայրն այժմ նրան իրեն հավասար մարդ կճանաչի:

Յերբ Արբամը հրաժեշտ է տալիս ու դեպի դուռը դառնում, Մեիրկան մահճակալից դուրսը բարձրացնում ու ձայն է տալիս նրա յետեից.

— Զմոռանաս՝ վաղը գաս նորություններ պատմելու...

Արբամը ծիծաղում է ու գլխով անում:

Մեիրկան գիտե, վոր նա կգա:

Մեիրկան մի ուրիշ բան էլ գիտե, վորի համար նա ուղում է գլխի փաթաթանը պոկել ու հոլի պես մի վոտքի վրա ֆըռոնալ պալատալում: Նա գիտե, վոր այլևս կտրիք չունի անկուններում թազնվելու ու դռան յետեից ականջ դնելու...

Մարտական կնոնք է նա արդեն անց կացրել:

Փոխ. Հար. Պեր. և Գար. Հակ.

«ՀՈԿՏԵՄԲԵՐԻ» ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Պատերազմի ընթացքում պատանի բանվորների առանց այն ել ծանր զբոսաշրջության ավելի ծանրացավ 13-14 տարեկան պատանիներն ստիպված էին սեփական աշխատանքով պահել իրենց և ընտանիքին ոգնել, մանավանդ վոր շատերի հորն ու յեղբորը պատերազմ ելին տարել, և տանը մնացել ելին մայրերը՝ փոքրահասակ յերեխաներով:

Դե դիտիդ ճարը տես. մտածիր, թե բեզ պահիր, թե մորդ, քույրերիդ ու յեղբայրներիդ մասին մտածիր:

Փոքրիկ աշխատավորները մոռացան հանգիստն ու զվարճութունը և ընտանիքի խնամատարն ու հոգացողը դարձան: Նրանք աշխատում էին որական 9—10 ժամ:

Ապրուստը թանգանում եր որեցոր, մինչդեռ աշխատավարձը համարյա նույնն եր մնում:

Նրանք սկսեցին ավելի ևս լսել պատերազմը սարքող բուրժուականներին—շահագործողներին:

Բայց ի՞նչ կարող էին անել. կազմակերպված չէին:

Սակայն—կարող էին ոգնել բանվորներին:

Ու սկսեցին կատաղի բողոքներ պատերազմի դեմ:

Միացան զինվորների մեջ տարվող ազիտացիային:

Ռազմամթերք ե ուղարկվում ճակատ. շուրջը վիստում են պատանիները, վորոնք արկղների ճեղքերից ներս են խցկում հեղափոխական կոչեր ու թուղթիկներ:

1916—17 թ. Պետրոգրադին սով եր սպառնում. բանվորների հեղափոխական տրամադրությունը բարձրանում եր: Այդ տրամադրությունը վարակեց նաև պատանիներին:

Պուտիլովսկի գործարանում ցույցեր սկսվեցին ու գործադուլ հայտարարվեց՝ իրրև բողոք պատերազմի դեմ:

Վոստիկանութիւնը ներս խուժեց, սկսեց ձերբակալել, ձեռնել բանվորներին:

Պատանիները դիմադրում ելին, քարեր ու լերկաթի կտորներ ելին նետում վոստիկանների վրա:

Շատերին կոտորեցին. լերք ձերբակալված բանվորներին թաղամաս ելին տանում, պատանիների մի խուժք վոստիկանների վրա հարձակվեց և շփոթութիւն առաջացնելով, բանվորներից շատերին փախչելու հնարավորութիւն տվեց:

Յերբ վոստիկանները հալածում ելին ցուցարարներին, բռնեցին գրոշակակիր ուսանողուհուն ու սկսեցին ձեռնել. պատանիները հարձակվեցին վոստիկանների վրա: Դրոշակը փրկվեց՝ ձեռքեձեռք անցնելով, իսկ ուսանողուհին՝ պատանիների ոգնութեամբ կարողացավ փախչել:

Պատանիները վորոշեցին գործարանից հեռացնել այն զինվորներին, վորոնք փոխարինում ելին գործադուլավոր բանվորներին:

Բայց հնար չկար գործարանն անցնելու:

Պատանիները դրա հնարն ել գտան:

Նրանք թուփերը վերցրին իրենց հետ և մակուկներով անցան գործարանի մյուս կողմը, մտան արհեստանոցներն ու ցրեցին կոչերը:

Պատանիների շնորհիվ զինվորները գլխի ընկան, վոր նրանց, անամոթաբար, իրենց լեղբայրների, բանվորների դեմ են գրգռում:

Ահա թե ընկ. Դրոզդովն ինչպես ե նկարագրում դեռաւա-բանվորների դերը Փետրվարյան հեղափոխութեան ժամանակ.

«Գործարաններում չեռուն կերպով սկսեցին աշխատել հեղափոխական խմբակները: Պատանեկութիւնն սկսեց այդ խմբակները ևս մուտք գործել:

Գործարանների պատերը նրանք ձեփեցին զազտնի

կազմակերպութունները բազմաթիվ թուղցիկներով ու կոչերով:

Փետրվարի 23-ին կարմիր դրոշակներով Պետրոգրադի փողոցները դուրս լեկան բանվորուհիները՝ «հաց ու խաղաղութուն» պահանջով:

Նրանց կողքին ելին պատանիները:

Նրանք ապացուցում, համոզում ելին զինվորներին ու կազակներին, վոր պատերազմը բանվորներին ու զյուղացիներին կորստի դուռն է տանում:

Փետրվարի 27-ին զինվորները միացան բանվորներին:

Պատանիներն այդ լուրը կայծակի արագությամբ բանվորական թաղերը հասցրին:

Յեւ չեղավ մի կարևոր դեպք, վորին չմասնակցեյին պատանիները:

Նրանք ներկա ելին բոլոր ցույցերին, միտինգներին, հանձնաժողովի նիստերին:

Ամեն տեղ գործ կար նրանց համար:

Գնդերը զինաթափ անելիս ել պատանիներն իրենց դորձն ունեյին:

Նրանք խմբով ժողովի ելին զնում և աղմկելով թույլ չեյին տալիս խոսելու այն հռետորներին, վորոնք պատերազմը շարունակելու կոչ ելին անում:

Ի՞նչ կարող ելին անել նրանց դեմ. մինչև քշում ելին դահլիճի մի կողմից, նրանք մյուս կողմն ելին անցնում ու այնտեղից սկսում աղմուկն ու շվոցը:

Փետրվարյան հեղափոխութւան որերին, իրենցից յերկար հրացաններով զինված, վոր կրակեին ել չգիտեյին,— պատանիներն սկսեցին զինաթափ անել Մոսկվայի գընդում պատասպարված սպաներին:

Ձերբակալված բանվորներին բանտերից հանելիս պատանիները կապի ճարպիկությամբ ցատկում ելին բանտի պատերով, առաջինն ելին մտնում բանտարկայնների կա-

մերաները (խցերը) և խանդավառությամբ վողջունում ելին ազատված ընկերներին:

Մարտիկներն առաջին անգամ պատանիներից լսեցին ուրախալի լուրերը:

— Թագավորին քշեցին...:

— Ազատ եք դուք:

— Կեցցե՛ ազատությունը:

Յե՛վ նորից դործի անցան:

Նրանք փնտռում են թագնված վոստիկաններին:

Նրանք կտուրներից ու «չերզակներից» ցած են բերում գնդացիներն ու բանվորները վրա կրակողներին և նրանց թաղալին հեղափոխական կոմիտե լին տանում:

Կոմիտեյլը կոմիտե, կոմիսսիայից՝ կոմիսսիա լին անցնում հեղափոխության պիտներները—գրավոր ու բանավոր կարգադրությունները հաղորդելով:

Գործ շատ ունեն պատանիները. պետք է գիշերները քաղաքի կարգը հսկել, հետևել, վոր թալան, գողություն կամ կռիվ չլինի:

Բանվոր պատանեկությունը միլիցիայում է, հսկում է պարենավորման պահեստները, մտնում է կարմիր գվարդիայի շարքերը:

Մի դործարանում 307 գվարդիականներից 63-ը 13—15 տ. պատանիներ են, մեկ ուրիշում 218-ի շարքերում 48 դեռահասներ ու պատանիներ կան:

Յե՛վ այսպես՝ ամեն տեղ. հայր ու վորդի ձեռք ձեռքի լին տվել բանվորական գ. ըծի պայքարում:

Պատանի հեղափոխականները փալուն կերպով բռնեցին իրենց հեղափոխական քննությունը:

Փետրվարի հեղափոխական փորձը նրանք խտացրին ու ծավալեցին Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխության ուղիներով:

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՈՐԵՐԻՆ

ԼՅՈՒՍԻ ՔԱՐԳՅՈՒԼ

I

Տեքստիլ գործարան մտնելու հենց առաջին որից փողբրիկ Ալլոշային ամենից շատ գործարանի ավագ բանվոր Իվանովը դուր յեկավ, վորի կնճռոտ դեմքը միշտ մըռայլ եր ու մտազբաղ. նա կարծես միշտ ինչ վոր բանի մասին եր մտածում ու հաճախ հայհոյում եր բարձրաձայն.

— Վա՛յ, շուն-շան վորդիններ, վա՛յ...

Իվանովը նախաճաշին գրպանից հանում եր ծալծլված որաթերթիք և կապելով՝ հազիվ-հազ կարդում.

— «Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում բանվորական ցույցեր, գործադուլ»:

— «Այս գիշեր ձերբակալված են մի խումբ ազդի դավաճան բալլետիկներ. բռնվել ե գաղտնի կերպով զենք փոփադրելիս»:

«Նրանցից տասը մահման են դատապարտված»:

— «Ուրալի լեռնագործարանից 100 բանվոր են արձակված, մեղադրվում են գործարանը պայթեցնելու դավադրութչան մեջ...»:

— Վա՛յ, շուն-շան վորդիններ. վա՛յ, բայլետիկներն են ազգի դավաճանները, հա, — փնթփնթում եր Իվանը ու մոտենալով մի խումբ բանվորներին՝ փսփսուած եր կամացուկ, ապա դժկամութչամբ նստելով դադգլահի մոտ՝ սկսում եր աշխատել:

Ալլոշան ուշի-ուշով դիտում եր Իվանովին. այս անծանոթ բանվորը նրան պատկառանք եր ազդում, և Ալլոշան անշափ ցանկանում եր բարեկամանալ նրա հետ:

Մի անգամ գործարանից դուրս գալիս՝ Ալլոշայի վտոր դեմ առավ մի քսակի, վորի մեջ փող և զանազան թղթեր կային:

Իվանովի գրպանիցն եր ընկել-այս հանգամանքն ավելի հետաքրքրեց Ալյոշային, վոր առանձնանալով մի խուլ անկյուն՝ սկսեց քրքրել քսակը:

Թղթերի մեջ նա գտավ կուսակցական մի գրքուկ:

— Բայլշեխի ե, բայլշեխի, են ել 1903 թվի բայլշեխի,— ուրախացած բացականչեց Ալյոշան.— ախր զգուժ ելի, վոր Իվանովը մեծ մարդ ե բայլշեխի...

Յե՛վ յերբ Իվանովն այլալված ու դես-դեն նայելով դուրս լեկավ գործարանից, Ալյոշան մոտեցավ նրան և քսակն զգուշությամբ նրան հանձնեց:

— Լավ ե, վոր Պետրովի ձեռքը չի ընկել,— ասաց նա ժպտալով.— թե չե կարող ելին քեզ ձերբակալել...

Պետրովը գործարանի վերահսկիչն եր, մի ժանգոտ մարդ, վորից զգուշանում և սարսափում ելին բոլոր բան-վորները:

Իվանովն ուրախացած սեղմեց Ալյոշայի ձեռքը և իբրև վարձատրություն՝ միքանի ուռլի առաջարկեց նրան:

— Շնորհակալ եմ,— ասաց Ալյոշան հրաժարվելով,— ուրիշ բան եմ ուզում խնդրել քեզնից... չես ել եմ ուզում աշխատել ձեր կուսակցության մեջ. դուք պետք ե վատահ լինեք իմ անկեղծության վրա... հայրս ել եր ձեզ պես բայլշեխի, նա 1905 թվի հեղափոխության ժամանակ սպանվեց:

Ու նրա հուզված աչքերի առաջ պատկերացավ են արնոտ կիրակին, յերբ ինքը, դեռ մի փոքրիկ յերեխա, սարսափած վազվզում եր արնաշաղախ դիակների վրայով ու հեկեկալով հորն եր վորոնում... հիշեց՝ ինչպես հոր դիակը տուն բերին. զանգը ցրիվ եր յեկած, լեզուն ատաճների արանքում սեղմված, արյունալիա...

— Յես ուզում եմ հորս ու նրա պես շատերի վրեժը լուծել... ինդը՛նում եմ՝ ինձ ել ընդունեք ձեր կազմակերպության մեջ,— ասաց Ալյոշան հուզված:

Իվանովն ել եր հուզվել. կարճ լռությունից հետո նա կամացուկ ու կտրուկ ասաց.

— Վաղը աշխատանքից հետո կհետևես ինձ,— ու
տեսնելով Պետրովին՝ անմիջապես հեռացավ:

II

Այլոշան ապրում էր պառավ տատի հետ, Պետրոզրա-
զի խուլ թաղերից մեկում:

Նրանց տունը կատարյալ հավաքնի յեր նման. արևի
շողը չէր թափանցում այնտեղ. ցերեկով ել լամպ ելին
վառում:

Սենյակի խոնավությունից Այլոշան թուլակազմ էր ու
գունատ. նրա նիհար դեմքի վրա միայն աչքերն էին
փայլում:

Իվանովի լերաշխավորությամբ նա արդեն աշխատում
էր բանվորական գաղտնի կազմակերպության մեջ. իսկ
ազատ ժամերին ընկերներից վերցրած անլեզու գրք-
քերն էր կարդում:

Չնայած վոր յերրորդ բաժանմունքից նա վճնդվել
էր, կրոնից թույլ լինելու պատճառով, բայց և այնպես,
գրքերից ու կյանքի փորձից յեկել էր այն լեզրակացու-
թյան, վոր բոլոր հարուստների կերուխումից, վայելք-
ներից արլան ու քրտնքի հոտ ե դալիս... շահագործվող-
ները տաժանակիր աշխատանքով ստեղծում են ամեն ինչ
և միայն դիտում են հեռվից, թե ինչպես շահագործող-
ները հռհուրով վայելում են իրենց քրանքի արդյունքը:

— Կամ նրանք, կամ մենք,— ասում էր Իվանովը
գաղտնի ժողովներում:

— Այն, ինչ վոր մեր հայրերն ուզում էին աղաչան-
քով ստանալ, մենք ձեռք կքերենք զինված ապստամբու-
թյամբ,— վոգևորված բացականչում էր Այլոշան:

— Ձենք բարձրացնելու ժամանակն ե արդեն,— խո-
սում էր կրակոտ աչքերով մի բանվոր,— Ռուսաստանը
ծվատվում ե ռազմաճակատում, հարկավոր ե նրան ներ-
սից ել ծվատել:

— Այո՛, զուր չի ասել Լենինը, վոր անհրաժեշտ է իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական կռիվի վերածել, վորովհետև մեր թշնամին վոչ թե դրսումն է գտնվում, այլ ներսում:

— Կոի՛վ, անխնա կռիվ շահագործողների դեմ...

Նրանք հաճախ Ալյոշայի տանն ելին ժողովներ անում, վորպես մոռացված մի անկյունում:

Այդ սրերին Ալյոշան տատին դիտմամբ հեռացնում էր տանից:

Բայց տատի սիրտը կասկած էր ընկել:

— Գաղտնի մի բան կա այստեղ, — մտածում էր նա անհանգիստ և հաճախ դուռն յետևում կռչ յեկած՝ ականջ էր դնում:

— Հեղափոխություն, Մարքս, կոմունիզմ, կորչի ցարը, կեցցե սոցիալիզմը...

Այս հատ ու կենտ խոսքերից նա ինչ-վոր անորոշ ու աղոտ մի բան էր հասկանում, և նրա վախը սաստկանում էր մանավանդ այն ժամանակ, յերբ Ալյոշան գիշերները հաճախ բացակայում էր տանից:

Յե՛վ խեղճ պառավը անկողնում կծկված հառաչում էր ու լալիս:

— Գիտե՛մ... գիտե՛մ... սա յե՛լ է հոր ճանապարհով գնալու, հալըն ել էր սրա պես գաղտնի փսփսուծ ընկերների հետ, մինչև վոր արնաշաղախ յեղան, զնացին...

III

Մի դեպքից հետո Ալյոշան հայտնի դարձավ բանվորական կազմակերպության մեջ, և բոլորն սկսեցին գուր-գուրքանքով վերաբերվել փորրիկ հերոսին:

Մի գիշեր Ալյոշան տուն էր վերադառնում:

Նրա մոտով արագ-արագ գնում էին միջանի ժանդարմներ և իրար հետ խոսում:

— Են սարսաղ Իվանովն ու կուզնեցովն են նրանց

մեծերը. ամենից առաջ պետք է նրանց պոչերը խուզել:

Այլոշան ականջը սրած, գաղտագողի հետևում էր:

— Հրահանգված է հենց հիմա վրա տալ ու տեղումը բռնել, թե չէ՝ սատանան գլխի, թե վոր ծակերն է ման գալիս:

— Փսինքսներն ուզում են թաղավորի դեմը դուրս գալ, հի-հի-հի-հի-հի... վհնց չե:

Հուզումից Այլոշայի սիրտն սկսեց ուժգին բաբախել:

Յերբ ժանդարմները թեքվեցին դեպի Իվանովենց թաղը, Այլոշայի աչքերը մթնեցին, կարծես հողը փախալ նրա վտանների տակից — քիչ էր մնում՝ գլորվել:

— Ագասի՛ր, թե կարող ես, Այլոշա, — ասաց ինքն իրեն և կարճ ճանապարհով սկսեց խելագարի պես վազել...

Քամին մռնչում էր, նեվան գալարվում ու վռնալով զարնվում էր զբանհատ ավերին. ցուրտը կտրում էր դանակի նման. բայց Այլոշան վոչինչ չէր զգում, ձյունների մեջ խրվելով՝ նա վազում էր հեփհե:

— Գալիս են, փախե՛ք, շո՛ւտ, շո՛ւտ... ձերբակալելու յեն յերկուսիդ... — հազիվ-հազ կարողացավ հասկացնել Այլոշան Իվանովի մոտն ընկնելով:

Քիչ անց, Այլոշան գնում էր շվշվացնելով. նա հանգիստ էր և ուրախ. նա տանում էր Իվանովի տանից կաղմակերպութան գաղտնի թղթերը, արձանագրութուններն ու կնիքը:

Նույն գիշեր Իվանովն ու կուզնեցովը կտրների վրայով, գաղտագողի փոխադրվեցին Այլոշայի մոտ, այնուհետև գործարան չգնացին:

IV

Արդեն հասել էր վճռական որը:

Ռուսաստանն ինչպես մի ալեկոծված ծով որորվում էր, փոթորկվում:

Դարերով ճնշված ժողովուրդը կատաղի վրեժխնդրութեամբ լցված, ցանկանում եր վերջ տալ միապետութեան և ամեն տեղ, բանտերում, ռազմաճակատում, խրամատներում, գաղտնի ու հայտնի ժողովներում ապստամբութուն ելին ծրագրում:

Ամեն որ հազարավոր զինվորներ թողնում ելին ռազմաճակատն ու փախչում:

— Ի՞նչ ենք կորցրել այս կռիվում, վոր ինչ գտնենք, — սսում ելին նրանք գազազած, — մենք կռվենք, արյուն թափենք, իսկ ցարն իր մարդկանցով պալատումը հանգիստ նստած՝ նոր-նոր հողերի տեր դառնա՛, — ուրիշներին ել մեղ նման գերի դարձնի...

Իսկ քաղաքներում գործադուլ էր, բանվորութունն ել չէր ուզում աշխատել:

— Կորչի՛ կռիվը, կորչի՛ միապետութունը, — աղաղակում ելին նրանք՝ փողոցներում ցույցեր կազմակերպելով:

— Հաց և խաղաղութուն ենք ուզում, մեղ հարկավոր չե կռիվը, վերադարձրեք մեր ամուսիններին ու յեղբայրներին, մեր արտերն անմշակ են մնացել, մեր լեռն-խաները ջարդվում են քաղցից, — սսում ելին տանը մնացած կանայք...

Ցարական բանակը մռնչում եր որհասական տագնապից, ել չէր կարողանում դիմադրել:

Գյուղերից ու քաղաքներից, հանքահորերից, գործարաններից հավաքված մարդկային մի հսկա ու գազազած բանակ բարրիկադների վրայից կրակում եր դեպի պալատը:

Ցարն ու իր հավատարիմ ծառաները գլուխները կորցրած կոչ ելին անում.

— Դի՛մա՛-դրե՛լ...

— Տղեք, ձեր հոգուն մեռնեմ, լա՛վ կրակեցեք, — աղաղակում եր Իվանովն առաջավոր դիրքերից:

Նա կրակ եր կտրել. չնայած փետրվարյան ցրտին՝ քրտինքն առվի պես հոսում եր նրա կնճռոտ ճակատից.

նրա աչքերը շիկացած ածխի պես վառվոռւմ ելին, կայծկլտում:

— Տղերք, առա՛ջ, տղերք, առա՛ջ, Ռոմանովի զիշատիչ արծիփն ե ընկնում,—կոչ եր անում մի զինվոր:

— Այ՛ յես նրա... — պինդ-պինդ հաչոյում եր մի ալեհեր մուծիկ, կրակելով, —մի եղ ջանավարը սաղ-սաղ ձեռու ընկնեք, գլուխը ջնջխեցի, վոր սիրտս զինջանաւ ե... իրեք-իրեք ջահել-ջիվան տղերանցս զինվոր տարավ, արյունները խմեց...

Ալլոշան մրրկի նման վազվզում եր մի զիրքից մյուսը, նրա սիրտը պայթում եր վոզևորութունից.

— Միլիոնավոր զոհերի վրեժն ենք լուծելու այսոր,—ասում եր նա նշան բռնելով:

Թնդանոթների, գնդացիրների ու հրացանների տարափից զողզողում եր յերկիրը:

Պելագարված ամբոխը ծառս եր լինում, պալատից թշնամիները կարկտի պես կրակում ելին, հեղափոխականներից շատերն ընկնում ելին իրար չետևից, բայց ժողովուրդը մոռանալով ամեն ինչ, կրնկերի տակ զիակնեքը տրորելով՝ առաջ եր շարժվում:

V

Ցարական Ռուսաստանը չդիմացավ այդ հարվածին, պայթեց ու ընկավ:

Ցարն իր պաշտպանների հետ գտհավիժվեց. ժողովուրդն ազատ շունչ քաշեց:

Ալլոշան ուրախութունից փաթաթվել եր կուչ յեկած տատին ու համբուրում եր նրա չորացած դեմքը:

— Մի տեմնելի՛ր, տատի՛ ջան, թե ենք ալ տուժները վո՞նց ելին մուկ դառել մեր ձեռքին,—պատմում եր Ալլոշան վոզևորված.—բանիսին գլորեցինք. վո՞նց ելին աղաչում, վոր խնայենք իրենց... բայց հեղափոխութունը՝ տատի՛ ջան, խղճալ չգիտի: Թագավորի ու մեծամեծների որերն ել են հաշված:

Տատը բերանբաց լսում էր թոռնիկին, ու կարծես նրա կնճռոտած դեմքը պարզվում էր, թարմանում, նա ջերմ գուրգուրանքով նայում էր Ալլոշայի վճիտ աչքերին ու կարծես նրանց մեջ տեսնում էր ազատագրված մարդկության կյանքի արշալույսը...

ՄԱԳԻԼՆԵՐՈՒՄ

ԱԼԱԶԱԼ

I

Մեր տունն ընկած է քաղաքի հեռու և խուլ մի փողոցում:

Փողոցն էլ ինչ փողոց, նեղ, կեղտոտ, պատերն իրար մոտ ու ծռմուխած: Անձրև որերին՝ ցեխ, արև որերին՝ փոշի ու աղբ:

Մեր տան տերը մի խանութպան էր—Ակոբ դայի ելին ասում: Հաստ, փքված փորով, մութ ու խոժոռ մի մարդ: Ուշունցն ու պապիրոսը շրթունքներինց միշտ անպակաս: Մեզ տվել էր մի գետնափոր նկուղ: Վարձքն հո տալիս ու տալիս ելինք, բայց պայման կար, վոր մայրս նրանց լվացքն աներ, ջուրը կրեր, և հայրս էլ ձմռանը սրբեր նրանց տափարակ կտուրները:

Փողոցում պղտոր մի առվակ էր հոսում: Ինչքան ենք խաղացել նրա ափերին պզզած, հարևան յերեսաների հետ: Խնձորի չորս կողմում փայտի կտորտանքներ շարած, դեմ ենք արել ջրի հոսանքին, ու յերբ նա անիվի նման դարձել է, ուրախությունից քրքջացել ենք: Հետո, «վարդավառ» ենք խաղացել, իրար թրջել, ցեխոտել ու յերբ տուն ենք դարձել, մեր մայրերն ապսակներով են հատուցել մեր «քաջագործությունները»:

Իեռ մանկությունից էլ յես շատ ելի սիրում խաղալ Մանուշի, մեր հարևանի աղջկա հետ: Մենք համարյա հա-

սակակիցներ եյինք: Յե՛վ միևնույն ժամանակ լավ հարե-
վաններ: Մայրս միշտ ազատ ժամանակները նրա մոր մոտն
եր անցկացնում, իսկ մեր հայրերը հին ընկերներ ելին:

Յես վոչ միայն սիրում ելի Մանուշի հետ խաղալ,
այլև ուզում եյի միշտ նրա մոտ լինել: Հետագայում այդ
ցանկութունն ավելի զարգացավ: Դեռ տասնչորս տարիս
նոր եր լրացել, բայց յերբ տեսնում եյի նրան, մի տե-
սակ հուզվում ելի, սիրտս արագ-արագ խփել եր սկսում:

II

Ի՞մ հայրը բանվոր եր: Քսան տարի յեր, ինչ յերկա-
թի հետ ընկերութուն եր անու՛ւ: Ինքն ել յերկաթի դեմք
ուներ, ուժեղ, վճռական:

Մանուշի հայրը նույնպես բանվոր եր: Նրանք յեր-
կուսով հենց նույն գործարանումն ել աշխատում ելին:

Յերբ հայրս առաջին անգամ ինձ գործարան տարավ,
յես զարմացա, միքիչ ել վախեցա՝ ճիշտն ասած: Հսկա-
յական մեքենաները մոնչալով դառնում եյին: Ասես վռա-
զում ելին, ուզում ելին փախչել:

Հայրս բանում եր մի մեծ մեքենայի վրա: Այն ժրպ-
տուն դեմքը, այն պայծառ դեմքը, վորով նա հանդիպում
եր ինձ, յերբ տուն եր դառնում, խոժոռվիլ եր: Յերկա-
թի սառնութուն կար դեմքին:

*
* *

Յերեկոները նա հաճախ ուշ եր տուն գալիս: Յե՛վ
միշտ զբաղված եր: Մանավանդ վերջին տարին: Գլուխը
հակած մի բավական հաստ զրքի վրա՝ կարդում եր: Գիրքը
ռուսերեն եր: Բան չեյի հասկանում: Գրքի առաջին յե-
րեսում մի միրուքավոր ու յերկար մազերով մարդունկար
եր տպված: Հայրս խորասուզված այդ հաստ զրքում՝ կար-
դում եր մինչև ուշ գիշեր:

Վերջին տարիները նա ինձ այնքան ել չեր փաղա-

քշում, նախ՝ վոր յես արդեն բավական մեծացել ելի, չերկրորդ՝ վոր նա շատ եր զբաղված: Յես այդ հետագայում իմացա, իմացա նաև, թե ով եր այն զբքի սկզբում տըպված միրուքավոր մարդը:

Մայրս միշտ կովում եր, չերբեմն լաց եր լինում նույնիսկ, թե ինչու տան վրա այլևս ուշադրություն չի դարձնում, ուշ դալիս, շուտ գնում: Բայց հայրս չերկաթի սառն դեմքով, շրթունքները սեղմած, հագիվ լսելի ձայնով շնջում եր. «Ամեն բան քեզ պատմել չեմ կարող: Ժամանակ չունեմ...»:

* * *

Այսպես, առանց վոչինչ փոխվելու որերն անցնում ելին:

Բայց արդեն ձմեռ եր: Ձյունը սավանել եր շքապատը: Յուրտ: Մառույց:

Ինչ անենք, վոր հայրս զբաղված եր: Պայմանը պայման եր: Ակոր դալին մարդու բան զիջի: Պրծավ:

— Ձյունը թամրզեք, ձյունը:

— Թե չեք թամրզելու, փասա-փուսեքդ հրվաքեցեք...

Պետք եր մաքրել: Պայմանը պայման եր: Ինչ արած, վոր հայրս ուշ եր դալիս, շուտ գնում:

Այդ բեռն ել մորս վզին ընկավ:

Յես ոգնում ելի:

Մայրս դողողալով բարձրանում եր ու իջնում կտուրից հոգնած և ուժասպառ:

Բայց այդ եժան չնստեց մեզ:

Քրտնեց, սառեց ու հիվանդացավ:

Անկողին ընկավ:

Հայրս նորից ուշ դալիս եր, շուտ գնում: Զբաղված եր:

Մորս խնամելու ժամանակ չունեի: Յես ելի խնամում: Զոգնեց:

Ասես մայրս վերջնականապես խռովել եր մեզանից:

Տնքաց բավական, տանջվեց անկողնում, բայց չապրեց:
Գնաց...

Հորս յերկաթի դեմքն ավելի սառնացավ: Մռայլվեց:
Ատամներն իրար սեղմած, նա ասես ինչ-վոր ծանր ցավ
եր գսպում: Հաց չեղավ:

Յեկան նրա բանվոր ընկերները: Դագազ եյին բերել:
Գալիս եյին հարեան կանայք, հուսադրում, միրգ եյին
բերում ինձ: Փողաքշում: Մանուշն ել եր դալիս: Նա չել
եր համոզում իր մանկական փողաքշանքներով:

Հայրս նորից ուշ եր գալիս և շուտ գնում: Նոր-նոր
դրքեր եր կարդում: Միևնույն ժամանակնա կրկին սկը-
սեց փողաքշել ինձ: Համոզել: Հուսադրել:

— Դոչադ մնա,—ասում եր,—դոչադ:

— Դոչադ եմ,—պատասխանում եյի,

Ու գրկում, համբուրում եր ճակատս:

III

Յես հագիվ 15 տարեկան լինելի, յերբ այդ դեպքը
կատարվեց:

Վաստ տարի յեր, սովի տարի: Քողաքում հաց չեր
ճարվում: Գաղթական կանայք սպանդանոցից մորթվող
անասունների արյունն եյին բերում, չեփում և կերտ-
կրում իրենց ընտանիքը: Ապրել չեր լինում: Քանի՛ ան-
գամ քաղցած ժողովուրդը հարձակվեց փռերի ու խա-
նութների վրա և ջարդեց: Նավթ չկար: Տները մութն եյին,
պատուհանները՝ կույր:

Վատ տարի յեր: Փողոցներում ամեն որ մարդիկ եյին
սպանվում ու թալանվում:

Բայց հայրս նորից ուշ եր գալիս և շուտ գնում: Հագար
ու մի մտքեր շրջում եյին գլխումս: Միրաս կծկվում եր:
Տանջվում եյի անկողնում: Քուսնս չեր տանում, մինչև
հայրս չեր գալիս:

Գալիս ու հուսադրում եր:

— Ղոչաղ մնա.

Մի դիշեր ել փալասի մեջ փաթաթած մի հրացան բերեց: Հետը փամփուշտներ: Հետո մի մեծ սև հաց: Յես գարմացա: Այդքան հա՛ց. և միանգամից:

Գրկեց ու փաղաքշեց ինձ.

— Ղոչաղ մնա, ղոչաղ...

— Ինչ կա, վոր ղոչաղ չմնամ:

— Ապրես, ղոչաղ մնա, ես բոլոր հացը քեզ համար եմ բերել: Կուտես:

— Իսկ հրացանն ինչի՞ համար ե:

— Առավոտը կովի պիտի գնանք, ինչքան բուրժուլ ու տերտեր կա, պիտի կոտորենք. իսկ դու ղոչաղ մնա:

Բուրժուլների ու տերտերների մասին չես արդեն գիտելի. հայրս եր պատմել. դիտելի, թե ինչ պտուղ են: Շատ ուրախացա, վոր գնու՛մ եյին նրանց դեմ կըռվելու:

— Չմտածես, միքանի որից ելի կգամ, — շարունակեց հուսադրել, — մենակ թե ղոչաղ մնա:

Գնեցինք:

Իեռ լուսաբացը չեղած, շչաց մի սուր շչակ: Հայրս վեր թռավ: Ազդանշան եր:

Յես նուխպես վեր կացա:

— Յես ել եմ գալիս: Յես կարամ բուրժուլներին կոտորել:

— Չե, դու մնա: Հետո:

Նորից խնդրեցի: Մերժեց:

Նա շտապ հագնվեց, գրկեց ինձ, համբուրեց:

— Ղոչաղ մնա, — ասավ ու գնաց:

*
*

Շչակի ճչից կես ժամ չանցած, քաղաքում սկսվեց մի կատաղի հրացանաձգութիւն:

Կարկուտի նման գնդակ եր տեղում:

Արագիւնների կափկափի նման գնդացիներն եյին կտկտում:

Հետո թնդանոթներն սկսեցին մռնչալ:

Ու ամբողջ որն այդ կատաղությամբ կռիվը շարունակվեց և մայրամուտից հետո քիչ խաղաղվել սկսեց:

Նորից ծանր մտատանջության մեջ ընկաւ— «Ո՛ւր ե հայրըս». մտածում ելի: Այդ որն ինձ անչափ մենակ ելի զգում:

Արևածագին կռիվն սկսվեց ավելի կատաղի թափով և կամաց-կամաց կարծես մոտենում եր մեր փողոցին:

Յերբորդ որն իրիկնապահին մեր տունն չեկավ Մանուշի հայրը: Յես զարմացա. չնայած խիստ լուրջ ու մտատանջ եր յերևում, բայց նա չել հորս նման ինձ փաղաքչել սկսեց—

— Ղոչա՞ղ մնա, զոչա՞ղ, —ասավ հորս բառերով:

— Իսկ ո՞ւր ե հայրիկս, —ասի չես:

— Կգա, դու մի մտածի... դու զոչա՞ղ մնա... հեչ մի մտածի...

Վերջին նախադասությունը նա արտասանեց ավելի անկապ ու մի տեսակ չերկչոտ տոնով:

Յես մտատանջության մեջ ընկաւ: Հազար ու մի հրեշափոր մտքեր նորից կյանք առան գլխումս:— Ահա հայրս սպանված, հայրս վիրավոր, կամ կախված: Նորից մտքեր: Մանր, անկապ:

Մանուշի հայրը նորից հուսադրեց ու գնաց:

Նույն չերկչոտ ու անկապ խոսքերով Մանուշն եր ինձ հուսադրում: Բայց յես մանավանդ Մանուշի խոսքերից գուշակեցի, վոր հորս մի փորձանք ե պատահել, ու չեն ուզում ինձ հայտնել:

*
*
*

Յերկու որից կռիվը խաղաղվեց:

Բանվորները հաղթվել եյին:

Մի մասը կոտորվել եր, մի մասը՝ բանտարկվել, մյուս մասը՝ փախել:

Մանուշի հայրը փախել էր ու ժայրն անհետացել:
Իսկ իմ հայրն ընկել էր յեկեղեցու փողոցում, ճա-
կատից ու կրծքից գնդակված:

Ի՞նչ անելի չես: Սիրտս ճմլվում եր, Լացը խեղդվում
կողորդումս:

Մանուշը նույնպես անոգնական էր: Մենք իրար հա-
մոզում ու սիրտ եյինք տալիս, բայց ոգևտն ինչ:

Յեկան ավելի ծանր ու դառն որեր:

Հաստափոր Ակոբ դային ներս ընկավ մեր տունը:
Տան «քրեհի» պատրվակի տակ հավաքեց մեր ամբողջ
կայքը: Ի՞նչ անելի, ձեռիս ճար շկար: Քաղցած ու ան-
ոգնական կծկվեցի տան մի անկյունում:

IV

Մի որ հետո ներս ընկան յերկու փափախավոր,
մաուզերներ կապած մարդիկ:

— Լակո՞տ...

— Յես քու ըսենցն ու ընենցը...

— Հերդ ինչ տեղ ա՞...

— Սպանվել ա,—ասի չես աղիողորմ կերպով:

— Սուտ ա... Դրուստն ասա, դրուստը... Յես քու...

Յես սարսափում ելի նրանց արնակալած աչքերից-
հարբած ելին, բերաններից թունդ գինու հոտ էր բուրում:

— Շուն-շան... Յես քու ըսենցն ու ընենցը... ասա,
թե չե...

— Սպանվել ա,—լացակումած վրա բերի յես:

Սաստիկ հիշոցը, անկապ խոսքերն ու գինու թունդ
հոտն իրար ելին խառնվել: Յես ինքս ել ինձ հաշիվ տալ
չելի կարողանում: Շշմել եյի:

Յերկու դամշի սկսեցին դադել մեջքս և ուսազլուխ-
ներս: Դամշիների տակ նրանք ինձ առաջ տվին ու
տարան:



Հասանք մի լերկհարկանի շենքի: Կտուրին յեռագուլն դրոշակ եր քաշ արած: Ներսից հազար տեսակ ձայն ու գողգողոց:

Մի տեղից—

«Մեր հայրենիք, թը՛ր՛ը՛ շվառ, անտեր...»,

Մի ուրիշ տեղից—

«Ա՛յ, դա՛յ, դա՛յ, դա՛յ, դա-դա՛յ, դա-դա՛յ, դա-դա՛յ...»,

Մի այլ տեղից—

«Յես քեզ կասեմ Նազիկ ջան, դու ինձ ասա Արշակ ջան...»:

Բոլոր տեղերից ել խուպոտ ու անկարգ ձայներ:

— Ներս տարան ինձ: Ուսադիրներով մի զառամած մարդու մոտ: Նրա աչքերը ջրակալած ելին ու նայում ժանգոտ ակնոցների տակից: Քթի ծայրն ու այտերի կենտրոնը թունդ կարմիր ելին: Յերևում եր, վոր արաղի հետ շատ եր ընկերություն արել: Ժանգոտ ակնոցների տակից չուած աչքերով ու խուպոտ կակազ ձայնով ինձ դիմեց.

— Ը՛-ը՛-ը՛, ի՛նչ կասեմ, ը՛, ը՛, դրույստն այսա...

— Թե չե՛, — վրա տվին փափախավորները դամշիները շարժելով:

— Ը՛-ը՛-ը՛, ըչՍտյոպան քու հերն ա:

— Այն:

— Ը՛, նա սեր ա հմի, ը՛-ը՛-ը՛, դրույստն այսա: Ը՛-ը՛, թե չե հիշուն ճիպոտ կույտես...

— Նա սպանվել ա:

— Ը՛, սուլտ ես այսում...ը՛ը՛, սյատանի ճուտ...ը՛, ը՛-ը՛-ը՛... Յես քու ըսենցը...

— Դրուստ եմ ասում, դրուստ:

— Ը՛-ը՛-ը՛, հինգ ճիպոտ եզ լակոտին. ը՛...

Ասխղճորեն դադեցին փափուկ տեղերս:

* *

Նուլն ըոպեյին ներս բերին Մանուշին, դզզզված ու պտտառոտված շորերով: Յես սարսուացի:

— Ը՛-ը՛-ը՛, ուր ա հերըդ, ը՛-ը՛, դրույստն այսա, քած.— նրան դիմեց կարմրաքիթ մարդը:

— Զգիտեմ:

— Ը՛, վոնչ չգիտես, ը՛-ը՛-ը՛... Այսա, ը՛-ը՛, թե չե քոթակ կուտեցա. ը՛-ը՛-ը՛,...

— Բա՛շ տանք... — ասավ ինձ բերող փափախավորն իբր նկերոջը, աչքով անելով դեպի Մանուշը:

Յես նորից սարսուացի, մարմինս փշաքաղվեց:

Նրանք իրար յերեսիժ պտացին, ապա դիմեցին կարմր-րաքիթ աստիճանավորին:

— Պարոն գնդապետ, տվեք, մենք դրան կխոստովանեցնենք:

— Ը՛-ը՛-ը՛, տարեք... ը՛-ը՛-ը՛...

Բաշեցին Մանուշի թևից ու դուրս տարան:

Սարսուռը կատաղության փոխվեց: Յես շղաձգվեցի, ինքս ինձ ուտում եյի: Ճար չկար:

— Ը՛-ը՛-ը՛, այսա, լակոտ, ը՛-ը՛, թե չե քոթակով քեժ ըսշպանել կտամ, ը՛-ը՛-ը՛, հերդ վորտեղ ա — նորից ինձ դիմեց կարմրաքիթ աստիճանավորը:

— Ասում եմ, վոր սպանվել ա, ել ինչո՞ւ չեք հավատում, — տաքացած վրա բերի:

— Ը՛-ը՛-ը՛..., ձենըդ կտրի, լակոտ... Յես քու ըսենցը... Հիթչսուն քոթակ սյրան...

Ինձ դուրս տարան չերկու ձեռներիցս բռնած: Կապեցին ձեռներս ու վտտներս, հանեցին շալվարս, ու հարվածներն սկսեցին տեղալ իրար յետևից: Ցաֆն սպանիչ եր: Գալարվում եյի ճիպոտների տակ: Ինձ կորցրի: Մեկ ել ուշքի յեկա մյուս որը, մի նեղ ու խոնավ նկուղում: Մարմինս փետացել եր, ցավից շարժվել չեյի կարողանում:

Նորից հարցաքննության տարան: «Ը-ը-ը» գնդապետը նորից սպառնաց: Նորից ճիպոտեցին:

Մի շաբաթ հետո, յերբ փաստերով համոզվեցին հորս սպանության մասին, ինձ արձակեցին: Ազատվեցի արյունոտ մազիլներից:

Իսկ Մանուշին դեռ տանջում է ինձ սնպատմելի տանջանքներով:

V

Մեռած բան է: Ակոր դային ել ինձ ներս թողնի: Դուռը պինդ փակեց:

— Կորի,—ասավ,—ազգի դավաճանի լակոտին յես տեղ չունես: Ռահիլ, թե չե կտամ անդ ու մանդդ կղզեմ: Բարեկամ չունեցինք: Մանուշենց տանն ել մարդ չկար: Փակ եր:

Սոված ու մերկ թափառում է յի փողոցները: Հաց էլի մուրում: Գիշերում է յի քաղաքային այգում:

Սովածների ու անութեանների թիվը շատ: Ինչքան ասես ընկեր ունեցի:

*
*
*

Ամիս ու կես չանցած՝ նորից սկսվեց կատաղի կռիվը: Նորից գնդացիները կափկափեցին: Գնդակները տեղացին: Թնդանոթ: Մուգիկա: Ուռա՛: Կրկին կատաղի կռիվ: Գնդակ ու գնդացի: Հարձակում: Ուռա՛: Ապա խուճապ:

Վո՛սց ելին փախչում: Փափախ և ուսաղիք իրար էյին խառնվել: Վորը փախավ, վորը կոտորվեց:

«Ը-ը-ը» գնդապետը մինչև փողոց հազիվ եր փախել ու այնտեղ ել կոնակի վրա գետին էյին փռել:

Վո՛նց ուրախացա՛...

Քաղաք մտան: Ամբողջ կոկորդով ուռա՛ա՛ էլի կանչում: Չայնս կտրվեց, բայց խուպոտ կոկորդով էլի քղա՛վում էլի:

Յեռագուլն դրոշը պատուվեց: Տեղը կարծիքը բարձ-
րացավ:

Մերոնք չեկան:

Մանուշի հայրն ել չեկավ:

Հետո բանտից բերին Մանուշին: Նիհարած ու հյուժ-
ված: Աչքերը փոս եյին ընկել: Ճանաչել չեր լինում:
Յես շատ ելի մտածում նրա մասին: Ուղղակի խղճում
եյի նրան:

Մաուզերիստաների կեղտը մաքրվեց:

Որեր անցան:

Մանուշի հայրն ընտրվեց հեղափոխական կոմիտեյի
նախագահ:

Իսկ իմ հայրն անդարձ կորել եր:

VI

Ե՛, տարիներ են անցել այս պատմութիւնից, բայց
յես ամեն ինչ հիշում եմ մանրամասնորեն:

Յես հիմա կոմյերիտական եմ: Արդեն հինգ տարվա
ստաժ ունեմ: Վոչ միայն գիտեմ, թե ո՞վ ե այն միլիոնավ
մարդը, վորը տպված էր հորս գրքում, այլև նրա մի
շարք գրվածքների բովանդակութիւնը գիտեմ: Մանուշն
եւ կոմյերիտական է: Մենք միասին մտանք կոմյերիտ-
միութեան մեջ: Մանուշի հայրը յերաշխավորեց:

Այժմ ել յես չափազանց սիրում եմ Մանուշին: Չնա-
յած վոր նա մեր քաղաքում չէ, բայց միշտ ինձ նամակ-
ներ է գրում: Յես ել նրան եմ գրում: Հետո, ձեզանից
ինչ թագցնեմ, յես ուզում եմ նրա հետ... ամուսնանալ:

Յես հիմա լուրջ կերպով զբաղված եմ ռազմական
գիտելիքներով: Լավ կերպով գիտեմ զնդացիլի բոլոր մա-
սերը: Հրացանով ել լավ կրակում եմ: Այս տարի յերեք
անգամ նշան եմ բռնել Չեմբերլենի սնոնկլին և տարել
մրցանակ: Մի անգամ ել Մանուշն է խփել Չեմբերլենի

մոնոկլին, նրա նկարը «Ավանդարդ»-ումն էլ հենց տպվեց՝ Տեսած կլինեք:

Զմոռանամ ասել, վոր այս աշնանը չես բռնակ եմ գնալու. յերկու ամիս ե մնացել, ել ավելի պիտի կատարելագործեմ ռազմական պատրաստութիւնս, ել ավելի պիտի սովորեմ, վոր չեթե մեկ ել աստիճանավորներն ու փափախավորները փորձեն խանգարել մեր հանգիստը, ձեզ հետ միասին, արժանի պատասխանը տանք նրանց:

ՀՈԿՏԵՄԲԵՐԸ

ԲԱՐՐԻԿԱԴՆԵՐԻ ԶԱՎԱԿՆԵՐԸ

Այս գրքում գետեղված ե Ֆրանսիացի հայտնի գրող Վիկտոր Հյուգոյի «Բարրիկադների վրա» վոտանավորը, ուր քանաստեղծը պատկերացրել ե պատանի կոմմունարի հեղափոխական ազնվութիւնն ու հերոսութիւնը. մահապատժից առաջ պատանին գնում ե մօրը հրաժնշտ տալու ե, համաձայն իր խոստման, ներկայանում ե իր դահիճներին ասելով.

— Յես չեկա... հիմա - գնդակահարեցեք:

Այս փոքրիկ դեպքը ցույց ե տալիս, թե ինչպես պրոլետարիատի զավակներն իրենց հայրերի ու յեղբայրների նման պատրաստ են կռվելու ե մեռնելու բարրիկադների վրա, չեթե այդ պահանջում ե հեղափոխութիւնը:

Յրանսիական Մեծ հեղափոխութիւնը, փառապանծ Պարիզի կոմմունան հարյուրավոր-հազարավոր այսպիսի անձնուրաց ու խիզախ պատանի-կոմմունարներ են տվել:

Այդպիսի հերոսներ տվել ե նաև մեր Հոկտեմբերը: Բազմաթիվ տղաներ ու աղջիկներ, դեռահաս պատանիներ կարևոր զինվորական պարտականութիւններ ելին հանձն առնում, հանուն խորհուրդների իշխանութիւն ա-

գիտացիա եյին մղում, իսկ հարկ յեղած դեպքում — նաև գենքի եյին դիմում:

1917 թ. հոկտեմբերի 15-ին նրանք Մոսկվայում հրակայական ցույց կազմակերպեցին՝ հազարավոր ցուցարարներ խմբելով իրենց զբոսայգիների տակ:

Նրանց զբոսայգիները վրա հեղափոխութեան խիզախ ու մարտական լողուններ եյին գրված. —

— Պատերազմ՝ պատերազմի դեմ:

— Խաղաղութուն — խրճիթներին, պատերազմ — պալատներին:

— Կորչի Կերենսկու բուրժուական կառավարութունը:

Այս ցույցը բավականին վախեցրեց Կերենսկու կողմնակիցներին. ցույց տվեց, վոր պրոլետարիատի յերիտասարդ գվարդիան պողպատե ատամներ, ուժեղ ձեռներ և հեղափոխական կորովի սիրտ ունի:

Ցույց տվեց նաև, վոր Հոկտեմբերի զավակները կարող են կռվել ու հաղթել, իսկ հարկ յեղած դեպքում նաև մեռնել՝ հանուն հաղթութեան:

Ահա ալանատեսի պատմածը՝ Չմեռային պալատի շուրջը կատարված դեպքերի մասին:

«Պատանին, համարյա դեռ չերեխա, վազելով հասավ պալատի ամուր դռներին. այստեղ հրացանն ընկավ նրա ձեռքից սալահատակի վրա, ու պատանին թուլացած նրստեց մայթին, չեղունկներով քարերը ճանկուելով: Ապա նա ձգվեց զբանիտե մայթի վրա, սեփական արչան մեջ, ցընցվեց ու լռեց:

Անշուշտ, մահաբեր գնդակը 10-15 բոպե առաջ երկպել նրան, վորովհետև պալատից այլևս չեյին կրակում:

Սակայն մարտական վոգևորութունը, վոր մահից ելվեր ե, ուժ տվեց նրան մինչև վերջը վազելու, և այստեղ նա մեռավ:

Ահա մի ուրիշ պատկեր Մոսկվայի կյանքից:

— Վարնաշկա, թոխի:

— Ո՞ւր:

— Դեպի կենտրոն:

— Իսկույն, կվազեմ:

Նիհար, 12 տարեկան փոքրիկը լսում է «հրամանները» և սլանում նետի պես. նա վոչ թե վազում, այլ թռչում է դեպի կենտրոնը:

Մութն է. զարհուրելի լե. մեկ էլ տեսար՝ գնդակը վզազց մի անկյունից:

Քրտնրի մեջ կորած՝ վազում է Վարնաշկան ու վախենում — չլինի թե հանկարծ սպիտակ-գվարդիականները տեսնեն նրան:

Յեթե տեսնեն՝ կորած է ամեն ինչ: Կկորչեն և այն թղթերը, վոր կենտրոն է տանելու:

Իսկ այդ թղթերը — գաղտնի լեն ու շատ կարևոր:

Հանկարծ դիմացի անկունից դուրս են գալիս չորս յունկեր*): Վարնաշկան սարսափում է. կորն, — մտածում է նա: — Եհեյ, կանգ առ, այ տղա:

Կորավ ամեն ինչ՝ ինքն էլ, թղթերն էլ. իսկ տանը հիվանդ մայրը լուր է սպասում Վարնաշայի մասին, հոր մասին, ու հանկարծ — վոր նրանց սպանեն:

— Քեռի, թո՛ղ, — լացակումած խնդրում է Վարնաշկան, — թող տուն գնամ:

— Բա վորտեղից ես գալիս:

— Թո՛ղ, Վաղիմ, — գոռաց սպան յունկերներից մեկի վրա, վորը հարցուփորձ էր անում — Վարնաշկային. — մեծ բան է՝ մի տղա լես ճանկել. թող գնա:

— Դե հայդա, — հրեց Վարնաշկային յունկերը. — միայն տես — տուն գնաս, հա՛:

Վարնաշկան զոռ տվեց վոտներին, բայց տան փոխարեն կենտրոնը վազեց:

*) Սպառազան դպրոցի ուսանողներ:

Հանձնեց թղթերը և նոր թղթեր վերցնելով՝ վազեց դեպի իր թաղը: Այսպիսով փոքրիկ Վարնաշկան ծառայում էր մեծ գործին:

Վաղուց չե, վոր հանդիպեցի նրա հիվանդ մորը. հարցրրի Վարնաշկայի մասին: Բանից դուրս չեկավ, վոր պատանին ճակատ ե մեկնել, և վոչ մի լուր չ ա նրա մասին»:

Մեծ գործ կատարեցին պատանիները Հոկտեմբերի նախորդակին:

Բանվորների յերեխաներից մարտական «տասնյակներ եյին կազմակերպվել:

Կերենսկին թագնվել եր Զմեռային պալատում. նրան պաշտպանում ելին չունկերներն ու կանանցից կազմված վաշտերը:

— Դեպի Զմեռային պալատ:

Զինված բանվորական վաշտերի չետևից զնում են նրանց զավակները:

Նրանք կապ են պահպանում, զենք են տեղափոխում, ոգնում են մեծերին:

Մոսկվայի փողոցներում արյունահեղ ընդհարումներ են սկսվել:

Գնում են մեծերը, նրանց չեակից՝ պատանիները:

Պսևովի ուղղությամբ առաջ են շարժվում գերմանացիները:

Գիշերն անհանգիստ սուլում են գործարանների շրջակները:

Մի ակնթարթում հավաքվեցին զինված բանվորներն ու բանվորուհիները՝ հեղափոխությունը պաշտպանելու. նրանց հետ են նաև իրենց հեղափոխական զավակները:

Ահա շարք են կանգնել պուլտիլովցիները, շիսսելբուրգի ռաչոնի բանվորները:

Ամենուրեք՝ աջից, ձախից, առջևից վխտում են պատանիները:

Փոքրիկները լերկար, գորշ շինելներ են հագել, հրացաններն — իրենցից յերկար են:

Նրանք գիտեն, վոր մեռնելու լին գնում:

Նրանց մարտական մկրտությունն եր այս, վոր կռեց ու կոփեց հետագա պայքարի համար:

Բրեստի կարճատև դադարից հետո բանվոր պատանեկությունն անցավ ուսուցման, վարժությունների:

Յերիտասարդության համար կենտրոնական քաղաքացրոց կազմակերպվեց:

Միության ակտիվը Մարքս ու Լենին ե ուսումնասիրում:

Բայց լերկար չտևեց ուսումն ու գիրքը:

Յերկիրը սովի լե մատնվել:

Քաղցից մեռնում են բանվորները, նրանց ընտանիքները:

Պատանի հեղափոխականները հացառատ վաչրերն են գնում: Պարենավորման վաշտերն են մտնում աշխատելու համար:

Նրանք պատմում են գյուղացիներին, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը ազատություն տվեց վոչ միայն բանվորներին, այլև գյուղացիներին:

Հոկտեմբերյան հեղափոխությունը քշեց կալվածատերերին և հողը գյուղացիներին տվեց:

Պետք ե ոգնել բանվորներին ու կարմիր-բանակայիններին, պետք ե հաց տալ նրանց, ովքեր արշուն են թափում աշխատավորության, գյուղացու և բանվորի գործի համար:

Դարձյալ դադար. դարձյալ գործի լեն անցնում — սովորում են:

Նրանք գիտեն, վոր՝ առանց գիտության կոմունիզմ չկա:

Բայց լերկար չտևեց դադարը:

Սկսվեցին քաղաքացիական կռիվները. թշնամին, չորս

կողմից հարձակվում ե խորհուրդների հանրապետութեան վրա. բայց նրանց դեմ ամենուրեք պրոլետարիատի կորովի կամքն ու լերկաթե բռունցքն ե ցցվում, և ամենուրեք պարսպի պես կանգնած են պատանի շարքերը:

Բանվոր պատանեկութունը լավագույն հետախույզներ ե ուղարկում ռազմաճակատ:

Պատանեկութեան պարտիզանական խմբերը*) դիշեր ու ցերեկ հանդիստ չեն տալիս թշնամիներին:

Յեւ կովի դաշտում շատերն ընկան պատանիներից. նրանք չլքեցին իրենց դիրքերը:

Ահա և կրկին համեմատաբար հանգիստ ե: Բանվորագյուղացիական յերկիրը խաղաղ շինարարութեան ե անցել:

Ուժեղանում ե գյուղատնտեսութունը. կենդանանում ե քաղաքի արդյունաբերութունը:

Ամեն տեղ նոր մարդիկ են պետք՝ կառուցողներ, մարտիկներ, հոկտեմբերյան ավանդների հավատարիմ ժառանգորդներ:

Աճում ե կոմմունիստական Յերիտասարդութեան Միութունը—

Ընկածներին ու հոգնածներին փոխարինողները—

Սոցիալիստական շինարարութեան վոգով տոգորված սերունդը—

Ապագա կոմմունիստական հասարակակարգի մարտիկները:



*) Թագստոցից թշնամու վրա հարձակվող, նրան մեծամեծ զնաններ պատճառող փոքրիկ, ինքնուրույն խմբակ:

ԼԱՎ ՈՐԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳԵՂ. ՍԱՐՅԱՆ.

1

Հազար կնճիռ ունեք հոր ճակատը նրա,
արևախառն դեմքին ժպիտ չկար բնավ,
հույսը դրած իրա բազուկների վրա,
նրա կյանքը ծովում հուսակտուր մի նավ:

Վորդին դեռ պատանի, տասչորս պարուն տեսած,
հազար սոված որեր ու տանջանքներ հողու,
դառնութուն ու զրկանք հոր հետ հայալ կխամծ,
նւր եր գգվանք ու կյանք ծնողի և վորդու:

Սպրում ելին նրանք հետին մի փողոցում,
վորդին, հայրը բանվոր, մեկ էլ մայրը պառավ,
իրենց խարխուլ ու հին հողաշեն խրճիթում,
ուր վոր կյանքը նրանց պատիժ ու մահ դառավ:

Ուր վոր չկար արև, ուր վոր ծիծաղ չկար,
ուր կարիքն եր թքում իրենց սև պատերին,
ուր ձմեռվա բուքին մի կտոր ցախ չկար,
ու մամուռ եր բուսել իրենց հին կտուրին:

2

Աշնան ցուրտ քամին ե հեծկլտում դրսում,
մութն արդեն ընկավ, բայց դեռ հայրը չկա,
խոնավ հին խրճիթում դեռ դողում են, մրսում,
սպասում են նրանք, սինչև վոր հայրը գա:

Մեկը մայրն է պառավ, մեկը վորդին ջահել,
սպասում է մեկը վաղվա գալիք մահին,
մեկը սիրում է միշտ կյանքին ուրախ նայել,
ու խորթ լինել կյանքում սարսափին ու ահին:

Մեկը իր վողջ կյանքում չի խնդացել ընավ,
քաղցին ու մերկութիւն յեղել ե միշտ գերի,
մեկը փրփուր ծովում ասին հասնող մի նավ,
հուսով ե, վոր կյանքը լավ որեր կբերի:

Մակաչն ուշ ե արդեն, լուսինն հըր չելավ,
դրսում արթուն են լոկ վոստիկանն ու քամին,
քամին վոստիկանի խուլ սուլոցը բերավ,
— Ինչո՞ւ հայրը չեկավ գիշերվա ես ժամին:

3

Ամուր խփում ե նա խրճիթի հին դռան,
վճռական են նրա հարվածները հատու,
ինչ-վոր մի ուժ ալսոր կյանք ե տվել նրան,
նման ե նա կովում հաղթանակող մարդու:

Ահով բաց ե անում դուռը՝ կինը նրա,
չելնում ե հոր դիմաց վորդին իր պատանի,
կարծես ծիծաղում ե տանջված դեմքը նրա,
խսկ դրսում դեռ սուլում, սուրում ե մի քամի:

— Ուրախ յեղիր, կնիկ, լավ որեր պիտի գան,
պիտի կռիվ լինի տիրոջ ու բանվորի,
պիտի փշրենք շուտով ամեն շղթա, կապանք,
պիտի պատրաստ լինենք եդ մեծ կովի որին:

Պիտի խլենք շուտով հարուստների ձեռից
ամեն ինչ, վոր ունեն մեր քրտինքով դիզած,
ու ազատենք մեզ ել տանջանքների բեռից
ու կոտորենք՝ թեկուզ կյանքներին հլ թքած:

Ու լսում ե վորդին հիացմունքով արի,
ուզում ե, վոր շուտ գան այդ որերը յեռուն,
ինքը հոր հետ դուրս գա ու դրոշակ պահի,
մաս ունենա ինքն ել եդ որվա մեծ կովում:

Եդ բանվորի վորդու մտքով ինչե՛ր շանցան,
վոսկի յերազներով ցուրտ խրճիթը լցվեց,
մինչև հոգնած գլխով քնի գլորկն անցավ
ու քնի մեջ տեսավ գալիք որը մեծ:

Տեսավ՝ թռչում ելին գնդակները հրե,
ուռմբեր ելին պայթում պալատների վրա,
մի բռունցք եր կախվել պալատներից վերև,
եդ բռունցքը կարծես հոր ձեռն եր իրա:

Տեսավ իրեն՝ սիրուն, կարմիր շորեր հագին,
բազմահազար ջահել աղջիկներ ու տղերք,
առջևումս եր կանգնել ինքը եդ մեծ շարքի,
լսվում եր շատ խրոխտ ու հաղթական մի յերգ:

Ոոնարհվեցին իրենք եդ բռունցքի դիմաց,
ու խոսք տվին լինել նրան միշտ հարազատ,
եդ բռունցքի նման ամուր ու միացած,
եդ բռունցքի նման վճռական ու ազատ:

Թնդում ե փողոցներում անեղագոչ վորոտ,
ճայթում են գնդակներ անթիվ ու անհամար,
զինված դուրս են լեկել բանվորները, վորոնք
կռվում են յերկիրը ձեռք բերելու համար:

Դուրս յեկավ գիշերով նրա հայրն ել եդ որը,
վոտքից մինչև գլուխ գենքերի մեջ, պատրաստ,
վորդին յերկար խնդրեց ու աղաչեց հորը,
վոր իրեն ել տանի եդ որը կռվի դաշտ:

Բաց խրատեց հայրը ու համոզեց մնալ,
ասաց՝ պիտի տեղա գնդակների տարափ,
չբարձրանա կտուր ու փողոց չգնա,
փողոցները լի յեն եսոր մահ ու սարսափ:

Թնդում ե փողոցներում ահեղագոչ վորոտ,
 ճալթում են զնդակներ անթիվ ու անհամար,
 զինված դուրս են լեկել բանվորները, վորոնք
 կռվում են լերկիրը ձեռք բերելու համար:

6

Գնդակներն են վղղում փողոցներում ահա,
 և սուլում ե ուրախ հոկտեմբերի քամին,
 դուրս ե լեկել փողոց մի պատանի անահ,
 ուր ե գնում արդյոք ես ահուելի ժամին:

Գնում ե նա ենտեղ իրեն հորը գտնի,
 գնում ե, վոր հասնի եզ արյունոտ կովին,
 գուցե ինքն ենտեղ պիտանի կլինի,
 ջուր կբերի, կոգնի կովոյ ընկերներին:

Անցնում ե ծուռումուռ փողոցներով հետին
 ու թեքվում ե ահա բանուկ մի մեծ փողոց,
 ուր դիակներ կալին փռված սառը գետնին,
 ու լսվում եր ուժեղ՝ ահավոր մի սուլոց:

— Կանգնիր, ո՞վ ես,— գոչեց սարսափ ազդող մի ձայն,
 ու մոտեցան նրան լերկու. զինված մարդիկ,
 նրանք իր հոր նման ունեյին. հրացան,
 հագել էյին հոր պես դեղին անդրավարտիք:

Նրան թվաց՝ իր հոր ընկերներն են նոքա,
 ու թվաց, թե նրանք գիտեն իրա հորը,
 ու կարծում եր՝ հիմա իրա հայրն ել կգա,
 չվախեցավ, պատմեց համարձակ բոլորը:

— Իմ հայրն ել ձեզ նման կովոյ բանվոր ե մի,
 նա չել գնաց կովի լավ որերի համար,
 ուզում եմ, վոր չես ել ենտեղ լինեմ հիմի,
 ու ոգտակար լինեմ եզ մեծ կովի համար:

Եղպես խոսում եր դեռ, վորոտաց մի ապտակ,
 ու պատանին փռվեց պաղ մայթերի վրա,
 ու շառաշով կպավ մոսիխի մի գնդակ,
 և քարերը ներկեց մուգ արյունը նրա:

Եդ փողոցում հողմը մահր յերգեց նրա,
 արևը համբուրեց ճակատը դժգունակ,
 քամին լսեց միայն վերջին ճիշը նրա,
 մեկ ել կողքի քարը ցուրտ հատակին քնած:

7

Տուն եր դառնում հայրը հաղթանակով արի,
 սուլում եր հողմի հետ նա լել ուրախ մի յերգ,
 աչքը ընկավ հանկարծ արյունոտ մի քարի,
 ու եդ քարի վրա արյունոտած մի ձեռք:

Յերբ մոտեցավ քարին, հեկեկաց նա բարձր,
 տեսավ արյունաներկ դիակն իր վորդու
 ու կռացավ, գրկեց գորովանքով քաղցր,
 գլխիկոր ու տրտում տարավ նրան իր տուն,

ուր վոր չկար արև, ուր վոր ծիծաղ չկար,
 ուր կարիքն եր թքում իրենց սև պատերին,
 ուր ձմեռվա բուքին մի կտոր ցախ չկար,
 ու մամուռ եր բուսել իրենց հին կտուրին:

Դուռը հրեց վոտքով ու ներս մտավ նա տուն,
 և դիակը դրավ մերկ սեղանի վրա,
 մայրը ճչաց ցավից գրկեց մեռած վորդուն,
 համբույրներով ծածկեց սառած դեմքը նրա:

Հայրը կանգնել եր լուռ, շրթունքները սղմած,
 ուզում եր, վոր լացը ատամներով պահի,
 քամին աղմկում եր դրսում բերանը բաց
 ու աշխարհին ուրախ ավետիս եր տալիս:

— Լաց մի լինիր, կ'իկ, մնա հանգիստ, արի,
հաղթանակը տարանք ես մեծ որվա կռվում,
վերջին շապիկս առ, վորդուս պատան կարի,
այսորվանից կյանքը մեզ նոր բախտ ե կռում:

Այսորվանից մեռավ ամեն տանջանք ու մահ,
հազար նոր սերունդներ պիտի հիշեն հավետ
նրանց, վոր մահացան, բայց մնացին անմահ,
մեր վորդուն ել մեռած՝ եդ քաջ բյուրերի հետ:

ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ՀՈՒՆՎԱՐԻՆ

ԽՈՒՍԱՆԻՆ-ԲԵԼՅԱՅԵԿ

(Գրոներ)

1

Կռվի տաք ժամանակն եր: Մոսկովսկայա փողոցում
արդեն այրվում ելին միքանի խանութներ, խանութնե-
րում բուն ելին դրել կազակները: Նրանք թնդանութնե-
րով ու գնդացիներով անդադար ուժակոծում ելին ամ-
բոցը: Կարմիր-զվարդիականներն ել իրենց հրացաններից
եյին կրակում: Մեր թշնամիները թնդանութներ ու գնդա-
ցիներ ունեյին, իսկ մերոնք բոլորը հրացան ել չու-
նեյին:

Նավահանգստի բանվորները նիզակներ ելին պատ-
րաստում: Կռիվն սկսվեց 1918 թվի հունվարի 12-ին, զի-
շերվա ժամը 3-ին:

Ամբոցի ցանկապատին պառկած կրակում ելին:
14—15 տարեկան չերեխաներ վազվզելով փամփուշտ ե-
լին տալիս արկղներից:

— Ե՛յ, Կուկա, շո՛ւտ, փամփուշտ տո՛ւր եստեղ, հրեն,
յես մեկին դուրս քշեցի կտրիցը, տես, վոնց ե ընկնում:
Իսկապես, տանիքից թռավ մի կօզակ՝ գնդացիը զը-
ցող: Յերեխաները կարմիր-զվարդիականներին փամ-

փուշտներ եյին տալիս: Կեսորին մոտ կոիվը դադարեց. յերկու կողմն ել հանգստանում եյին: Ամբողջի զանգակատանը գնդացիի մոտ պահակ եր կանգնած:

2

Կարմիր-գվարդիականներն ու յերեխաները խմբվեցին և սկսեցին կաթսայից սև հացով շիլա ուտել:

— Տղերք,—ասաց մի կարմիր-գվարդիական,—եկեք եղ խանութը, կազակներն ել հետը, կրակ տանք:

Սանութը ամբողջի դիմացն եր: Նրա վերին հարկում գտնվում եր «Կայծ» կինո-թատրոնը:

— Ապա ո՞վ կգնա, ո՞վ սիրտ կանի կյանքը զոհել:

— Յես,—աղաղակեց ցարեցի*) Սասյանը, տասնչորս տարեկան մի տղա:

Հրամանատարը խփեց Սասյանի թիկունքին, հետո համբուրեց նրան և ասաց.

— Լավ, կգնաս, յես քեզ մի աման նավթ կտամ, դու ներքին հարկի դուռն ու պատշգամբն այրի, իսկ մենք այստեղից մեքենայով նավթ կշարտենք:

Գիշերն սկսեց լի՛նել, իսկ ամբողջից ամբողջ Աստրախան քաղաքը լերևում եր: Նախկին Մոսկովսկայա (այժմ Պորհրդային) փողոցում տներ և խանութներ եյին այրվում: Բոցը կարմիր լեզուներով բարձրանում եր դեպի յերկինք: Լսվում եր, թե ինչպես ճարճատյունով փլվում եյին տները:

— Դե, Սասյան, ա՛ռ, վերցրու,—ասաց հրամանատարը և մի աման նավթ տվեց նրան:

Սասյանը հանդիստ դուրս յեկավ ամբողջից: Ամբողջի դիմացի փողոցը լա՛ցն ե. Սասյանն ստիպված եր անցնել: Դեռ չհասած այն խանութին, ուր գտնվում եյին կազակները, և վորը նա պետք ե այրեր, նա կանգ առավ փողոցի անկյունում:

*) Ճարեը Աստրախան քաղաքի մի թաղն ե:

«Առաջ վճրն այրեմ, դո՛ւռը թե պատշգամբը: Առաջ պատշգամբը, հետո կիջնեմ և դուռը կվառեմ» — ստածում եր նա:

Նա հագիվ կարողացավ լուցկին վերցնել, յերբ հանկարծ մի գնդակ սուլելով թռավ նրա ականջի մոտով: Նա պառկեց մալթի վրա, բայց հաջորդ գնդակը թռցրեց նրա գլխարկը: Նա շտապ վերցրեց նավթի ամանը և նավթի կեսը շաղ տվեց դռան վրա: Հետո ամանը վերցրեց և ձեռքին բռնած սկսեց բարձրանալ պատշգամբը: Բարձրանալը շատ դժվար եր, մի կողմից ել գնդակներն ելին վզով: հագիվ բարձրացավ, ամանը դրեց անկյունում, ինքն ուզում եր ճագերի վրայով անցնել սշատշգամբը, վոր հանկարծ պատշգամբի դուռը բացվեց, ենտեղից դուրս յեկավ մի նիհար, բարձրահասակ կազակ սպա, կանաչ համազգեստը հագին և ուսադիրներ կայցրած:

Սպան ատրճանակը հանեց և կրակեց Պասյանի վրա, բայց ատրճանակը չտրաքեց:

Պասյանը հանեց իր ատրճանակը և կրակեց սպային: Վիրավոր սպան ընկավ պատշգամբում: Պասյանը շտապ վերցրեց նավթը, շաղ տվեց պատշգամբում ու պատշգամբի դռան վրա և լուցկով վառեց. հետո ցած թռավ, ընկավ, վերկացավ, վերցրեց լուցկին և ներքևի դուռը վառեց: Ինքը կազալով վազեց դեպի ամրոցը: Յերկրորդ հարկից թռչելիս նա սաստիկ ջարդել եր վտաքը:

3

— Ե՛, Պետրով, հավանականաբար Պասյանին սպանեցին, — ասաց հրամանատարը:

— Այո՛, շատ ուշագավ. լավ տղա չեր:

Կռիվը տաքացել եր. կազակների ուումըրը դիպավ ամրոցին, բայց շատ չփնասեց: Միայն միքանի քար ընկավ:

— Տղերը, տղերը, մի նայեցեք, — աղաղակեցին միա-

սին խոստանին և Ահմեդը. — խանութն ու կազակներն այրվում են:

— Կեցցե խասյանը, հրդեհել ե, — աղաղակեցին մյուսները:

— Տղե՛րք, — աղաղակեց հրամանատարը, — տակառից նավթ լցրե՛ք:

Իսկուհն յերեք կարմիր-գվարդիականներ սկսեցին մեքենայով նավթ շարտել փողոցի մյուս կողմի չեղող այրվող խանութի վրա: Խանութի հատակն ու առաստաղը պահող գերանները կրակից կարմրել էլին: Պատշգամբը բոցավառվում եր շահի նման: Բոցի լեզուներն արդեն հասնում էլին տան վերին հարկին: Պատուհաններում չերևում էլին այրվող կազակների կերպարանքները: Նըրանք կատաղած այս ու այն կողմն էլին վազում, վոմանք վազելիս ընկնում էլին մայթի վրա և ել վեր չէլին կենում: Միքիչ ժամանակից հետո պատշգամբը դղրդյունով ցած թռավ: Այրվող խանութից դեռ էլի կրակում էլին կազակները, ուզենալով վերջին բոպելին ել սպանել իրենց թշնամիներին — կարմիրներին:

4

Խասյանի ձեռքին գնդակ կալավ: Նա ամբողջովին արյունաթաթախ ընկավ ամբողջի մոտ, մայթի վրա:

Սկսեց լուսանալ: Տներից միքանիսը այրվում էլին, միքանիսը ծխում և դղրդյունով փլվում:

Առավոտը ամբողջից դուրս յեկան և խասյանին գտան անզգա ընկած: Նրան տարան ամբոց, վերքը կապեցին: Կեսուրին մոտ նա ուշքի չեկավ: Սկսեցին հարցուփորձանել նրան: Կարմիր-գվարդիականների շինելներն ու գլխարկներն ամբողջովին ծակծկված էլին կազակների գնդակներից: Տան տերն ասաց կարմիր-գվարդիականին.

— Քեզնից հետո չերեք ընկերներ մեռան: Կազակների գնդակներն սպանեցին Միշկային, Կոլկային և ցա-

ընդի թուրքին: Միշկան մեռնելիս ասաց. «Կեցցե Սասանը, մերոնց ազատում ե կազակների գնդակներից»: Իսկ Կոլկան ասաց. «Ընկերներ, չհուսահատվեք, միահամուռ ուժերով առաջ գնացեք»: Ես խոսքերն ասացին ու մեռան:

Սասանը լսեց և լաց չեղավ, վորովհետև Կոլկան եր նրան իր հետ ամրոց բերել և նրա հետ միշտ լավ եր վարվում:

* * *

1918 թվի հունվարի 25-ին Աստրախան քաղաքը մաքրվեց կազակներից:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՍԵՐՈՒՆԴԸ


Ա. ԺԱՐՈՎ

Գնում եմ: Քաղաքից հեռու:
Ծառեր ու թփեր ճամպիս վրա...
և ահա կանաչ թփերում
կարծիր դրոշներ ու ճերմակ վրան:

Ճամբարն ե պիտներական
հենց այդտեղ արևի տակ,
աղվում ե ժրաջան,
վորպես մեղվի փեթակ:

Կամաց, աննկատելի
մոտենում եմ մի վրանի,
վորի առջև շարվել են
տասնհինգ պատանի:

Հուլիսյան արևը վառ
մաղում ե լույս ու կրակ,
ժպիտ ե ցնցուղում վար...
ուրախ, աշխուժ են նրանք:



Ամենից աշխուժն ահա
 չելնում ե մի կոճղի վրա,
 ճառել ե սկսում նա,
 մյուսները լսում են նրան:

— «Կովարը, սկսում ե նա,
 դեռևս չի յեկել, չկա.
 նրա փոխարեն հիմա
 յես խոսեմ, մինչև նա գա:
 Ընկերներ, ասում ե նա,
 արդեն անցել ե տասը տարի,
 վոր մենք, բանվորներս,
 տապալեցինք ցարին...
 Բոլորդ հիշում եք, իհարկե,
 ինչ դաժան որեր եյին.
 դժոխքը նույնիսկ փառք ե,
 մեզ անգուլթ կոտորում եին...
 քաղցով եյին սպանում,
 աքսորում Սիբիր,
 փտեցնում բանտում...
 իսկ հիմի...» —

ալստեղ աչքերը նրա
 վառվիցին, պայծառացան,—
 «իսկ հիմի ուր են նրանք,
 գնացին, անցան:
 Ո՛ւր են բուրժուլ, գեներալ,
 ցար ու վոստիկան,
 ու բոլոր նրանք,
 վոր մեր արյունը,
 ծծեցին ազահ...
 Հենց դրանց դեմ եր,
 վոր կովի յելանք
 ու մեր արյունը հոսեց
 ինչպես սելավ:

Մենք, բանվորներս,
կարմիր Հոկտեմբերին
հենց մեր արյունով
աղասություն բերինք...»:

Յես ինձ մենակ զգալով՝
ցավեցի սրտանց
և ապա աղմկող քայլով՝
ժողովեցա նրանց:

Մոտեցա կանգնած
փոքրիկ հուետորին
ու մեկից, հանկարծ՝

— «Լսիր, այ փոքրիկ,

քանի՞ տարեկան ես,—

հարցրի նրան,—

և վճռտեղ ես տեսել

զեներալ կամ վոստիկան...»:

— «Յե՛ս. հազիվ տասը տարեկան:

Յեղբայրս եր նրանց ատուժ

ու հենց նրանց ղեմ ընկավ

կռվի մեջ, խրամատուժ...»

Յեղբայրս ատել ե,

ատուժ եմ յես ել,

յես չեմ տեսել ղեներալ ու ցար՝

հենց դրանից եմ ուրախ,

վոր յես չեմ տեսել...»:

Յեմ թնդացին ծափեր ու ծիծաղ:

«Ձուր խառնվեցի»—

խորունկ խոհերով

ինքս ինձ ասի

ու վերադարձա

հպարտ խորհելով

Հոկտեմբերի այս

սերնդի մասին:

Թարգմ. Վ. Նուրեմց

ԱՌԱՋԻՆ ՊԻՈՆՆԵՐԸ

Ա. ԱՐՈՍԵՎ

Մարինյան անտառ: Տուգոժի փակուղի: Բայց տան համարը մոռացված է, վորովհետև այդ տունը արդեն քանդված է հարևան տների վառելափոյտի համար: Այդ տունն էլ չի յեղել, այլ ինչ-վոր խուղ, խրճիթ՝ կեղտոտ և հին արմատներով խրված հողի և աղբի մեջ:

Նիկոլը, — սաստիկ շեկ, համարյա թե ճերմակ աչքերով մի տղա, — ամեն որ կանուխ լուսադիմին, կալտառ և ուրախ դուրս եր գալիս այդ տնից և վաղուժ դեպի տպարանը, ուր տպվում էր «Կոպեկ» լրագիրը, վերցնում էր նոր տպված, կեղտոտ լրագրի համարները և վաղուժ դեպի հրատարակները: Ազդարարելով որվա նորութունները Մոսկվայի նոր զարթնող բնակիչներին, ստանում էր լրագրի գինը՝ մի պղնձե կոպեկը:

Յերեխան ապրում էր այդ քանդված խրճիթում իբր խորթ հայր՝ կոշկակարի հետ: Իր հալաղատ հորն ու մորը նա չեր հիշում:

Կոշկակարը վատառողջ էր, գյուրագրգիռ, նիհար և բարձրահասակ:

Իմիջի ալոց, նա յերբեք չեր խայլին չեր ծեծում չեր էլ փաղաքշում:

Մի անգամ, ցեխոտ աշնանը, անձրևային մի որ տրդան թրջված և դատարկածեռն վերադարձավ տպարանից, լքագիրը, ասում են, լույս չի տեսել...

— «Կոպեկը» լույս չի տեսել, լավ ուրեմն պետք է վազել դեպի «Ռուսական խոսք» լրագրի տպարանը:

Բակում, վորտեղ կիտված էին տպագրական թղթի հակերն առանձին ծածկի տակ, տղան լսեց տպագրական մեքենաների ծանոթ աղմուկը և տեսավ մի խումբ հին լրագրավաճառների:

Շնչով տաքացնելով ձեռները՝ տղան ունկնդրեց նրանց:

Ամենահին լրագրավաճառը՝ կուզիկ և թորշոմած մի ծերուկ՝ նկատեց տղային.

— Դու ի՞նչ ես ուզում, փսխքո՛ւտ:

— Յես լրագրավաճառ եմ, ուզում եմ «Ռուսական խոսք» ստանալ վաճառելու:

— Լույս չի տեսնի:

— Իսկ հետո՞:

— «Իսկ հետո» կորի՛ր այստեղից, — բարկացավ հին լրագրավաճառը:

Տղան վախկոտ չեր: Յեվ յերբ տեսնում եր, վոր պառապներն ու ծերուկները բարկանում են, նա միշտ ուրախանում եր: Իսկ հետո այդ ուրախութունը փոխվում եր մի տարրերինակ, յերկարատև տխրության: Յերբ նա ուրախ եր, չեր մտածում հետագա տխրության մասին:

— Ի՞նչ կա վոր, կգնամ, միայն թող լրագիր ըստանամ:

— Իսկ վզակոթիդ չե՞ս ուզում ստանալ, — գայրացավ ծերուկը. — քեզ ասացի, վոր լրագիր չկա:

Յերեխան թաղցրեց դեմքը վերարկուի բզկտված թևքի մեջ, վորտեղից միայն նրա ժիր աչքերն եյին նայում ծեր լրագրավաճառին:

Իսկ դձևք ինչու չեք սպասում:

Ծերուկը դեռ չեր պատասխանել տղային, յերբ առաջ կանգնածներից մեկը ինչ-վոր բան ասաց, և բոլոր լրագրավաճառներն առաջ շարժվեցին, տպարանի նեղ դռների մեջ իրար սեղմելով: Համարյա թե նույն ըոպելին արգեն տպարանից դուրս եյին վազում բեռնավորված թարծ թերթերի դաստաներով, վորոնք, սակայն, լրագրերի նման չեյին:

Տղան մի շրջան արեց բակում այնպես, վոր ծերուկը նրան չնկատի, և մյուս լրագրավաճառների հետ խրց-

կըվեց ներս, ուր թերթերն ելին բաժանում: Նա գիտեր, թե ինչպես են լրագիր հանձնում վաճառելու. իսկ այդտեղ, հանկարծ, առանց վորևե հարցուփորձի՝ թե ով ե նա, առանց փող պահանջելու, իրեն են հանձնում թերթերի մի կույտ:

Թերթերը վերցնելով փողոց վազեց և փողոցի՝ դեռևս վառվող լամպի տակ կարդաց.

«Զինվորներին» — և ապա ելի ինչ-վոր գրգռիչ, կովարար խոսքեր:

— Ինչո՞ւ կանգնեցիր, վազիր, — գոռաց մեկը:

— Ո՞ւր:

Դեպի գորանոցները: Դրա համար կվարձատրեն հետո: Կարևորն այն է, վոր այդ թերթերը շուտ բաժանես. շտապիր:

Պոստղը մի լրագրավաճառեր՝ շեկլիկ բորիկ վոտները կոխել եր մեծ կրկնակոշիկների մեջ և քարշ եր տալիս:

— Վազիր, վազիր դեպի գորանոցները, — կրկնեց նա: Յեվ յերկուսով սկսեցին վազել:

Տղան վազում եր՝ ընկնելով և բարձրանալով: Նրա շնչառութունը ծանրացել եր: Քաղցը սաստիկ նեղում եր:

— Քեռի, — կանչեց նա իր առջևից սահող կրկնակոշիկների լետևից, — լես ընկնում եմ...

— Ինչո՞ւ, — հարցրին «կրկնակոշիկները» շարունակելով իրենց խելագար վազքը մայթի վրայով, — փորդ սոփած ե, ի՞նչ է:

— Սոված ե, փորս ել, գլուխս ել, վոտներս ել:

— Ա՛ռ, — կանգնեց շեկը և նրան յերկարեց մի կըտոր չոր հաց և կրծած դադարի մի կտոր:

Տղան վազելով կրծում եր և կուլ տալիս:

Վազեցին մինչև գորանոցները: Դարպասները բաց ելին կրնկի վրա: Պահապաններ չկային: Բակում կանդնած եր այն ծեր լրագրավաճառը, վոր տպարանում բարկացավ սողայի վրա:

Շեկը վաղեց դեպի նա:

— Շատ արագավազն ես, Խրեն Իվանիչ, բաժանեցիր:

— Բաժանեցի, — արհամարհանքով փնթփնթաց ծերը:

Տղան և շեկը համենայն դեպս նկատեցին թերթերի կուլտը ծերի վոտքերի առաջ թափված: Բամին ցրոււմ եր թերթերը, և անձրևը քրքրում եր առանց այն ել քրքրված թղթերը:

— Վճրտեղ են զինվորները, հարցրեց շեկը և հայացքն ուղղեց զորանոցների բաց ու դատարկ պատուհաններին:

Շեկը պատասխանի չեր սպասում: Բայց հանկարծ, կարծես թե գետնի տակից, լսեց պատասխանը:

— Զինվորները գնացին այս դիշեր, հետները վերցրնելով գենքի մեծ պաշար:

Ոոսողը զորանոցի մթերապետն եր, վորը դուրս եր սողում զորանոցի ներքնահարկի լուսամուտից.

Գորտի նման ձգվելով նա իրեն դուրս նծեց նկուղից հենց ծերի թափած թերթերի մոտ և հալցրեց.

— Այդ ինչ ե:

— Տեր աստված, — աղոթող ձայնով վրա բերեց ծեր լրագրավաճառը, — բողբոլում են մարդիկ... Գնացել են զորանոցից: Իսկ այս թուղցիկներում նրանց դրում են՝ «Յեղբայրակիցներ, դուրս մի գաք զորանոցներից»: Ըմբոստանում են մարդիկ: Ի՞նչ են ուզում: Բայլ շեփակալան կյանք ե նրանց հարկավոր: Մի՞թե միևնույնը չե: Ելի պիտի ապրեն, քնեն և մեռնեն: Մի՞թե բալլ շեփակները մարդու կյանքը յերկարացնում են դարբերով. մի՞թե...

— Ավելացնում են, — կտրեց տղան ծերուկի խոսքը և պահեստապետի ու շեկ լրագրավաճառի խոնարհ և հանգիստ լուռթյունը:

— Ախ դու, փո՛ւչ, — կատաղեց ծերը և կոացավ քար վերցնելու: Սակայն քարը ամուր եր, և ծերուկի չորացած

ու կապտած ճանկերը շկարողացան քարը պոկել գետնից։
Տղան փախավ մի կողմ։

— Անիծվածներ, — գոռաց ծերը հուսահատված և աչքերը խոժոռեց՝ անդոր շարությամբ՝ տղայի վրա։

— Ահա խառնակիչները, — գոռաց մթերապետը։ Յեւ Նա ու ծերուկն ընկան տղայի չետնից։ Ծերուկի գլխից ընկել էր տրորված գլխարկը՝ բաց անելով նրա սեխանը-ման, յերկարավուն և ճաղատ գլուխը...

— — —

Տղան տեսավ, թե ինչպես իր առջևից միքանի քաջ հեռավորությամբ սողում էին ցեխոտ գետնի վրայով մոտ 30 զինվոր։ Կողքից, մայթի վրայով ընկնելով և յեւնելով առաջ եր գնում զինվորների հետ նրանց հրամանատարը։ Նրա ով լինելը տղան իմացավ հրամաններից, վեր տալիս եր զինվորներին, և զինվորները նրան լսելով մեկ դեպի աջ, մեկ դեպի ձախ էին վազվզում և գետնի վրա սողալով առաջ գնում։

Մի ակնթարթում զինվորները պառկեցին. հրացանները հարմարեցնելով սկսեցին կրակել։ Նրանց հրացանաձգության պատասխանեց մի այլ հրացանաձգութուն, և տղան բնագոգար ընկավ մայթի վրա՝ աջ կողքով հավելով պատին։ Նրա կողքին նույն դիրքով պառկած եր նաև սպան։

Նա գոռում էր, ամեն կերպ աշխատում հրացանների վորտաի մեջ իր ձախը լսելի դարձնել զինվորներին։

Հանկարծ սպայի գոռոցը ձգվեց, չերկարեց, կարծես յերգում էր, և ապա ձախը խզվեց։ Նա ձեռքը բարձրացրեց, մի կողմ դրեց աթոռանակը, շուռ յեկավ աջ կողքի վրա և ընկավ անձրեաջրի մեջ։ Անձրեաջուրը շաղ չեկավ։ Նույն վայրկյանին, մոտիկ դարպասից իրար չետնից ողի մեջ հրացաններ վորտացին։ Սպայի վորտը վերավորված եր, Զինվորները նետվեցին դեպի դարպասները։ Փակ ե-

յին: Սկսեցին հրել: Դռները ճռճոացին և ճարճատուճուճ
բացվեցին: Զինվորները ներս խուժեցին: Խուլ կրակոց-
ներ: Կանչեր: Ինչ-վոր մեկին հալածում են: Կանչոցները
հաղիվ են լսվում համազարկերի միջից, վոր վորոտում
և ամբողջ փողոցով:

Տղան սողալով մտնենում Ե:

— Ե՛յ, փոքրիկ, — կանչեց նրան մի զինվոր, — վաղիբ
հիվանդանոցային սալակի յետևից, շուտ, այլապես ընկեր
հրամանատարի դուռթյունը վատանալու Ե:

Հրամանատարը թափահարեց զլուխն ու ձեռները և
ասաց.

— Վոչինչ, լես ինքս...

Յեվ չես սողաց: Ձեռքում ուներ մի ճերմակ թաշ-
կինակ: Թաշկինակը շարժելով իմաց տվեց սղալին, վոր
մոտենա:

— Ե՛յ, փոքրիկ, ինչո՞ւ իզուր այդտեղ տանջվում ես.
առ ահա այս թաշկինակը և նրանով կապիբ այստեղը,
ծունկս: Յես չեմ կարող հանգուցել. ոգնիր:

Յերեխան և սղան փորսող հեռացան այդ տեղից, ուր
արճիճե գնդակների տարափ եր տեղում:

Տղան գզուշությամբ կապեց հրամանատարի վերքը,
հանեց դղզղված վերարկուն, ծալեց և զրեց նրա զլխա-
տակը: Վիրավորը շնչում եր ծանր, բայց արդեն հանգիստ:
Նա բարձրացրեց ատրճանակը:

— Դու կարող ես գործածել, — ատրճանակը ցույց
տալով հարցրեց հրամանատարը:

— Վոչ:

— Յես քեզ ցույց կտամ: Յեվ հրամանատարն սկսեց
սովորեցնել սղալին ատրճանակի գործածությունը:

Հրամանատարը դեռ չեր վերջացրել բացատրու-
թյունները, յերբ հրացանների և գնդացիներին համազար-
կի միջից լսվեց մի ծանր և խուլ թնդյուն:

— Ա՛, նրանք հրանոթներ ունեն:

— Ո՞վ, — հարցրեց տղան.

— Թշնամին, յուսկերները:

Լավեց հրանոթների յերկրորդ համազարկը, և գնդակները պայթեցին կարծես թե բավական մոտիկ:

— Թնդանո՞թ ե:

— Թնդանոթ ե: Ոգնիր ինձ բարձրանամ, նայեմ:

Տղան ոգնեց հրամանատարին միքիչ բարձրանալու:

Շառաչեց յերրորդ զարկը, ապա չորրորդը և կրկին, կրկին. ինչպես մի վիթխարի թմբուկ:

Զինվորները, վոր փուվեցին փողոցում, արդեն չկային: Նրանցից փողոցում մնացել էին յերկու դիակ և միքանի վիրավոր, վորոնք գորտի նման լոք տալով պահվում էին այս ու այն կողմ: Կենդանի և առույգ զինվորները մտան բուլվարի անկյան կից գորշ տունը և սկսեցին պատուհաններից կրակել հակառակորդի վրա: Իսկ հակառակորդն ուզում էր նրանց կոտորել թնդանոթային կրակով:

Տան յերկրորդ հարկում, ուր հավաքված էին զինվորները, ընկավ թնդանոթի ռումբը և շատաչով ու ֆըշշալով պայթեց. ապա պատուհաններից դուրս պոռթկաց սև և թանձր ծուխը, վորն սկսեց գորշանալ և քուլա-քուլա բարձրանալ դեպի յերկինք:

— Մի՞թե հրդեհ ե, — ինքն ել չիմանալով թե ինչու՞ դողալով հարցրեց տղան:

— Այո՛. — պատասխանեց հրամանատարը, — սրիկաները վառեցին:

— Վառեցին:

— Այո՛, ռուժբով: Ա՛ռ և կրակիր նրանց վրա:

Փորրիկը վերցրեց ատրճանակը:

Տան յերրորդ հարկից ծուխը դուրս հորդեց. Միսի և թափվող անձրևի միջից տղան նկատեց, վոր տան 4-րդ հարկից յերկու զինվոր իրար լետեից իրենց ցած նետե-

ցին: նրանցից մեկն ընկավ և անշարժ մնաց տեղում: Իսկ մյուսը սողաց գետնի վրա լերեան ի վայր:

Հրամանատարը հանկարծ ցնցվեց, ուզեց շարժվել՝ չկարողացավ, նորից անգոր պառկեց:

— Փոքրիկ, վազիր շտապ, գիտես վորտեղ ե գտնւ-վում բանվորների պատգամավորական խորհուրդը:

— Գիտեմ, լսել եմ, այնտեղ, ուր առաջ նահանգապետն եր:

— Դե վազիր, շուտ, շուտ:

Յեւ վերելսան սկսեց վազել ամբողջ ուժով, կարծես թե տասներկու վոտք և նույնքան ել սիրտ ուներ:

— — —

Նահանգապետի տան մոտ լերեխային կանգնեցրեց զինվորական պահակը և խուզարկեց նրան: Մոտը գտան «Զինվորներին» ուղղված կոչը՝ ստորագրված եսերները*) կողմից:

— Ե՛յ, յեղբայր, սպիտակ-գվարդիական թռուցիկներ ես տարածում. արի այստեղ: Յեւ նրան տարան ձերբակալման սենյակը: Տարան, վորովհետև տղան վազելուց հետո եր և չկարողացավ վոչ մի խոսք արտասանել, հասկացնել թե թռուցիկը վորտեղից ե ի՛ր մոտ, ինքը վորտեղից ե գալիս և ինչու յե այդքան վազել:

Սենյակում նստած ելին քաղաքացիներ, ուսանողներ: Յերելսան միքիչ իրեն հավաքեց: Սկսեց ամուր թակել դուռը: Բաղխեց յերկար: Դուռը կիսաբաց արեց մի նավաստի և գլուխը ներս կոխեց: Նրա դեմքի վրա սպիներ կալին: Նավաստին խորազնին կերպով նայեց դուռը թակող տղային: Տղան պատմեց իր համառոտ պատմությունը, վեճը ծեր լրագրավաճառի հետ, հրացանաձգությունը այգու մոտ, այնտեղ ընկած վիրավորների, հրգեհ-ված տան մասին...

*) Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցութուն:

Նավաստին կարձ, առանց շտապելու հարցրեց.

— Սուտ չե՞ս ասում:

— Ձե, ճշմարիտ:

— Գուրս արի, հետևիր ինձ:

Տղան շտաբում պատմեց հրդեհի և վիրավորվածների մասին: Նա հազիվ եր վերջացրեց, պատմութունը, յերբ շտաբի դուռը շառաչով բացվեց, և ներս մտավ մի հրդեհաշեջ՝ փաթաթված յերեսով:

— Հանգցնել անհնար ե, — ասաց հրդեհաշեջը, — կրահուս ե՞ն սրիկաները հրացաններով և թնդանոթներով:

— Իսկ տուներ դեռ այրվո՞ւմ ե:

— Բոցավառված ե:

— Իսկ թնդանոթը կարելի՞ յե կոտրել, — հարցրեց տղան:

— Փորձիր և այն ժամանակ պրոլետարներից շքանշան կստանաս, — ծաղրեց հրդեհաշեջը:

Մեկը խղճաց տղային՝ հասկանալով նրա քաղցած լինելը՝ և տվեց նրան մի տուփ պահածո միս:

«Իսկ յեթե թնդանոթը կոտրվի» — մտածում եր տղան: Նա կրկին սկսեց անհանգստանալ: Շուռումուռ յեկավ: Կանգնեց: Ձգիտեր ինչ անել: Ապա մոտեցավ այն մարդուն, վոր իրեն տվեց միսը, և հարցրեց.

— Ի՞նչ պետք ե անել, վորպեսզի թնդանոթը չըկրակի:

— Հանել կողպեքը, — պատասխանեց նա:

— Բայց ի՞նչպես:

Տղայի վրա նայում եին յերկու փորձող աչքեր, վորոնք կամաց-կամաց լեցվում եին հավատով և բարությամբ:

Տղան ուշադրությամբ լսում եր, թե ինչ պետք ե անել, վորպեսզի թնդանոթը չկրակի:

Հաղթանակած զինվորները զննում եյին այն միակ թնդանոթը, վորից ոգտվել էյին իրենց թշնամիները:

— Փշացրած ե: Յերևում ե, վոր նրանց մեջ մեկը կա մերոնցից:

— Գեղջուկը մտածում եր, վոր աղան իրենից ուժեղ ե, բանից դուրս յեկավ, վոր սխալ ե,— փիլիսոփայից մի զինվոր:

— Սուս կաց, — ըարկացավ մեկը «փիլիսոփայի» վրա, — չե՞ս տեսնում՝ ուր ես դնում վոտըդ:

— Սսիր ե, — ուզում եր ասել «փիլիսոփան», — դա, իսկ խարի տա՞հ...

Հավաքված եյին մի խումբ զինվորները:

Սսիրը մի կողմ նետեցին: Նրա տակ մեջքի վրա, մեկ աչքը բաց, մյուսը ծակված զնդակով, ընկած եր փոքրիկ լրագրավաճառ տղան՝ թղթի պես ճերմակ ու մարմարի պես սառը:

ԿԱՊԻՏԱԼԻՉՄԻ ԼԾԻ ՏԱԿ

ՇՈՒՄԱԽԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ

ԸՍՏ Ա. ԴՐՈՋԴՈՎԻ

I

Ձարագուշակ աշուն եր:

Բանտերը լիքն էյին. Համբուրգի կոմմունիստական ապստամբութիւնը ճնշված եր գերմանական զորքի ու վոստիկանութիւնի դաժան միջոցներով: Տեղ-տեղ բարբիկաղների վրայից դեռևս լսվում էյին հրացանների զարկերը. Բերլինի շքեղ փողոցներն աղմկում էյին. միտինգները չէյին դադարում: Բանվորական թաղամասերում տիրում եր քաղցն ու գործազրկութիւնը:

Վիլհելմի և Կանտի անվան փողոցների անկյունում, ուր քսան տարի անընդհատ տպարանում աշխատել էր Կարլ Շուվախերը, լռել էր աղմուկը, կանգ ելին առել տպագրական հսկա մեքենաները:

Գործադուլ էր: Մուտքը պահպանում էլին վոստիկանները, վորոնց շուրջը վխտում էյին քաղցած ու զուգաղած բանվորները:

Մի շարաթ անց տպարանի վարիչ Որբումեյերը համաձայնվեց բանակցել բանվորների ստագամավորության հետ: Պատգամավորների հետ էր նաև ծերունի Կարլը:

— Ներս մտեք, — կանչեց Որբումեյերը:

Պատգամավորները ներս մտան. Կարլի վոտները դողում էյին. գլուխը քիչ թեք (վատ էր լսում) նա ականջ էր դնում շտղակրատ կառավարչին, վոր հեզնանքով առաց.

— Յես ձեզ յերեկ էյի սպասում... այսոր արգեն ուշ է. ժամը 8-ից տպարանում նոր բանվորներ են աշխատում: Ձե վոր յես ասում էյի, վոր այս գործադուլը լավ հետևանք չի ունենա թե ձեզ, թե մեր յերկրի համար:

— Ի՞նչ էք ուզում ասել, — հարցրեց Կարլը, թեքվելով առաջ:

— Այն, վոր մենք յես կվերցնենք միայն 25 տոկոսը գործադուլավորների, վորոնք ավելի քիչ են վարակված կոմմունիստական ախտով: Սրանց թվում դուք չեք լինիլ, պառավ Շուվախեր. փողոց ենք շարտում, համ. թող այդպես լինի, դուք անլի էյիք ցանկանում: Գերմանիայի դիսին շարագուշակ ամպեր են կուտակվել: Ֆրանսիան բզկտում է մեզ մեր թիկունքում լեհական սուրն է շողշողում: Մենակ ե՛ք: Յեվ յերբ ամբողջ յերկիրն աշխատանքի կոչ է անում, դուք քայքայում եք յերկիրը, դուք հանցագործներ էք, վոր վարակվել էք Ռուսաստանի կարմիր ցնորքներով: Դե, հույսերդ դրեք խելագար խորհուրդների վրա. մուռացեք հայրենիքը, վոր սուրբ էր յուրա-

քանչիւր գերմանացու համար: Ասենք՝ միտինգի տեղ չե-
լես ասացի ամեն ինչ. վաղը վերջնահաշիվ կստանաք:
Յտեսութիւն, բարեկամներս:

Ծերունի Կարլը, հաղթահարելով ծնկներէի դողը, ա-
ռաջ շարժվեց ու դիմեց ընկերներին.

— Ճիշտ ե, միտինգ չե. այստեղ չե, վոր պետք ե
խոսենք, թե ով ե ավելի մտաիկ գերմանացի բանվորնե-
րի սրտին— Խորհրդալին Միութիւնը թե գերմանացի ձեռ-
նարկատերերը: Բայց գիտես արդո՞ք, դաժան Որբամեյեր,
վոր իմ ամբողջ ընտանիքը՝ կինս ու յերեք մանկահասակ
յերեխաներ, ահա քանի որ ե՛ վոչինչ չենք կերել:

Որբամեյերը գրպանից հանեց սիգարներէի թանգազին
տուփը, հոտոտեց սիգարը, կտրեց ծայրն ու խոսեց.

— Ձե՛մ ել ուզում գիտենալ. տպարանը հաշմանդամ-
ների տուն չե, վոչ ել պորտաբու՛յծների ապաստարան:
Դիմեցեք բորսա... դե՛, ցտեսութիւն, պարսն Շու-
մախեր:

Կարլը կատաղեց, վերցրեց աթոռն ու շարտեց Որբ-
մեյերի գլխին...

Յրվեցին .. Կարլը չվերադարձավ տուն. նրան բանտ
տարան:

Տանը դեռ սպասում ելին. պառավ Շումախերը պառ-
կած եր, նրա վոտների մոտ նստել ելին Ֆրանցիկն ու
Մատիլդոչկան: Կես դիշերին՝ վերադարձավ Ֆրիցը. նս-
հուզված եր, աչքերը վառվում ելին կատաղութեամբ:

— Ուրախացիր, մայր, հորս բանտ տարան. նա փըշ-
րեց Որբամեյերի հաստ գլուխը...

Յե՛վ մեծի նման ծիծաղեց, կոշտ ու շարախինդ:

Անքուն գիշերից ու արցունքներից հետո պառավ
Շումախերը դիմեց գավակներին.

— Ձեր հայրը շուտ չի վերադառնալու. իսկ ինձ ել
ապառիկ չեն տա վոչ փուռը, վոչ չերշիկանոցը, վոչ ել
կանաչավաճառը. դուք ձեր գլխի ճարը տեսեք. ինձ շատ

քան պետք չե. որը մի գետնախնձոր. չեթե այդ ել չեղավ, ավելի լավ. մահվան ավելի մոտ կլինեմ:

II

Քաղաքի միջով սլացող վագոնների ադմուկի տակ գլխավոր փողոցներից մեկում խոնաված ամբոխը դիտում եր մի խուժը կոշտ ու դազազած մարդկանց, վոր անգթորեն ծեծում ելին փոքրիկ Ֆրիցին:

Յերեխան, փոշոտ պատին հենվելով, ձեռներով պաշտպանում եր գլուխը:

Ամբոխի միջից ձայն ելին տալիս.

— Պինդ տվեք, սլինդ:

— Ջարդուփշուր արեք ատամները:

— Սուզարկեցեք, վերցրեք թուփերը...

Միայն մի ձայն լսվեց Ֆրիցի ոգտին.

— Ամոթ ձեզ, միթե կարելի չե տանջել յերեխային:

Գլխաբաց, գանգրահեր մորուքով մեկը մոտեցավ յերեխային: Դեմքը պայծառ եր՝ զայրույթով լցված. բռնելով Ֆրիցի ձեռքից՝ քաշ տվեց՝ կրկնելով.

— Ամոթ ու նախատինք. կուտուրահան մարդիկ եք:

— Իսկ դուք նրա հայրն եք, ինչ ե, մարդասեր պարոն, — ձայն ելին տալիս այս ու այն կողմից:

Մի կողմ տանելով յերեխային՝ մորուքավոր մարդը թաշկինակը հանեց և սկսեց սրբել Ֆրիցի դեմքի վերքերը. «Քիչ մնաց սպանելին, շարդուբուրդ անելին, այ դու անխելք», — շշնջում եր նա անընդհատ. նա բացեց յերեխայի բռունցքը, կեղտոտ մատների արանքից հանեց տրորված կարմիր թերթիկը. Ֆրիցի ուսերից բռնելով՝ նա հարցրեց հուզված ու անհանգիստ:

— Ի՞նչ ելիր անում այս թերթիկները:

— Ինչ վոր պետք եր:

— Փակցնում ելիր պատերին:

— Ու պիտի փակցնեմ ելի:

— Վերադարձից ելիւր վերցրել:

— Յերևի վոստիկանութիւնի գլխավոր շտաբից:

Ու աչքերը փալաւատակեցին կատաղած զայլի աչքերի նման:

— Գնանք ինձ մոտ. քեզ վոստիկանները կըռնեն:

— Յես ամեն մի պատահած մարդու մոտ չեմ գնա:

— Քաղցած ես:

— Յերևի կուշտ չեմ:

— Մի գնա, նորից կծեծեն:

— Վոչինչ, մի որ տեղը կհանենք:

— Թող ինձ մոտ մնա այս թերթիկն՝ իբրև հիշատակ: Նա բարձրացրեց իր սրտես աչքերը, տվեց անծանոթին թուուցիկն ու առանց լետ նայելու գնաց: Բայց քիչ անց վերադարձավ, կանգնեց անծանոթի կողքին ու շնչաց:

— Անունս Ֆրից է. Ֆրից: Յերևի կհանդիպենք:

Հասակավոր մարդը կանգնեց խանութի ցուցափեղկի մոտ ու դիտում եր՝ ինչպես տղայի ստվերը շարժվում եր պատերի վրայով, շուրջը նայելով բաց եր անում դարեջրասների դռները և, ներս դրելով թուուցիկները, գողեգող առաջ եր շարժվում:

Նա ծածկվեց ամբոխի մեջ:

Հասակավորը ժտածեց.

«Ախ, դու, գայլուկ: Յեթե չհանդիպենք հի, լես քեզ չեմ մոռանալ: Քո անունն է՝ Ֆրից»:

III

Ֆրանցիկն ու Մատիլդոչկան վաղ առավոտ դուրս յեկան ձեռք ձեռքի տված:

Փողոցում լեռուզեռ եր. արևը վողողել եր բաց տարածութիւնները, լերկաթե կտուրները. քամին վստում եր ուրախ: Բարձր տան պատշգամբում ծաղիկներ ելին ջրում, իսկ ներքևում կարծես անձրև եր մաղում:

— Յերբ մեծանամ, այսպիսի տուն կունենամ. առավոտները միշտ սուրճ և թարմ սուխարիներ կունենամ. ճաշին՝ քաղցր արգանակ ու տապակած: Գետնախնձոր շատ կլինի՝ խոզի ճարպով:

— Մարդդ ել հարբեցոյ կլինի Գեոի Վազների նման, — վրա բերեց Ֆրանցիկը:

— Վազները հարբում ե, բայց ուրախ մարդ ե: Նա լավ ե յերգում: Ասում ե, վոր շուտով գերմանացիները կովելու յեն իրար դեմ: Իսկ կովից հետո ամեն ինչ կըփոխվի: Փոլոցում ծաղիկներ կլինեն. և ձրի, — վորովհետև փող չի լինի մարդկանց ձեռքին: Վոչվոք լաց չի լինի, բոլորը յերջանիկ կլինեն:

— Տես, անբոսկան ե թոչում:

Կապույտ յերկնքի Ֆոնի վրա, ծխից սևացած ծխնեղույզներից վերև, աշնան դեղնագուլն ճառագայթներով վողողած, սահում եր ողանավը:

— Յես ողաշու յեմ դառնալու, — ասաց Ֆրանցիկը:

— Ցած կզլորվես:

— Վոչ, յես վախկոտ չեմ:

Նրանք առաջ շարժվեցին: Այստեղ ավելի անցորդներ կային. կանայք շքեղ շորերով եյին: Ավտոբուսները սլանում եյին աջ ու ձախ, կողքերին ցուցանակներ՝ մեծ մեծ սառերով. «անուշահամ խմիչֆներ, քաղցր լիկյորներ» (ինչպես կխմեցին). ավտոբուսում նստած մարդը սեղմեց ռետինե գնդակը, ու լավեց զիլ սուլոցը (Ֆրանցիկը գիտե ճիշտ այդպես սուլել). լրագրավաճառները վրխտում են արագ. մեջքերին արկղներ, արկղների վրա տառեր. «Բերլինյան լրագիր». «Մարտիեսի մեհենաներ». «Կիրխկոյի գուլպաներ»:

Հասան կողքի փողոցներից մեկը, վորտեղ ելեկարաքարչ չեր անցնում: Ֆրանցիկն ու Մատիլդոչկան մտան մի մեծ բակ: Բակի մեջտեղում կար մի մեծ շատրվան: Մեջտեղը՝ մի արձան, վորի բերանից ցայտում եր ջուրը:

Մատիլդոշկան ուղղեց վարդազույն շրջագգեստը, ուղղեց պատառոտած կոշիկները, վոր շատ վատ էլին կարկատած, և դիմեց Ծրանցիկին.

— Սկսենք:

Ծրանցիկը կրնկով հարվածեց գետնին. մեկ, յերկու:

Յերեխաներն սկսեցին յերգել:

Նրանք յերգում էին, ինչպես ճահիճների մոտ ապրում էր մի կախարդ. նա ճնշում էր մարդկանց, ատում էր յերեխաներին: Կենդանիները փախչում էին կախարդից. շուրջն ավերակ էր, մոխրի ու վոսկորի կուլտեր:

Ծրիցը վոգևորված վերջացրեց յերգը.

Դե, սարսափիր, անկուշտ կախարդ,

Տես՝ բացվում ե Արշալույսը.

Սրի վրա հուր վոսկետառ—

Ճնշվածների կամֆն ու հույսը:

Բաց պատուհանից դուրս նայեց սափրած դեմքով, փայլուն մազերով մի յերիտասարդ, ակնոցները քթին: Նա շարժում էր գլուխն ու շրխկացնում էր մատները՝ չափ տալով: Մատիլդոշկային թվաց, վոր նա մի արքայազն է:

Յերիտասարդը կանչեց.

— Բրնվո, յերեխաներ, բրնվո. շատ հաճելի յերգ ե. հրաշալի յերգ ե:

Ու դառնալով դեպի սենյակ՝ կանչեց.

— Մայրիկ, կարելի՞ յե այս թգուկներին ներս կանչել:

Նրանց ներս հրավիրեցին:

Խոհանոցի դռանը նրանց հանդիպեց մի բարձրահասակ տիկին, կապույտ զգեստով, ոճիքը մորթուց կարած: Գլխին ժանյակներ կային, ականջներին՝ ողբեր: Նրա մերկ ու լիքը ձեռքերը դուրս էին պրծել զգեստի թևերից ու կարծես ասում էին. «Ա՛խ, ինչ լավ ե կյանքը, արժե,

արժե ապրել: Խոհանոցում շլացնող մաքրութիւնն եր տիրում: Պլիտան թշշում եր, ամանները՝ պսպղում. խոհարարը, ձեռները վեր քշտած, կախարդի նման շրջում եր դեսուդեն, շինում, թափում, ծեփում ու թխում:

Տիկինը կանչեց լերեխաներին, հրամայեց աղախնին.

— Սուրճ տաքացրու սրանց համար:

Սեղանատանը նստեցրին մի մեծ սեղանի առաջ, վորի յեզերերին կաշում եյին Ֆրիցի ու զրոջ դնչերը: Պատերին յեղջերվի պոզեր ե.ին ցցվել: Մանր պատկերները կախվել եյին բաղմոցի վրա: Մետաքսայ գորգերի վրա շեր լսվում քայլողի վտանաձայնը: Յերիտասարդը իր ծանր մարմինը հազիվ-հազ շարժելով՝ շրջում եր լեա ու առաջ ու հարցնում.

— Զարմանալի լե. ո՞վ ե սովորեցրել այդ յերդը:

Մատիլդեշկան դեմքին լրջութիւն տալով՝ ասաց.

— Քեռի Վազները. յերբ հայրիկս դեռ շեր բանտարկված, նա հաճախ եր գալիս մեզ մոտ: Շատ ուրախ ու բարի մարդ ե քեռի Վազները. նա ասում ե, վոր շուտով բանվորները կլավացնեն մեր կյանքը:

— Հրաշալի լե, հրաշալի. յերևում ե, վոր այդ անպիտան Վազները թունդ կոմմունիստ ե: Յերգն ել այդ ե ասում: Շատակեր, ադան կախարդը, ազատարար Արշալույսը: Ի՞նչ կասես, մայրիկ: Յերդվում եմ կայսր Վիլհելմի բեղերով, վոր մեզ հետապնդում ե նոր հեղափոխութիւնն, բատրակների հեղափոխութիւնը, վորին վոսկորներ ե շարտում Սովետների յերկիրը: Հը՞, մայրիկ, ժամանակ չե՞ մեզ՝ հեռու Ամերիկա չվելու:

— Ինձ դուր չեն գալիս քո կոպիտ հանաքները, — վրա բերեց հեզաբարո տիկինը՝ ճակատը կնճռելով:

Խոհարարուհին բերեց սուրճի բաժակները, վորից տաք գոլորշի լեր բարձրանում, և դրեց սեղանին ամսելում դիզած կարկանդակները:

Ֆրանցիկը քիթը վեր քաշեց:

Մատիլդոչկան հարցրեց.

— Կարելի՞ չէ, մեծարգո տիկին, մի քաղցր կարկանդակ վերցնել հիվանդ մայրիկիս համար:

— Իհարկե՛, զավակս, կարելի չէ:

Յեվ իսկույն ձայնը փոխելով, դարձավ վորդուն.

— Գու պատրաստ ես ամեն մի պատահական անցորդի տուն հրավիրելու:

— Բայց հրաշալի յեն այս կոմմունիստ ճուտերը:

— Լավ, բայց փողոցն այլասերված է. սրանք նման չեն մեր վաղեմի, բարի գերմանացիներին. ալժամ յերեխաներն ել գողութիւն են անում:

Նա գնաց մյուս սենյակը՝ մազերն ուղղելու, բայց մի ըսպէ շանցած՝ վերադարձավ այլայլված: Աչքերն այնպէս ել շուել, վոր կարծես թէ գտնվում էր մի նոր, անծանոթ աշխարհում:

Պինդ բռնելով դռան վարագույրից, նա հարցրեց դողդողացող ձայնով.

— Մաքս, դիշերվա սեղանի վրայից դու չես վերցրել մատանիս:

— Գժվե՛լ ես, մայրիկ, ի՞նչ է:

— Այն մատանին, վոր ծննդւան տոնին հայրիկն եր նվիրել ինձ. սեղանի վրայից չքացել է:

— Ի՞նչ ես ասում, մայրիկ. լո՛րր, խնդրում եմ:

Տիկինը տարածեց ձեռքերն ու այլայլված ներս վազեց մյուս սենյակը. «Մատանան տանի, ալ քեզ ոյին», — ասաց յերիտասարդն ու հանելով մետաքսե թաշկինակը, սրբեց ճակատը: Նա հետևում էր՝ ինչ է կատարվում մյուս սենյակում. նա գունատ էր, մտմտում էր ինչ-վոր բան, բայց չէր համարձակվում. հանկարծ նա մտեցավ Մատիլդոչկային:

Հանելով գրպանից մի փոքրիկ բան, նա թեքվեց դեպի Մատիլդոչկան, դրեց նրա ական ու շնչաց.

— Պահիր, դիր գրպանդ ու վոչվորի բան մի ասա:

Դուքս գալուց հետո փողոցի դռանն սպասիր ինձ. յես յետ կվերցնեմ ու քեզ փող կտամ, վոսկե փող.

Մատիլդոչկան ուզում էր ասել, վոր նա չի ուզում ուրիշի իբր վերցնել, բայց չերիտասարդի սուր հասցընց վախեցավ. նա թագցրեց «Եսողալիքն» իր գրպանում: Փրանցիկը հառաչեց. ել չեր կարողանում ուտել: Յերիտասարդը հեռացավ. հուզված ու քրտնած մեկնվեց բազկաթոռին:

Տիկինը նորից ներս մտավ, կանչելով.

— Չկա, չկա, գուցե սխալմամբ վերցրել ես ու մոռացել:

— Չլինի խուզարկել ես ուզում ինձ, — հառաչեց Մաքսը: — Խնդրեմ, չեթե ուզում ես — համեցեք:

— Մի գալրացնի ինձ: Անդին Ե այդ մատանին... Յերեխաներ, շտապեցեք. խոյ մինչև չերեկո չեք մտլու: Ճանապարհ գցիր սրանց, — դիմեց նա աղախին:

Յերեխաները բազմոցից ցած իջան:

— Շնորհակալ եմք, շատ շնորհակալ, մեծարգո տիկին և բարի պարոն:

Յեվ դուքս չեկան խոհանոցի դռնով. և այնպես շտապ վոր մալրիկի համար կարկանդակ էլ չվերցրին:

Ինչպես հրամայել էր չերիտասարդը, Մատիլդոչկան ապասեց դրսի դռանը, բուռնցքը գրպանում պինդ սեղմած.

Փրանցիկը հարցրեց.

— Ի՞նչ բան է մատանին:

— Լոիր, — վրա բերեց Մատիլդոչկան:

Նրանց յետեից արագությամբ դուքս յեկան տիկինն ու պարոնը. տիկինը կատաղած էր. չերեխաներին տեսնելով գոռաց.

— Ահա նրանք, գողերը. ցնւց տուր, ինչ կա գրքապանումդ:

Նրա սուր մատները ցցվեցին աղջկա ուսի մեջ:

Ֆրանցիկը գոռաց.

— Մի ծեծիր, մորաքույր:

Մատիլդուշկան դողաց. ցնցվեցին շրթունքներն, ու հագիվ հագ խոսեց.

— Ի՞նչ գրպանում մի վալյուն բան կա, վոր ավեց պարոնն ու հրամայեց սպասել դռան մոտ:

— Ո՞վ կարող եր մտածել, — գոռաց յերիտասարդը բռունցքը սեղմած, — վոր աչս մատաղ սիրտն այդպես սեւացած է: Յես չեւի՞ ասում, մայրիկ, վոր դու մատանին սեղանատանն ես թողել: Հը, ի՞նչ կասես Գերմանիայի մատաղ սերնդի մասին: Իշխանութւան ձգտող բանվորների սերունդ. հիացիր, հիացիր, ահա մեր ապագա իշխանութւունը:

Յեվ շարժում ելին զլուխները — տիկինն ու պարոնը, աղախինն ու դռնապանը. շարժում ելին ու մտածում. ի՞նչ է լինելու վաղը, ի՞նչ է սպասում Գերմանիային, վոր աչսպիսի զավակներ ունի.

Ֆրանցիկը լացեց

Տիկինը վերցրեց մատանին, նայեց կարոտով ու սասաց.

— Հենց սա չե, սա. կարծես կենդանի լինի:

Դռնապանը յերեխաներին քաղաքամաս տարավ: Ճանապարհին նա սրբում եր աչքերն ու փնթփնթում.

«Յերբեմն Գերմանիան դրախտի չեր նման. Բերլինի փողոցները փայլում ելին հայելու պես, Ռեյնի լազողները փթթում ելին. առատ եր հացը, գետնախնձորն ու դարեջուրը: Գերմանիայից սոսկում ելին մյուս պետութւունները, վորովհետև ունեյինք որենք ու թագավոր: Ի՞նչ եք դառնալու դուք, մանուկներ. դուք եք մեր ծաղիկները. վոչ, դուք մոլախոտ եք, չեղինճ, վոր ծածկում եք մեր արտերը»:

Նա այնպես թախծոտ եր խոսում, վոր յերեխաները հեկեկում ելին, դռնն արցունք թափում: Իսկ յերբ ան-

ցորդները հարցնու՛մ եյին, նա նու՛ն ձա՛նով պատասխա-
նում եր.

— Գողեր ենք բռնել. տանենք քաղաքամաս, այն-
տեղ կհիշեցնեն, վոր աստված կա յերկնքում:

Քաղաքամասում մի մարդ եր նստել նոր շորեր հա-
զին, սև հոնքերով, սաթի պես դեղին բեղերով:

Սկզբում նա խոսեց դռնապանի հետ, ապա հարցրեց
յերեխաներին՝ ո՞վքեր են նրանց ծնողները, վորտեղ են
սպրում, ինչո՞վ են զբաղվում, և այս բոլորը զրեց: Ապա
մի յերկու ըսպե գոռգոռաց յերեխաների վրա, վորից հե-
տո դռնապանը գնաց, իսկ յերեխաներին տարան ու փա-
կեցին մի դատարկ սենյակում:

Յերեխաները Նստեցին լուսամուտի գոգն ու դուրս
ելին նայում:

Ապա պառկեցին թախտի վրա.

— Կո՞չա ե տեղդ, — հարցրեց Մատիլդեչկան:

— Հա, միբիշ, իսկ քո՞նը:

— Նույնպես. ուտել չի՞ս ուզում:

— Ուզում եմ. իսկ դո՞ւ:

— Նույնպես:

Այնուհետև քնեցին, գլխները ձեռներին դրած ու
կծկված:

IV

Վաղ առավոտ, յերբ զրագրերը հավաքվեցին ու սկսե-
ցին վառել վառարանները, Ֆրանցիկի ու քրոջ սենյակը
յերեխաների մի նոր խումբ բերին:

Բերլինում ամեն գիշեր անթիվ յերեխաներ են հա-
վաքում:

Կային փողոցային թափառաշրջիկներ՝ 6—9 տարե-
կան. կեղտոտ ելին, գլխոված շորերով, դեմքերին՝ վեր-
քեր: Կային մանկահասակ լաբախաղացներ, վորոնք թա-
փառում են բակերն ու իրենց շնորհքը ցույց տալիս: Կա-

չին և մաքուր հաշնված լերեխաներ, վորոնք կտրվել էյին տանից, հեռացել:

Սրանց հետ եր և Ֆրիցը, վորին բռնել էյին կոմմունիստական թուռցիկներ տարածելու համար:

— Ֆրից, Ֆրից,—կանչեց Մատիլդոչկան ու ծափ տվեց:

Դե մենք այլևս չենք վախենալ, քանի վոր դու մեզ մոտ էլինես:

Ֆրիցն իրեն լուրջ եր պահում, կարծես նա ինքը լերեխաների տեր եր: Նա շոյեց ըրոջ գլուխն ու ասաց Ֆրանցիկին. «Ղոչաղ կաց—տղամարդի պես»: Յերբ մյուս լերեխաներն աղմկում էլին, նա խոժոռում եր դեմքը, վորի վրա չորացած արյան հետքեր էլին յերևում:

— Վոչինչ,—ասաց նա բռունցքը սեղմելով.—այս ըրտրը՝ վոչինչ. մենք դեռ կկռվենք:

— Տուն գնալ եմ ուզում,—ասաց Ֆրանցիկը:

Շուտով ներս մտավ մի հաստափոր վոստիկան. բերանին ծխում եր հաստ սիգարը, վոր անախորժ հոտ եր տարածում. բեղերը ծիծաղելի էյին, անհարթ խուզած: Նա հաստ եր, անձոռնի, կարծես ավտորուս լիներ, իսկ ձայնը կնոջ ձայնի նման բարակ եր:

Նա գրպանից ինչ-վոր թուղթ հանեց ու սկսեց կարդալ, առանց լերեխանի ըր վրա նայելու, կարծես յերեխաներ չկային այստեղ:

— Մարիա Շուլց. իննը տարեկան. աջ կողմն անցիր. բեզ արձակու.մ ենք:

— Կարլ Վեշկե, ութ տարեկան. ձախ. ուղղիչ տուն ենք ուղարկում:

— Գուրտ Պրենցել. անջ. հայրդ տուգանք ե տալու:

— Մատիլդա, Ֆրանց և Ֆրից Շուվախեր. անջ. դեպի կալանքի տուն:

Նրանց դուրս հանեցին ու սկսեցին ման ածել վորոցներով: Գրուզովիկը շատ եր ցնցում:

Մուլիչը շան հաջոցի նման ձայներ կը հանու՛մ:

— Դու չե՛ս վախենու՛մ, — շարցնում էր Մասրլդոշկան:

— Վոչ. իսկ դո՞ւ:

— Յես ել վոչ:

Կալանքի տանը նրանք լերկար չմնացին. վորտեղից վորտեղ հայտնվեց քեռի Վազներն ու նրանց դուրս բերեց իր յերաշխավորութիւամբ:

Բարի ու ազնիվ քեռի Վազներ: Նա շփում էր ձեռները. Թափահարում էր իր վոսկրոտ ուսերն ու այնպես ուրախ ծիծաղում, կարծես նրան միջանի կիլո շոկոլադ ելին նվիրել:

— Ա՛յ դոշաղ Ֆրից. այ կեցցեք. այ թե ինչ է նըշանակում կոմսոսոյում աշխատել. լավ կոմմունարներ կը դառնաք: Իսկ առաջժամ դիմացիք այս սև որերին. հորդ կես տարի բանտ վորոշեցին. մորդ դրուժու՛նը վատ է: Միք մտածիլ, քանի վողջ է քեռի Վազները, դո՞ք քաղցից չեք մեռնիլ. ձեզ հետ են ձեր պայքարող հայրերն ու յեղբայրները, ձեզ հետ են իմ մարտնչող ընկերները: Յե՛վ քեռի Վազները չի մեռնելու, սինչև չտեսնի Գեւուանիայի Հոկտեմբերը:

Խ Ղ Ճ Ա Յ

ԸՍՏ ՅԵ. ՎԻԿՏՈՐՈՎԱՅԻ

I

Այս դեպքը պատահեց Վենզրիայում 1919 թ. գարնանը, չերբ սպառվեց բանվորների համբերութլունը, և ուսական մեծ հեղափոխութլանն արձագանգելով, նըրանք բացարձակ կռվի դուրս յեկան իրենց ճնշող ձրիակերների դեմ:

Մարտ ամիսն էր. Դու՛նայ գետը վարարել էր և իր

պղտոր այիքներն զիրկն առած քշում եր հուլա սառցա-
կույտերը: Դունայի ավինն վուված գեղաաեսիլ Բուդապեշ-
տը նախապատրաստվում եր պատմության արտասովոր
մոմենտին,—կատարվելու յեր այն, ինչի մասին յերգում
ե հեղափոխական հիմնը.

«Մեր նոր աշխարհը կշինենք մենք,
Ուր վոչ սարուկ կա, վոչ դժգոհ»:

Պատերազմներում խոշտանգված վենգրիական ժողո-
վրդի զայրույթն աճում եր հետզհետե: Կյանքը դուրս եր
յեկել իր հունից և հեղեղած Դունայի նման քշում, տա-
նում եր ճամպին հանդիպած ամեն ինչ:

Դպրոցներն ու մանկապարտեզները փակ եյին, չնա-
լած վոչ մի տոն չկար. ընդհակառակը, չափահաս մարդիկ
ավելի մտահոգված եյին, քան սովորական ժամանակ.

Անն թե ինչու կապտաչյա դժգուշն Լոլոն ամբողջ
որերով մենակ եր մնում:

Լոլոյի մայրիկն առաջ, դորժարանից տուն գալիս,
ժամը 6-ին միշտ մտնում եր մանկապարտեզ, տուն եր
բերում իր միակ զավակին, կերակրում եր նրան ու
սկսում եր սնային դորժերով զբաղվել: Իսկ այժմ, յերբ
նա վերադառնում ե տուն, Լոլոյին գտնում ե կոշտ ան-
կողնում քնած:

Հայրիկը, վոր միշտ սիրալիր եր ու բարի, ել չեր
խաղում Լոլոյի հետ, լուցկիներից ձիեր չեր շինում նրա
համար: Այս ամենը վշտացնում եր Լոլոյին, և նա չեր ի-
մանում՝ ինչով բացատրել տարորինակ փոփոխությունը:

Մի առավոտ, յերբ Լոլոն աչքերը բաց արեց, մեծ
բազմութիւն տեսավ սենյակում: Վախեցած նստեց ան-
կողնում ու չեր հասկանում՝ ինչի՞ն վերադրել այդ:

Լոլոն սկսեց դիտել հյուրերին: Նրա կողքին նստել
եր ալեխառն, խիտ մորուքով մի մարդ, վոր չեռանդով
մաքրում եր հրացանը. քիչ հեռու պատանի Ֆրիցը մի
մեծ ատրճանակ եր տնտղում:

Լոլոն զարմանքից բաց արեց բերանը, աշխատելով հասկանալ, թե ինչ է կատարվում:

— Վերստեղից ես ճարել ատրճանակը, — հարցրեց նա:

Ալեխանն մորուքով մարդը քաղցր ժպիտով նայեց Լոլոյին, և այդ ժպիտից բոլորովին փոխվեց նրա դեմքը:

— Ի՞նչ, արթնացրինք բեղ, փոքրիկս. վոչինչ, բնելու ժամանակն անցել է:

Յերբ մալրը մոտեցավ, Լոլոն նկատեց, վոր մոր դեմքին անսովոր հրճվանք կա, իսկ ձեռները սև են՝ հնոցապանի ձեռների պես:

— Մալրիկ, ովքեր են սրանք, — շնջաց Լոլոն:

— Մեր ընկերներն են. նրանք հալրիկիդ հետ կընվում են արդարուժյան համար, և չերբ մենք հաղթենք, կյանքը բոլորովին կփոխվի: Իսկ հիմա շտապիր, շուտ հագնվիր, չես զբաղված եմ. ինքդ ջուր բեր ու թե՛յ դիր:

— Մալրիկ, չես ել հրացան եմ ուզում, յես ել կընվել եմ ուզում, — ասաց Լոլոն վճռական ձայնով:

— Դու դեռ շատ փոքրիկ ես, անուշիկս:

Լոլոն ել բան չհարցրեց, շտապով հագավ իր կեղտոտ շորերն ու ջրի գնաց: Ջրմուղի մոտ հարևանները խմբվել, խոսում էին հուզված: Լոլոն սկսեց ականջ դնել, հանկարծ կողքի դարպասը բացվեց, ու բակը լցվեց անձանոթ մարդկանցով, նրանց աղմուկով ու կանչերով:

Յերկու տղամարդ թևանցուկ դուրս բերին մեկին, վոր հառաչում էր. կեղտոտ քարերին հոսում էր նրա արյունը: Կանայք մի սրբիչ ճարեցին և կապիցին վերավորի վոտքը: Լոլոյին հրեցին. նա բարձրացավ կիսված արկղների վրա. այնտեղից լավ եր յերևում: Վիրավորին տարան, և Լոլոն տղաների հետ ցած իջավ: Նա հիշեց, վոր դուլլը մնացել է ցածում, բայց չերբ մոտեցավ, վախեցած հեռու փախավ. — դուլլի մեջ լիքը արյուն էր: Շուտով յեկավ մարդկանց մի նոր խումբ, վորոնց առջևից

զնուժ եր Լոլոյի հայրը՝ փաթաթած կարմիր դրոշը ձեռքին: Լոլոն վրա վազեց:

— Հայրիկ, ինձ ել հետդ տար:

Հայրը դիտով բացասական նշան տվեց և լուռ համբուրեց Լոլոյի ճակատը: Ալեխառն մարդը սիրալիբ ժլպտաց ու խոսեց.

— Մի շտապիլ, փոքրիկս. կգա ժամանակ, դու չե՛լ կողմես մեզ ընդհանուր դործում:

Լոլոյի աչքերը լցվեցին: Հեկեկալով նա տուն վազեց: Տանը մարդ չկար. նոր ելին հեռացել հյուրերը:

— Լոլո, — կանչեց մայրն ու շտապով թազքեց մի բան:

Լոլոն մոտեցավ. մայրը տեսնելով նրա արցունքները, հարցրեց.

— Ինչո՞ւ յես լաց լինում. փոքր ես, ինչ ե. դեռ ուզում ես հրացան ունենալ: Տես, սեղանին հաց ու պանիր կա. կեր ու փակվիր սենյակում: Դուրս չգաս:

Լոլոն հեկեկալով կրծում եր հացն ու պատուհանից դուրս նայում. նա տեսնում եր անցորդների վտառերը միայն: Հանկարծ նա լսեց հրացանների համազարկ. «Լեբևի մեր ընկերներն են կռվում», — մտածեց նա ու ցանկացավ տեսնել, թե ինչպես են կռվում:

Սակայն այնպիսի ազմուկ ու դղրդոց բարձրացավ, վոր նույնիսկ պահարանի ամանները զրնգացին: Լոլոն կծկվեց անկունում ու սկսեց մայրիկին կանչել. բայց մայրիկը չեկավ: Լոլոն հառաչեց, դուրս յեկավ անկյունից, հագավ պատրաստած կոշիկները, վերցրեց հնամաշ վերարկուն ու բակը դուրս յեկավ: Դարպասի դուռը փակ եր. նա սողալով դուռն տակից փողոց դուրս յեկավ:

II

Փողոցում մարդիկ կանգնած ելին խմբերով: Հուզված խոսում ելին, վոմանք ել վազում ելին դեպի դիմա-

ցի մայթերը: Նորից կրակոց, և Լոլոն տեսնում էր՝ ինչպես խեղճ մարդիկ հնձած խոտի պես վազում էին գետին: Բայց ընկածների փոխարեն կանգնում էին նորերը, վորոնք անեծքը բերանին հարձակվում էին կրակոց զինվորների վրա: Լոլոն վախեցած սեղմվեց պատին: Նա լերբեք չէր տեսել՝ ինչպես են մեռնում մարդիկ, իսկ այստեղ նրանց արյունը ներկում էր մայթերն առատորեն:

Լոլոն շատ էր ուզում հարցնել, իմանալ— ո՞վ և ինչո՞ւ համար է կռվում, ո՞ւմ դեմ, բայց վոչվոր չէր նկատում փոքրիկ դժգուշ մանկան, վոր աչքերը չուել էր վախից:

Հանկարծ դիմացի փողոցից դուրս պրծան դրագունները՝ կատաղած ձիերին նստած՝ մերկ սրերը ձեռներին: Ամբոխը ճչաց. ձիավորներին քարերով դիմավորեցին:

Լոլոն ալդ տեսնելով՝ ինքն էլ մի քար վերցրեց ու շարտեց դեպի ձիավորները:

Թե ինչ կատարվեց այնուհետև, Լոլոն չէր հիշում: Յերբ բացեց աչքերը, տեսավ, վոր կանգնած է մի խումբ մարդկանց մեջ՝ դարպասին սեղմված:

Ծարդիկ ցրվում էին. ձիավորները չքացել էին: Լոլոն սկսեց փնտռել մայրիկին ու հայրիկին: Նա հասավ մի մեծ փողոց, վորտեղ մարդիկ շրջում էին հանդիստ:

Համներով կամուրջին, Լոլոն սկսեց ցած նայել. նա տարվեց սառցակույտերով ու նրանց մեջ լողացող շոգենավերով:

Այդ ժամանակ կամուրջի վրայով, կառքի մեջ կրծկրված անցնում էր մի խումբ կիներ, վոր հիշել էր իր մոռացած ազգականուհուն ու գնում էր նրա մոտ՝ թագներովելու: Ծպտված աղբատի շորերում նա խնդրում էր կառապանին՝ կառքը կանգնեցնողներին հայտնել, վոր հիվանդ է տանում:

Բայց նրա փափկասուն դեմքը մատնեց իրեն: Մի բարձրահասակ մարդ, հին վերարկուն հագին, սուր հայացք դեցեց նրա վրա ու ճչաց.

— Այն դու թշվառական. լես քեզ ճանաչում եմ, ա-
նիճված. դու դեռ ուզում ես ապրել լսել ճերի հաշվին-
վոչ, այդ քեզ չի հաշողվի. — ու ցած քաշեց կնոջը՝ ոճի-
քից բռնած:

Լուսն լսեց այդ աղմուկը. յետ դարձավ, տեսավ վա-
խեցած կնոջը, վոր պինդ բռնել եր կոքի կողքերից ու
իրեն քաշ տվող մարդու թևից: Լուսն վախեցավ, նրա սիր-
տը ճմլվեց, մոտեցավ ու ճչաց.

— Հորեղբայր, սիրելի հորեղբայր: Մի բարկանա, մի
սպանի նրան, — ու պինդ բռնեց կնոջ վեշերից:

Կինն ոգտվեց այս հանդամանքից ու սրտապնդված
խոսեց.

— Տեսնո՞ւմ եք, ընկերներ, փոքրիկը ճանաչում ե
ինձ լես մինիստրի կին չեմ, այլ խեղճ ուսուցչուհի: Սա
լիմ սանիկն է. սրան կարդացրել եմ, կերակրել: — Ու քն-
շշությամբ սեղմեց Լուսինն իր կրծքին:

Հուզված ամբոխը շրջապատեց կոքը:

— Ճի՞շտ ե սուռժ, այ տղա. նա քեզ սովորեցրե՞լ
է, — հարցրեց բարձրահասակ մարդն ու բաց թողեց կնոջը:

Լուսն գիտեր, վոր կինը սուտ ասաց, բայց գիտեր
նաև այն, վոր չեթե ինքն էլ ստի, կփրկի կնոջ կյանքը:
Նա ցած դեցեց հայացքն ու հագիվ-հագ շշնջաց.

— Այն:

— Դու նրան ճի՞շտ վոր ճանաչում ես, — հարցրին
միաժամանակ միքանի ձայն:

— Այն, — ասաց չերեխան՝ այս անգամ հաստատ ձայ-
նով:

Կինն ավելի չեր սեղմում Լուսինն իր գրկում: Բարձ-
րահասակ մարդը ճնշված ձայնով խոսեց.

— Ներեցե՞ք, ընկեր, դուք չափազանց նման եք այն
անպիտան կնոջը, վորի մոտ յես մի ժամանակ աշխա-
տում եիք. մի հասարակ սխալի պատճառով նա ինձ բանտ
նստացրեց. յես ուզեցի վրեժս հանել, բայց...

— Բայց սխալվեցի՞ք, — վրա բերեց կինը ժպտալով: Կառքը շարժվեց. ամբոխը ցրվեց. փոքրիկ Լուսն, շփելով իր գունատ ալոթերն, առաջ շարժվեց:

Շուտով նրա ճանապարհը փակեց բազմոցները, տա կառնների, սեղանների ու արկղների մի կուլյտ, խառնիխուռն իրար վրա ածած: Իսկ այս կուլյտի գլխին կարմիր դրոշ եր ծածանում: Նա կարծեց, վոր դրոշակի մոտ կանգնած կլինի մայրիկը. ձեռքերը տարածեց դեպի բարրիկադը, կանչեց, բայց մայրիկը չկար:

Տղան ճչաց ու անցավ կողքի բակը. ելի արգելք. հեռագրասյուններ, փշալարեր... Մուխն եր, բայց վոչվոք լապտերները չեր վառում: Հոգնած վոտները հազիվ եր բարձր տալիս: Մեկ-մեկ լավում եր հրացանների կրակոց: Նլ չկարողացավ շարունակել ճանապարհը: Ո՛ւր գնար. մայրիկը չեր լսում նրա ձայնը: Լուսն կծկվեց մի դռան ու հեկեկալով բռն մտավ:

III

— Դե՛, շո՛ւտ, վեր կաց, ա՛յ տղա. — ասում եր մեկը, թափահարելով Լուսնի ուսերը:

Առավոտ եր. Լուսն վեր կացավ. քնաթաթախ աչքերը շորս կողմը նայեց.

— Ո՛ւր ե մայրիկս ուղում եմ տուն գնալ, — ասաց նա խղճայի ձայնով:

— Վո՞րտեղ ե ձեր տունը. — հարցրեց անծանոթ մարդը, վորի բերանից արաղի հոտ եր գալիս:

Անծանոթը գրկեց նրան ու սկսեց պրպտել չերխալի գրպանները. սակայն վոչինչ չգտնելով՝ ասաց.

— Դե իհարկե, հիմա ո՞վ կտա վոգորմութուն:

Լուսն վախենում եր անծանոթից:

Վաղո՞ւց ե՛՛ բան չես կերել. — հարցրեց անծանոթը ձայնը փոխելով:

— Վաղո՞ւց ե, — ասաց Լուսն անկեղծորեն:

— Դե՛, առ ու կեր. փողոցում գտա. յերևի շրջավա-
ճառն ե թողել՝ են աշխարհը զնալիս:

Անծանոթը Լուրլին տվեց մի կեղտ ա կարկանդակ-
տղան վերցրեց, բայց սիրտ չեք անուժ ուտել.

— Կեր, անխելք, կեր.--ե նա հեռացավ տղայից:

Լուրն միքիչ կշտացավ ու դուրս յեկավ փողոց. դա-
տարկ եր. դռներն ու պատուհանները պինդ կողպած ե-
լին: Ճանապարհն անծանոթ եր. մարդ չկար, վոր հարցը
ներ, իմանար:

Ամբողջ որը թափառեց. պատահում ելին մարդիկ,
այսոր ավելի հանգիստ ելին, թեպետ մեկ-մեկ ելի կրա-
կոց եր լսվում: Քաղցը տանջում եր տղային. Նլի մթնեց,
ելի նա անծանոթ տեղում մնաց. այսոր ել նա յոտեցավ
պատահական դռների ու քնեց, թեպետ ցուրտն զգա-
լի յեր:

Յերազում տեսավ մայրիկին, խոսում եր հետը,
սակալն զգաց. վոր մեկը բռնեց իր գլխից. սարսափած
վնը թռավ, ուզում եր փախչել, բայց մի ուժեղ ձեռք պա-
հեց նրան:

— Կաց, սիրելիս, չե՞ վոր դու Ոտուկարի տղան ես, —
ասաց ալեխառն, խիտ մորուքով ծերունին:

Ուրախացած Լուրն իսկուհն հարցրեց՝ ի՞նչպես տուն
դնա—դոնի հայրիկին ու մայրիկին:

— Դե արի՛ ինձ հետ. փոքրիկ կոմմունսար, — ծիծաղեց
ճերուհին ու բռնեց մանկան ձեռքից:

Լուրն հետևեց ճերուհին. փողոցներն այսոր տոնա-
կան տեսք ունեյին: Ամենուրեք կարմիր դրոշակներ ելին
փոփռում. անցորդների դեմքերին ուրախ ժպիտներ ելին
փայլում:

Վերջապես Լուրն սիրտ արեց ու հարցրեց.

— Պապի, ա պապի, մենք հաղթե՞լ ենք... ո՞ւմ հետ
եյինք կռվում:

Ծերունին ժպտաց.

— Ուժ հե՛տ... այն պարոնների հետ, վորոնք նստել ելին մեր վզին, մեր աշխատանքն էյիս շահագործում:

— Ա՛յ, ի՞նչ է, այնտե՛ղ,— ցույց տվեց Լուսն հեռվից չեկող ցուցարարներին:— Գնանք:

— Մպասի՛ր, սիրելիս. այդ մերոնք են, վոր տոնում են իրենց հաղթանակը: Թ՛շնամին՝ բուրժուակաները տապալված են. հիմա մեր փոքրիկներն ել լավ որ կտեսնեն:

Անցան ցուցարարների կողքով. ծերունին ներս տարավ նրան մի շքեղ տուն, նստեցրեց բազմոցին, ապա կանչելով մի աղջկա՝ ասաց.

— Ահա մեր փոքրիկ կոմմունարը. հայտնեցեք Ոսոկարին հեռախոսով... դե, ցտեսութ՛յուն, փոքրիկս...

Աղջիկը տարավ Լուսին հարևան սենյակը, վերցրեց հեռախոսի փողն ու խոսեց.

— Այլո, 105, ընկեր Ոսոկար Իվե՞ջի:

Լուսյի դեմքը շառագունեց. հայրիկը խոսելու՞ է:

— Այո, այլո. ընկեր Իվեջի, ձեր վորդին՝ Լուսն այստեղ է: Բրանդեն գտել է նրան փողոցում, վողջ և առողջ է: Հանգիստ չեղե՛ք: Լավ: Ցտեսութ՛յուն:

Լուսն շատ կուզեր խոսել հայրիկի հետ, բայց չվստահացավ խնդրել: Նա չիմացավ, վոր մայրը վիրավորվել է բարրիկադների վրա:

— Ուտե՛լ ես ուզում, իմ խեղճ փոքրիկ,— ասաց, աղջիկը:

— Այո. վոչ. ուզում եմ մայրիկիս մոտ գնալ:

— Առ, կեր: Աղջիկը նրան տվեց մի մեծ կտոր հաց՝ չերշիկով:

— Ծնորհակալութ՛յուն. ի՞նչ եր ասում հայրիկը, իսկ մայրիկն այնտեղ չէ՛ր,— հարցրեց Լուսն ու վերցրեց հացը:

Աղջիկը Լուսին տարավ յերկար միջանցքով, հասան մի սենյակ, և աղջիկը նրան թողեց յերկար բեղերով մի մարդու մոտ: Մարդը Լուսին վերցրեց ու դուրս չեկավ, նստեցին մի նոր մեքենա ու սլացան քաղաքի փողոցներով:

Ելի մարգիկ, չերածշտութուն, կարմիր զրոշակներ-
թմբուկներն այնպես ուժեղ եյին թնդուամ, վոր Լուրջի ներ-
սը տակնուվրա չեր լինում:

Հանկարծ մեքենան շշաց ու կանգ առավ մի մեծ,
յերկաթե դարպասի առաջ, վորի վրա փայլում եր վոսկե
զինանշանը: Դռները բացվեցին: Ավտոն ներս մտավ ու
կանգ առավ սպիտակ պատշգամբի առաջ:

Դուրս չեկավ սև բաճկոնով մի մարդ: Շոֆերը նրան
մի տոսս տվեց ու Լուրջին թողեց նրամտա: Լուրն արեց,
վոր մեքենան հեռացավ: Բայց հենց վոր այս նոր տան
շեմքից ներս մտավ, ամեն ինչ փոխվեց. կարծես հեքիա-
թային մի նոր կյանք սկսվեց:

IV

Սենյակը զարգարված եր գորգերով, բազմոցներով
ու թանգազին ծաղկամաններով: Արմավենիների շուրջը
վխտում եյին մանուկները: Աղմուկ, ծիծաղ, ուրախու-
թյուն: Ակնոցավոր մի կին վերցրեց նրան, սկսեց հարցու-
փորձ անել. հետո նրան տարան լողարան, լողացրին ու
մաքուր սպիտակեղեն հագցրին:

Լուրջին տաք կաթ խմացրին՝ թարմ սպիտակ հացով,
ապա տարան վարդագույն պատերով մի սենյակ և մա-
քուր անկողին ցույց տվին: Նա շատ եր ուզում քնել,
բայց այնքան նորբան եր տեսել, զգացել, այնքան մտքեր
եյին պաշարել նրա գլուխը: Հանկարծ նա տեսավ իր ծա-
նոթին, փոքրիկ Վոյտային, վորը նույնպես նոր եր չեկել:
Նրանց վորբանոցը կովի ժամանակ հրդեհել եյին, վորից
հետո չերեխաներին փոխադրել եյին այս նոր շենքը:

— Մենք իրիկունը չեկանք. ամբողջ գիշերը մահ-
ճակալներ եյինք կրում. գիտես, այս տանտերը փախել ե.
այնքան շատ սենյակներ կան. ելի չերեխաներ կբերեն:

Յերկար խոսելուց հետո չերկուան ել քնեցին:

Առավոտյան չեկավ Լուրջի հայրը: Նա համբուրեց

փողքիկին, հարցուփորձ արեց. հարցրեց՝ զո՞նք ես այստեղից:

— Շատ լավ ես, միայն վճռտեղ եմ մայրիկը.— և Նրա աչքերը լցվեցին արցունքով:

— Մայրիկը, սիրելիս, հիվանդ ես. մինչև նրա առողջանալը դու աչտեղ կմնաս. միայն տես՝ լավ պահիրքե՞ց:

Հայրիկը շուտ հեռացավ, կովի մասին վոչ մի բան չպատմեց: Միայն միջանի որ հետո Լուսն պահապանից տեղեկացավ, վոր կռիվը շուտ եմ վերջացել, մերոնք հաղթել են, բայց պետք եմ զգուշ լինել, թե չեմ վերջը վատ կլինի:

Վերջապես մի առավոտ Լուսնի մայրիկը յեկավ. նա նիհարել եր, գունատ եր. ձեռքը կապած եր վզից: Յերջանիկ ծիծաղը դեմքին Լուսն պատմում եր իր նորկյանքի մասին. այնքան բան ունեւր ասելու...

Մի անգամ ել, յերբ հայրիկը յեկավ, Լուսն պատմեց, թե ինչպէս կամուրջի վրա փրկել եր «այն կնոջ» կյանքը, ստելով. վոր նրան ճանաչում եմ. խղճացել եր նրան:

Հոր դեմքը լրջացավ և մտախօհ նայեց վորդուն:

— Ի՞նչ խղճացիր նրան. Իսկ նա խղճում եր մեզ. Մեզ սպանում ելին, տանջում, վորովհետեւ չելինք ուզում ստրուկներ դառնալ: Ինչքան արցունք ու արյուն ենք թափել:

Այս խոսքերը շատ ազդեցին Լուսնի վրա. նա շարունակ մտածում եր՝ պետք եմ խղճար թե՛ վո՞չ...

V

Այն ժամանակ, յերբ Լուսն իր ընկերների հետ գոհ և ուրախ ապրում եր մանկատանը, իսկ հայրիկն իր կամուրջի ստ ընկերների հետ հեղափոխութեան հաղթանակն եր տոնում, հակահեղափոխականներն աշխատում ելին յերկաթե ողակով ողակել դեռևս մատաղ վեհաբնական խորհրդալին հանրապետությունը:

Գեներալ Սորտին, Ֆրանսիական զենեքալ Ֆրանշեզ-Եսպերե-լի ու սոցիալ-դեմոկրատ մենշեխիկներ ի սգնութեամբ իր սե զործն եր տեսնում. նրանք աշխատում եյին փրկել գլուխը կորցրած բուրժուազիալին:

Վենգրիայի հեռավոր քաղաքներից մեկում, կալվածատերերից մեկի տանը, լուսամուտները վարագույրով ծածկած, նրանք նստել էլին սեղանի շուրջն ու մտածում ելին, թե ինչպես խորսակեն բանվորների իշխանութունը:

Գեներալներն ու սպաներն մեջ կար մեկը, վոր կատաղած ու փրփրած խոսում եր. սա ամուսինն եր այն կնոջ, վորին խղճաց ու փրկեց փոքրիկ Լուոն:

— Ո, չմոռանաք, պարոններ, — ասում եր նախկին մինիստրը: — Թող ձեզ համար որենք լինի — վոչվորի չխղճալ, անխնա սպանել, վոչնչացնել բոլորին՝ և՛ կանանց, և՛ յերեխաներին, և՛ մալրերին:

— Ճիշտ եք ասում, ձերդ գերազանցութուն, — ասաց գեներալ Սորտին, վորի աջքերը փայլատակում եյին գիշատիչ կենդանու աչքերի նման:

— Ասացեք խնդրեմ. մի ինչ-վոր վոչնչութուն, անգրագետ, տգետ բանվոր իշխանութուն ե գրավել, իշխանութուն, վոր վայել ե ազնվարյուն արխատոկրատիային միայն:

Բոլորը համաձայնվեցին, մեկը մյուսից չեա չմնաց:

Տեղ ահա մի գիշեր, չերբ բուքն եր շառաշում, ուսուցչուհին վազվզում եր մեկ մահճակալից դեպի մյուսը, շտապեցնում եր յերեխաներին՝ շուտ հագնվել:

Անձրև եր ու քամի: Դռան մոտ կանգնած եր մի կառք, վորի մեջ նստած եր նույն կինը. այժմ նա հագել եր շքեղ ու թանգագին շորեր: Կինը գոռում եր կատաղած.

— Քշեցեք այդ շրջմուկներին. նրանք պղծեցին իմ տունը:

Լոլոն շմեց. ուրեմն ճիշտ վոր այս կինը բանվորների թշնամին եր. ուրեմն նա սխալե վարվել... նրա մտքերը ընդհատեցին ղինվորները, վորոնք շրջապատել եյին իր սիրելի ուսուցչուհուն և հրելով տանում եյին նրան: Իսկ նա անվրդով ժպտում եր ու հրաժեշտ տալիս յերեխաներին.

— Մի վախենաք, իմ թանգագին փոքրիկներ. յեղեք համարձակ: Գիտցեք, վոր վաղ թե ուշ բանվոր դասակարգն ե հաղթելու:

Մինիստրի կինը շուռ յեկավ ու կատաղած գոռաց.

— Սպանեցեք այդ զգվելի արարածին:

Զինվորներից մեկը հրացանի կոթով լսվեց ուսուցչուհուն:

Լոլոն վազեց դեպի ուսուցչուհին, սակայն ղինվորները նրան բռնեցին: Լոլոն սեղմեց բռունցքն ու դառնալով դեպի մինիստրի կինը՝ գոռաց.

— Չար, անպիտան, ինչո՞ւ ասացիր, վոր ծեծեն նրան:

Նրան հրեցին. վայր ընկավ. սակայն բարձրանալով՝ մի բար վերցրեց և շարտեց դեպի չար կինը: Զինվորները բռնեցին յերեխաներին:

Լոլոյի մարմնով սարսուռ անցավ. նա անիծում եր այն կնոջը, վորին փրկեց հեղափոխութւան որերին: Անձրևի տարափի տակ յերեխաներին տարան դեպի բանվորական թաղամաս: Ծեծը մոռացած՝ նրանք «Ինտերնացիոնալ» եյին յերգում:

* * *

Անձրև եր ու մառախուղ. բանտի մոայլ պատերի մեջ գնդակահարեցին Լոլոյի հորը:

Մինիստրը, վորի կնոջը փրկեց Լոլոն, ստորագրեց մահաճվիւոր: Նա չտատանվեց ու ստորագրեց՝ իբրև սովորական մի գրություն:

Այսպիսի «աշխատանքներից» հոգնած՝ նա տուն վերադարձավ, հուզված ու զայրացած կնոջ մոտ:

— Սոսկալի յե. լես իմ տունը չեմ ճանաչում. այստեղ անհնար ե ապրել: Տես՝ ինչ են արել այդ թշվառառականներն իմ ննջարանը: Յես չգիտեմ ինչ անեմ. պետք ե ամբողջ պաստառները փոխել, հատակները ներկել, վոր գրանց հետքը չմնա:

— Վոչինչ, ազամեյակս, հենց վոր միքիչ դործերս գրսավեց, կտեղափոխվենք. մի՞թե դժվար ե մի այսպիսի նոր տուն գնել կամ կառուցել: Սպասի՛ր՝ նախ և առաջ մի նրանց հոտը կտրենք, նրանց, վոր համարձակվեցին մեզ վրա ձեռք բարձրացնել:

— Ո, նրանց պետք ե անխնա վոչնչացնել, կախել, ջրախեղդ անել Դունայում,-- կատաղած վրա բերեց մի նիստրի կինը, վոր իր կյանքով պարտական եր միամիտ, փոքրիկ Լուլվին:





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

62

Մանուկներն ու հեղափոխությունը

1. Թե ինչպե՞ս մանուկները հեղափոխական են դառնում . 3

Պարբյաան Կոմունիզմ

- 2. Բարրիկադի վրա (բանաստ.) Վ. Հյուզոյ] 9
- 3. Կոմունիստի դավալը Ս. Ռոդով] 10
- 4. Փոքրիկ Գավրոշը Վ. Հյուզոյ] 16
- 5. Կարմիր հերոսուհին Արագի] 25
- 6. Վերջին բարրիկադը »] 27

«1905 թ.»

- 7. Մայրն ու վորդին (բանաստ.) 28
- 8. Պրեսնյան 1905 թ. Սերաֆիմովիչ] 29
- 9. 1905 թ. մայիսի 1-ը Ռուսա] 35
- 10. «Ընկերների» հետ 39

1905—1917

11. Մերկա Կասսել] 42

«Հոկտեմբերի» ճախույակից


- 12. Փետրվարյան հեղափոխություն 56
- 13. Փետրվարյան որերին Լ. Թարգյուլ] 60
- 14. Մագիչներում Ալազան] 67


Հոկտեմբերը

- 15. Բարրիկադները դավախները
- 16. Լավ որերի համար (բանաստ.) Գ. Մարյան] 84
- 17. Հոկտեմբերը հունվարին Պիոներ Խ. Բեյլյայել] 89
- 18. Հոկտեմբերի սերունդ Ա. Ժարով] 93
- 19. Առաջին պիոները Ա. Արսուկ] 96

Կապիտալիզմի լծի ակ

- 20. Շամախերի ընտանիքը (Գերմանիա) Դրոզդով] 105
- 21. Խզհայ (Վենգրիա) Վ. Վիկտորովայի] 118





ԳԻՆԸ 60 ԿՈՊ. 8¹/₂ մամուլ



Юные революционеры

(Сост. М. Дургарян)

Госиздат ССР· Армении
Эривань — 1930





[404.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038167

A $\frac{11}{38167}$

